ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԷԹԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ընդունվել է Կենսաէթիկայի կոմիտեի (DH-BIO)
16-րդ նիստի ընթացքում

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱԷԹԻԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Եվրոպայի խորհուրդ

Սույն աշխատությունում ներկայացված են հեղինակների կարծիքները, և պարտադիր չէ, որ դրանք արտահայտեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական դիրքորոշումը:

Սույն փաստաթղթերի ամբողջական կամ մասնակի վերարտադրման կամ թարգմանության վերաբերյալ բոլոր հարցումները պետք է հասցեագրվեն Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթին վերաբերող բոլոր այլ նամակները պետք է հասցեագրվեն Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Գենդերային հավասարության բաժնին (F-67075 Strasbourg Cedex կամ gender.equality@coe.int).

Կազմը և էջադրումը.

Լուսանկարները. Shutterstock

© Եվրոպայի խորհուրդ, սեպտեմբեր 2021 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

II. ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ԿԱՐԻՔԸ 9

Առողջապահության եվ կենսաբժշկության հարցերով հանրային բանավեճի կարիքը 10

Ինչու է այժմ առանձնակի կարեվոր հանրային բանավեճը 11

Հատուկ ուշադրության արժանի հարցեր 13

Զարգացումների արագություն 13

Տվյալների հավաքագրման հնարավորություններ 14

Բժշկական օգնության հասանելիության նոր պայմաններ 14

Ոչ հստակ կարգավորում 15

Նորարարությունների վտանգների անորոշությունը 16

Ազդեցությունը սոցիալական նորմերի վրա և արդարացիության սկզբունքը 16

III. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻՆ 18

Էթիկական պատճառներ 19

Լեգիտիմության ապահովում 20

Որո՞նք են նպատակները 21

Հանրության իրազեկում 21

Խնդրահարույց հարցերի բացահայտում 24

Հանրային կարծիքների մասին ապացույցների հավաքագրում 25

Մասնակցության ընդլայնում 26

Ո՞ւմ է անհրաժեշտ ներգրավել 27

Շահակիրներ 28

Ներկայացուցչական խմբեր 29

Տարբեր ձայների ընդգրկում 29

Ե՞րբ է հանրային բանավեճ նախաձեռնելու նպատակահարմար պահը 31

Վաղ փուլի հանրային բանավեճ 32

Քաղաքականության մշակմանն առնչվող հանրային բանավեճ 32

IV. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ 35

Արդյունավետություն դիզայնի միջոցով 36

Ռեսուրսների հատկացում 37

Իմաստալից մասնակցություն և համատեղ նախագծում 40

Հասանելիություն և ներառում 41

Վերահսկողության մեխանիզմներ 44

Արդյունավետություն վարման կարգի միջոցով 44

Արդարացիություն 45

Անձնական կյանքի գաղտնիություն 45

Շահերի թափանցիկություն 46

Անաչառություն 47

V. ԻՄԱՍՏԱԼԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ 49

Հանձնառություն 50

Հաշվետվողականություն 50

Գնահատում 51

Շարունակական հանրային բանավեճ 52

Կենսաէթիկայի մասին հանրային բանավեճի ինստիտուցիոնալացում 54

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 59

ԿԵՆՍԱԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ (DH-BIO) 59

Կենսաբժշկության ոլորտում հանրային բանավեճի ուղեցույցին առնչվող՝ հանրային բանավեճի օրինակներ 59

Բելառուս՝ բժիշկների եվ պացիենտների իրավունքները եվ պարտականություններն արդի առողջապահական համակարգերում (իրավական և էթիկական) (2018) 61

Կիպրոս՝ իրազեկման շաբաթ (2018թ.) 65

Դանիա՝ առողջապահության համակարգի ապագայի վերաբերյալ բանավեճ Դանիայում (2008թ.) 68

Ֆինլանդիա՝ քաղաքացիների նախաձեռնությունը խորհրդարանին (2012թ.) 73

Ֆրանսիա՝ հանրային բանավեճ կենսաէթիկայի մասին օրենքի շուրջ (2018թ.) 77

Գերմանիա՝ գենոմի խմբագրման մասին հանրային քննարկում (2019թ.) 81

Իռլանդիա՝ հանրային բանավեճ հղիության արհեստական ընդհատման եվ սահմանադրության ութերորդ փոփոխությունն ուժը կործրած ճանաչելու մասին (2016թ.) 85

Լեհաստան՝ քաղաքացիներին տեղեկացնելու եվ նրանց հետ երկխոսելու սահմանադրական շաբաթ (2018թ.) 87

Պորտուգալիա՝ կյանքի վերջի մասին բանավեճ (2017թ.) 90

Ռուսաստանի Դաշնություն՝ հանրային բանավեճը եվ դրա ազդեցությունը մարդու օրգանների եվ հյուսվածքների փոխպատվաստման մասին օրենքի վրա (2016թ.) 93

Միացյալ Թագավորություն՝ ուղեղի մասին գիտությունների, կախվածության եվ թմրամիջոցների մասին հանրային քննարկում (2007թ.) 97

ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 101

ԸՆՏՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 104

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կենսաբժշկության ոլորտի զարգացումները խոստանում են զգալի օգուտներ անհատներին, հասարակությանը և ապագա սերունդներին: Այս օգուտներին հետամուտ լինելը, սակայն, հաճախ կապված է էթիկական և սոցիալական լուրջ մարտահրավերների հետ: Այն կարող է հիմնվել որոշումների վրա, որոնք կայացվում են գիտական անորոշության և հակասող արժեքների համատեքստում, սակայն կարող են ունենալ հեռու գնացող հետևանքներ: Կենսաբժշկության բազմաթիվ զարգացումներ ունեն սոցիալական և տնտեսական միջավայրում խորքային փոփոխություններ առաջացնելու ներուժ: Դրանք կարող են հարցականի տակ դնել և հնարավոր է վերաձևակերպել այն նորմերը, որոնցով, սովորաբար, առաջնորդվում է կյանքը: Այս պատճառով էլ կենսաբժշկության զարգացումների ուղղությունները և վտանգների ու հնարավոր օգուտների բաշխման եղանակն առաջացնում են հանրության մեծ հետաքրքրությունը:

Այս ոլորտում հանրային բանավեճը խրախուսելու հարցում անդամ-պետություններին աջակցելու նպատակով Եվրոպայի խորհրդի Կենսաէթիկայի կոմիտեն (DH-BIO) մշակել է այս ուղեցույցն: Նպատակն է՝ ուղղություն տալ

հանրային բանավեճը նախաձեռնելու կամ դրան աջակցելու համար պատասխանատուներին և հանրային քաղաքականության միջոցով դրան արձագանքողներին: Դրանց թվում են անդամ-պետություններում որոշումներ կայացնողները, պետական պաշտոնատար անձինք և պետական մարմինները, էթիկայի ազգային կոմիտեները, կրթական և գիտական հաստատությունները և համապատասխան այլ կազմակերպությունները:

Հանրային բանավեճի մշակույթը խրախուսելուց բացի՝ ուղեցույցը բացատրում է հանրային բանավեճի կարևորությունը կենսաբժշկության ոլորտի կառավարման հարցում, ինչպես նաև օգնում է թեմային և հանագամանքներին համապատասխան նույնականացնել պատշաճ և արդյունավետ մոտեցումները: Ուղեցույցը հասնում է դրան հիմնականում խրախուսելով հանրային բանավեճի պատճառների, նպատակների, մասնակիցների և ձևաչափերի ավելի խորքային վերլուծություն և ներկայացնելով որոշ առաջարկություններ և օրինակներ: Այն նախատեսված չէ որպես հանրային բանավեճի ձեռնարկ, այլ հանրային բանավեճին մոտենալու ուղեցույց է, որից կարող են օգտվել մասնակիցները և, վերջին հաշվով, ամբողջ հասարակությունը:

Ուղեցույցում «հանրային բանավեճ» ընդհանուր հասկացությունն օգտագործված է հանրային տիրույթում դիսկուրսիվ մտքերի փոխանակումը նկարագրելու համար, որի միջոցով անհատները և խմբերը կարող են սահմանել, բացահայտել և համադրել իրենց տարբեր շահերն այն խնդիրների շուրջ, որոնք հնարավոր է ազդեցություն ունենան նրանցից յուրաքանչյուրի վրա: «Բանավեճն» ընկալվում է որպես բաց գործընթաց և չի ենթադրում որևէ սպասումներ, որ այն կտա բոլորի համար ընդունելի արդյունք:

Գոյություն ունեն տարբեր գործիքներ և մոտեցումներ, որոնցից շատերը մշակվել են հասարակագիտական հետազոտությունների լույսի ներքո կամ գործնական քաղաքականություն մշակելու ընթացքում: Դրանցից յուրաքանչյուրն ունի առավելություններ և սահմանափակումներ, որոնք քննարկված են մեծաքանակ գիտական գրականության մեջ, որի ծավալներն աճում են: Դրանցից շատերը ներկայացված են սույն ուղեցույցում օրինակների միջոցով և լրացուցիչ մանրամասները բացված են փաստաթղթի վերջում նշված ընտրված աղբյուրներում:

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիայի (Օվիեդոյի կոնվենցիա) նպատակն է պաշտպանել մարդու

իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը կենսաբժշկական գիտության և բժշկական պրակտիկայի ոլորտներում: Կոնվենցիայի 28-րդ հոդվածը պարտավորեցնում է անդամ պետություններին հասարակության անդամներին ապահովել կենսաբժշկության ոլորտում կարծիք հայտնելու հնարավորություն: Դրանում ասված է՝

> «Սույն Կոնվենցիայի կողմերը հետևում են, որ կենսաբանության և բժշկության նվաճումների հետ կապված հիմնարար հարցերը լինեն հանրային լայն քննարկման առարկա, որը, մասնավորապես, հաշվի է առնում համապատասխան բժշկական, սոցիալական, տնտեսական, էթիկական և իրավական հետևանքները, իսկ դրանց հնարավոր կիրառումը լինի պատշաճ խորհրդակցության առարկա:»

Օվիեդոյի կոնվենցիայի 28-րդ հոդվածից ելնելով՝ հանրային բանավեճը խրախուսելու նպատակներն են՝

- բարձրացնել հանրության իրազեկվածությունը, մասնավորապես՝ խրախուսելով տեղեկատվության, տեսակետերի և կարծիքների շրջանառությունը,
- հանրային տիրույթում խթանել տարբեր դերակատարների, խմբերի և անհատների միջև երկխոսությունը, ընդգրկելով նաև հնարավոր խոցելի կամ դժվարին վիճակներում գտնվողներին,
- խորհրդակցել հասարակության, այդ թվում՝ թիրախային խմբերի հետ և այդպիսով նկատի առնել նրանց շահերն ու պատկերացումները՝ տեղեկացված քաղաքական որոշումներ կայացնելու համար:

II. ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ԿԱՐԻՔԸ

Կենսաբժշկության ոլորտի զարգացումները կարող են ազդեցություն ունենալ բոլորի վրա, իսկ դրանց հետևանքները կարող են խորքային լինել՝ անուղղակիորեն առաջացնելով հանրային հետքրքրություն ներկայացնող հարցեր: Կառավարման համակարգի զարգացման համար պատշաճ չափանիշներ և ուղենիշ սահմանելու ընթացքում հանրային բանավեճը կարող է լինել տեղեկատվության և տեսակետերի կարևոր աղբյուր: Հանրային բանավեճը կարող է շահավետ կերպով ընդլայնել անորոշ հետևանքներ ունեցող նոր զարգացումները գնահատելու հիմքը:

Նման մասնակցության արդյունքում ձևավորվող նորմերը և ընդհանուր սկզբունքները նաև հանրային բարոյականության աղբյուր են: Հիմնավոր նորմերն ավելի են հակված բարձրացնել հանրության վստահությունը կառավարման համակարգի հանդեպ: Որոշումների կայացման ավելի ամուր հիմքեր ձևավորելը՝ միաժամանակ օգնելով նույնականացնել հանրային քաղաքականության հնարավոր արձագանքը պահանջող մտահոգիչ խնդիրները՝ հանրային բանավեճի առանցքային գործառույթներից է:

Հանրային բանավեճը կարող է ամրապնդել քաղաքացիները դերն իրենց հասարակության կառավարման գործընթացում: Հետևաբար, կարող ենք ասել, որ հանրային բանավեճը՝ հանրային է, հանրության հետ է և հանուն հանրության է:

- Հանրային բանավեճը կարևոր է կառավարման և քաղաքականության մշակման ոլորտներում հասարակության վստահության համար:
- Հանրային բանավեճը բարձրացնում է լեգիտիմությունը և ընդլայնում աջակցությունը բարդ էթիկական որոշումներ կայացման ընթացքում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ԿԱՐԻՔԸ

Կենսաբժշկության ոլորտի զարգացումների հատկանիշները, մարդկանց կյանքերի և հասարակական լայն համատեքստի վրա դրանց ազդեցության ճանապարհներն առանձնացնում են դրանք տեխնիկական կամ կազմակերպական փոփոխության բազմաթիվ այլ ձևերից: Դրանք առանձահատուկ հետևանքներ ունեն մարդու իրավունքների վրա, քանի որ մարդկանց շրջանում դրանք հաճախ առաջ են բերում բարեվարքության, արժանապատվության, ինքնավարության, անձնական տվյալների գաղտնիության, արդարության, հավասարության և խտրականության բացառման մտահոգություններ:

Կենսաբժշկության ոլորտի զարգացումները հաճախ պահանջում են երկարաժամկետ ռազմավարական հանձնառություններ, որոնք առաջացնում են «լավ կյանքի» կոլեկտիվ արժեքների, նպատակների և տեսլականների մասին հարցեր, որոնց շարքում են նաև հասարակության ներսում այդ օգուտներն ինչպես բաշխելու հարցերը: Կառավարումը, որն առաջնորդվում է միայն քաղաքական գաղափարախոսությամբ կամ հաշվի է առնում միայն սահմանափակ տեխնիկական հարցեր, օրինակ՝ բուժման հնարավոր օգուտներն ու վնասները, կամ արձագանքում է միայն գոյություն ունեցող նախապատվություններին, կարող է համարժեք չպատասխանել ավելի լայն ու հեռահար հարցերին:

Նկատի առնելով անհատների կյանքի վրա հնարավոր ազդեցությունը՝ կարևոր է, որ հասարակության անդամները տեղեկացված լինեն կենսաբժշկության զարգացումների մասին և ճևակերպեն, հայտնեն և քննության առնեն սեփական կարծիքները: Դա կարևոր է, քանի որ հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցել հասարակության համար քաղաքականությունների և ռազմավարությունների մշակմանը և ամրապնդել սեփական առողջության և բարօրության վերաբերյալ գիտակցված որոշումներ կայացնելու կարողությունը: Քաղաքականություն

մշակողների համար հավասարապես կարևոր է իրազեկ լինել հասարակության մեջ առկա տարբեր կարծիքների և զանազան արժեքների մասին՝ դրանց արձագանքելու համար:

- Հանրային բանավեճը նպաստում է կենսաբազմազանության ոլորտի զարգացումների և տեխնոլոգիաների պատասխանատու ներդմանն առողջապահության ոլորտում:
- Անհատների և հասարակության ապագայի համար երկարաժամկետ հետևանքները պահանջում են ժողովրդավարական հիմքով կայացված որոշումներ, որոնք հիմնված են ընդհանուր արժեքների վրա և հարգանք են դրսևորում մարդու իրավունքների հանդեպ:

ԻՆՉՈՒ Է ԱՅԺՄ ԱՌԱՆՁՆԱԿԻ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԸ

Սոցիալական հարաբերությունների կառուցվածքը և մարդկանց միջև տեղեկություններ փոխանակելու, կոլեկտիվ կարծիքներ ձևավորելու և հանրային որոշումներ վրա ազդեցություն թողնելու եղանակը զգալի փոփոխություն է ապրել քսանմեկերրորդ դարում, ինչը պայմանավորված է նաև տեղեկատվական նոր տեխնոլոգիաներով, որոնք առաջացրեցին սոցիալական շփման նոր ձևեր:

Որոշ դեպքերում չկան վտանգը, ազդեցությունը և սոցիալական հետևանքները հասցեագրող նորմատիվային կարգավորումներ կամ դրանք հետ են մնում տեխնիկական զարգացումներից: Բազմաթիվ տեխնոլոգիաներ շարունակական զարգացման փուլում են, որի արդյունքում ի հայտ են գալիս կիրառման ձևեր, որոնք հնարավոր չէր նախատեսել: Դրանք դժվար է սահմանել և, հետևաբար, դուրս են մնում գործող նորմատիվային կարգավորումների շրջանակից:

Կենսաբժշկության ոլորտի զարգացումները, հատկապես նոր տեխնոլոգիաները, հաճախ բարդ են, դրանք ի հայտ են գալիս սահմանված սոցիալական և մշակութային հանգամանքներում, մարմնավորում են ոչ միայն հնարավորություններ, այլև անորոշություններ և կասկածներ: Շատ հաճախ օգուտները սկզբում ավելի ակներև են, քան վտանգները և կողմնակի ազդեցությունները, որոնք միշտ չէ, որ հնարավոր է կանխատեսել: Այս վտանգներն ու կողմնակի ազդեցությունները հաճախ երևան են գալիս միայն պրակտիկ փորձի հետ: Երբ հետևանքները դառնում են

ավելի ակներև՝ երբեմն շատ ուշ է լինում փոխել զարգացումների ընթացքը:

Պատասխանատու մոտեցումները կենսաբժշկական նորարարությանը պահանջում են պարտավորություն կանխատեսել զարգացումները, որոնք կարող են խորքային ազդեցություն ունենալ հանրության ներկայացուցիչների կյանքերի և նրանց հասարակությունների ապրելակերպի վրա, տեղեկացնել այդ մասին և ներգրավել հասարակությանը ցանկալի արդյունքով որոշումների կայացմանն ուղղորդելու համար (օրինակ՝ ինչպես և ինչ հանգամանքներում օգտագործել նոր տեխնոլոգիա): Հանրային բանավեճը կարող է օգնել բացահայտել կենսաբշժկության զարգացումներին տրվող տարբեր արձագանքների հիմքում ընկած արժեքները և սկզբունքները, ինչը հնարավորություն կտա քաղաքականություն մշակողներին ավելի լավ պատրաստված լինել հասցեագրել անսպասելի հետևանքները՝ դրանք ի հայտ գալու դեպքում:

Չնայած ակնհայտ օգուտների՝ թվային տեղեկատվական տեխնոլոգիաների զանգվածային հասանելիության դարաշրջանը, դժբախտաբար, խթանեց հասարակության բաժանումը: Այն ստեղծեց ապատեղեկատվության տարածման հնարավորություն, բաժանեց հասարակությունը և խթանեց ինքնանպատակ քննարկումներ միատարր խմբերի միջավայրում, խրախուսեց քննադատության հանդեպ անհանդուրժողականություն և արդարացրեց ապացույցի ժխտումը հօգուտ կարծիքի: Հանրային բանավեճի խթանումը, ուր իրար են հակադրվում իրարամերժ մտքեր, որը համադրվում է ապացուցողական գործիքների հետ՝ նման զարգացումների կարևոր հակակշիռ է:

Առանձնակի կարևոր է, որ շահերը չգնահատվեն միայն ընդհանուր կարծիքի հիման վրա, որը ձևավորվում է միջավայրերում, ուր վիճարկման կամ հաշվետվողականության հնարավորությունը չնչին է բացակայում է, օրինակ՝ սոցիալական ցանցերում: Ներառական բանավեճի բացակայության պայմաններում առաջանում է խոցելի խմբերի ձայնը չլսելու իրական վտանգ, որը կարող է անգամ հասնել մարդու իրավունքների համակարգով իրենց հասանելի պաշտպանությունից օգտվելու անհնարինության աստիճանի:

- Կենսաբժշկության ոլորտում կարող են լինել տեխնիկական արագ զարգացումներ, որոնք մարտահրավերներ կառաջացնեն օրենսդիրների և բուժմասնագետների համար:
- Սոցիալական շփումների նոր հարթակները կարող են մեկուսի

համայնքներում ձևավորել բևեռացված բանավեճ այն հարցերի շուրջ, որոնք կարող են պահանջել ավելի լայն և ներառական քննարկում:

- Առանց հանրային բանավեճը խթանելու ջանքերի՝ մարգինալացված և խոցելի խմբերի ձայները կարող են խլացվել կամ անտեսվել:

Գերմանիա, 2019թ. Գենային խմբագրման արագ զարգացող CRISPR- Cas9 տեխնոլոգիան սահմանվել է որպես հանրային բանավեճի կենսաէթիկական հիմնահարց, որը խիստ ակտուալ է իրազեկումը բարձրացնելու և վտանգներն ու օգուտները վերլուծելու համար: Գերմանիան այս խնդրի հանրային լայն քննարկում կազմակերպած երկրների շարքում է, տես՝ 2019 թվականին Genomchirurgie im gesellschaftlichen Diskurs նախաձեռնության վերաբերյալ գերմանական փորձը:

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Կենսաբժշկության ոլորտի որոշ զարգացումներ ունեն մարդու իրավունքների համար հետևանքներ, որոնք առաջ են բերում որոշակի էթիկական հիմնահարցեր և դարձնում դրանք լուրջ մարտահրավերներ:

Հանրային բանավեճը կարող է առանձնակի կարևորություն ունենալ կենսաբժշկության այն զարգացումների շուրջ, որոնք խորքային ազդեցություն ունեն հասարակության և անհատների վրա, զարգացումներ, որոնք դուրս են մնում նորմատիվային կարգավորումների շրջանակներից, և զարգացումներ, որոնք առաջ են բերում անհայտ վտանգներ կամ ունեն անկանխատեսելի ազդեցություն հասարակության վրա կամ ոչ համաչափ ազդեցություն որոշակի խմբերի վրա:

Զարգացումների արագություն

Զարգացումների արագությունը կարող է դառնալ իրավական բացերի պատճառ: Դրանք կարող են առաջանալ այն դժվարությունների հետևանքով, որոնք օրենսդիրներն ունեն ազդեցությունները գնահատելու և արագ փոփոխվող տեխնոլոգիաների ոլորտում նոր կիրառումների համար նոր նորմեր նախատեսելու հարցերում: Ծահագրգիռ բոլոր կողմերի համար սա կարող է ստեղծել անորոշություն:

Նոր զարգացումներ կիրառելու ընթացքում, եթե չկա երկարաժամկետ փորձ և որոշակիություն արդյունքի կամ ազդեցության հարցերում՝ անհրաժեշտ է լայն էթիկական քննարկում սոցիալապես ընդունելի սահմաններում դրանց կիրառումը վերահսկելու երկարաժամկետ ռազմավարություն մշակելու համար:

- Հանրային բանավեճը կարող է լինել համապատասխան չափանիշներ և կառավարման համակարգի զարգացման ուղենիշ սահմանելու կարևոր ռեսուրս:

Տվյալների հավաքագրման հնարավորություններ

Թվային տեխնոլոգիաների կիրառումը ստեղծում է տվյալների հավաքագրման հնարավորություններ: Կենսաբժշկության նոր տեխնոլոգիաների հետ միասին դրանք կարող են տարբեր մարտահրավերն էր առաջացնել անհատների անձնական տվյալների պաշտպանության և ինքնավարության համար: Հասարակ անհատի համար դժվար է հասկանալ իրեն առնչվող տվյալների բարդ հոսքերը, կայացնել գիտակցված որոշումներ ամբողջ տեղեկատվության օգտագործման կամ տարածման եղանակի մասին և, հետևաբար, օգտվել ինքնավարությունից:

Կենսաբժշկության նորարարություններն աստիճանաբար ավելի ու ավելի են հիմնվում տվյալների խոշոր և մանրամասն շտեմարանների վրա՝ հաճախ տարբեր աղբյուրներից: Տարատեսակ աղբյուրներից վերցված մեծ ծավալի տվյալների համադրումը կարող է հնարավորություն տալ կրկին նույնականացնել շահագրգիռ անձին:

- Տվյալների մեծ ծավալը և բազմազանությունը, տվյալների հավաքագրման հնարավորությունները և կենսաբժշկության բազմաթիվ տեխնոլոգիաները պահանջում են տեղեկատվության գաղտնիության պատշաճ պաշտպանություն, առաջ բերում հանրությանը տեղեկացնելու անհրաժեշտություն և հանրային բանավեճի կարիք այն վտանգների և հնարավորությունների շուրջ, որոնք այս համատեքստում առաջացնում են արդի տեխնոլոգիաները:

Բժշկական օգնության հասանելիության նոր պայմաններ

Թեև կենսաբժշկության նորարարությունները կարող են նվազեցնել հիվանդության ռիսկը կամ թեթևացնել ախտանիշները՝ դրանք կարող են նաև պարտադրել մարդկանց ընդունել բժշկական օգնությունից օգտվելու նոր պայմաններ: Օրինակ, ապագայում գենետիկական թեստավորումը կարող է պահանջել ստանդարտացված կամ ամբողջական

գենոմային տվյալների հավաքածուների գեներացում, իսկ որոշ ծառայություններից օգտվելու համար պահանջվի նաև բոլոր տվյալների պահպանումը: Անձի գենոմային տվյալների պահպանումը ենթադրում է գիտելիքի պահպանում, որը գիտական ընկալումը խորանալուն զուգահեռ կարող է տեղեկություններ տրամադրել հիվանդության կամ նույնիսկ որոշ վարքային դրսևորումների հանդեպ նախահակվածության մասին: Նման տվյալներ թաքցնելը կամ դրանց գեներացումն արգելելը կարող է հանգեցնել որոշակի ծառայություններից օգտվելու արգելքի, ինչը կարող է զրկել անհատին հասանելի լավագույն բուժօգնությունից օգտվելու հնարավորությունից:

- Բժշկության մեջ նոր տեխնոլոգիա ներդնելու հետևանքները կարող են ստեղել բուժօգնությունից օգտվելու նոր պայմաններ: Հետևաբար, արդար և պատշաճ չափանիշներ ձևավորելու համար անհրաժեշտ է լայն հանրային բանավեճ:

Ոչ հստակ կարգավորում

Կենսաբժշկական զարգացումները կարող են լղոզել և հարցականի տակ դնել նորմատիվային սահմանները: Դրանք կարող են արագ անցում կատարել կիրառման մի ոլորտից մյուսը, որտեղ կարող են կիրառվել այլ կարգավորումներ: Դրանք կարող են առաջացնել նաև նորմատիվային կարգավորումների կիրառման անորոշություններ, օրինակ՝ կոնկրետ կիրառման բժշկական կամ ոչ բժշկական լինելու, կամ տվյալ օգտագործման թերապևտիկ կամ ոչ թերապևտիկ լրացում լինելու վերաբերյալ:

Օրինակ, շուկայում հայտնվում են ոչ բժշկական նշանակության սարքեր, որոնք չեն դիտվում որպես բժշկական սարքեր և կարող են դուրս մնալ դրանց կարգավորման գործող նորմատիվային դաշտից: Ոչ միանշանակ արդյունքներ տվող տեխնոլոգիայի օրինակ կարող է լինել անմիջապես սպառողի գենետիկական թեստավորումը, որի դեպքում բժշկական նշանակություն ունեցող գենետիկական նախահակվածության մասին տվյալները ստացվում են բուժօգնության համատեքստից դուրս և առանց պատշաճ խորհրդատվության:

- Երբ նոր տեխնոլոգիաները գտնում են կիրառման նոր բնագավառներ՝ հանրային բանավեճը կարող է օգնել իրազեկել դրա առաջ բերած անորոշությունների մասին և գտնել օգտագործման համապատասխան շրջանակներ:

Նորարարությունների վտանգների անորոշությունը

Կենսաբժշկական նորարարությունները կարող են առաջացնել կանխատեսելի և անկանխատեսելի վտանգներ: Կենսաբժշկության ոլորտի որոշ զարգացումներ կարող են ունենալ անորոշության էական հատվածներ, երբ վտանգների բնույթը հնարավոր չէ հստակ նույնականացնել կամ չկա հստակ պատկերացում ինչպես նկարագրել կամ գնահատել այդ վտանգները: Նման իրավիճակներում կենսաբժշկական տեխնոլոգիաների գնահատման ընդլայնումը կարող է լինել պատշաճ արձագանք: Այս դեպքում կարելի է նկատի առնել տարբեր մոտեցումներ, գնահատել այլընտրանքները և դիտարկել խնդիրները, օրինակ՝ անշրջելիությունը:

- Հանրային բանավեճը կարող է օգնել երևան հանել տարբեր ազդեցությունները և չնախատեսված հետևանքները, բացահայտել զանազան մարդկանց կողմից դրանց արժևորման տարբերությունները:

Ազդեցությունը սոցիալական նորմերի վրա և արդարացիության սկզբունքը

Կենսաբժշկական զարգացումների կիրառումը կարող է խորքային փոփոխություններ կատարել սոցիալական նորմերում: Բժշկական հաստատություններում տեխնոլոգիաների կիրառման ընթացքում նման ազդեցությունները կարող են անսպասելի լինել: Տարբեր խմբերի համար բուժօգնության հասանելիության տեսանկյունից այս զարգացումները կարող են նաև ունենալ այլ հետևանքներ:

Օրինակ, որոշ երկրներում նախածննդյան ախտորոշումը որպես ստանդարտ հետազոտություն և հղիության ընդհատման պարզեցված մեթոդները միասին հանգեցրել են Դաունի համախտանիշով երեխաների ծնունդների էական կրճատման: Տեխնոլոգիաների աճող հասանելիությունը հնարավոր է ունենա զգալի ազդեցություն հղի կանանց սպասումների վրա և մեծացնի Դաունի համախտանիշ ունեցողների մարգինալացման վտանգը: Նորարարության հնարավորությունների հասանելիության հարցում անարդարությունը նույնպես կարող է սրել և խորացնել հիմքում ընկած սոցիալական և գլոբալ անհավասարությունները և կործանարար ազդեցություն ունենալ անհատների և հասարակությունների վրա:

- Գոյություն ունի հիմնավոր պատճառ հանրությանը կենսաբժշկական այն զարգացումների վերաբերյալ բանավեճում ներգրավե-

լու համար, որոնք հանգեցնում են սոցիալական նորմերի հնարավոր փոփոխության և առաջացնում անհավասարությունները և որոշակի խմբերի մարգինալացումը խորացնելու վտանգներ:

▶ Հանրային բանավեճը կարող է բացահայտել փոքրամասնություններին պաշտպանելու պատշաճ և ընդունելի մեխանիզմներ և երաշխավորել կենսաբժշկության ոլորտում զարգացումների հավասար հասանելիություն:

III. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻՆ

Հանրային բանավեճ նախաձեռնելուց առաջ մի շարք հարցերի շուրջ մտորելը կարող է օգնել նույնականացնել մոտեցումը, որը լավագույնս կհամապատասխանի բոլոր մասնակիցների շահերին: Հանրային բանավեճ նախաձեռնելու ցանկություն ունեցող քաղաքականություն մշակողների և այլ անձանց համար ամենահիմնարար մարտահրավերը, հավանաբար, այն է, որ հասկանան այն մոտեցումները, որոնք կլինեն ամենապատշաճն ու արդյունավետը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Այս բաժնում ներկայացվում են այն չորս հիմնական նկատառումները, որոնք կօգնեն հանրային բանավեճ նախապատրաստողներին խորհել իրենց հանգամանքներին առավել նպատակահարմար գործողությունների և մոտեցումների մասին: Հաճախ ավելի նպատակահարմար է միաժամանակ օգտագործել մի քանի մեթոդներ և իրականացնել մեկից ավելի գործողություն: Առավել նպատակահարմար մոտեցումը միշտ չէ, որ ծառայում է բոլոր կողմերի նպատակներին, քանի որ տարբեր մասնակիցներ ունեն բանավեճին մասնակցելու իրենց տարբեր պատճառները և կարող են ակնկալել տարբեր արդյունքներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հանրային բանավեճ նախաձեռնողներն առաջին հերթին պետք է պատասխանեն դա անելու պատճառների մասին հարցին: Կազմակերպիչները և մասնակիցները շահում են, եթե հստակ սահմանված են գործընթացի հիմքում ընկած պատճառները:

Ցանկացած նախաձեռնություն անխուսափելիորեն ունի մեկից ավելի պատճառ: Պատճառների բնույթը և հավասարակշռությունը հասկանալը կարող է օգնել նույնականացնել առավել պատշաճ մոտեցումները: Քանի որ հանրային բանավեճի միջոցառումները չպետք է ունենան զուտ ձևական բնույթ դրանք պետք է միշտ կազմակերպել նախապես լավ մտածված տարբերակով, հակառակ դեպքում դրանք չեն ծառայի մասնակիցների շահերին և կարող են նույնիսկ հանգեցնել հանրային անվստահության:

Էթիկական պատճառներ

Հանրային բանավեճ նախաձեռնելու պատճառներից մեկը կարող է լինել կենսաբժշկության զարգացումների կառավարման հարցերին դրանց հավանական ազդակիրներին ներգրավելու բարոյական հանձնառությունը, որը կարևորում է բոլոր ձայների լսված լինելու իրավունքը: Կենսաբժշկության զարգացումների դեպքում հնարավոր ազդակիրների շրջանակն ընդգրկում է ամբողջ հասարակությունը:

Ցանկացած զարգացում, որն առնչվում է մարդու իրավունքներին կամ մարտահրավեր նետում ընդունված սոցիալական նորմերին, այն թեման է, հավանաբար, որի շուրջ հանրային բանավեճը ոչ միայն ցանկալի է, այլև բարոյականության և, որոշ երկրներում, օրենքի պահանջ է:

- Պետք է նկատի առնել արդյո՞ք տվյալ զարգազումը հետևանքներ է առաջացնում մարդու իրավունքների համար:

Գերմանիա, 2019թ. Genomchirurgie im gesellschaftlichen Diskurs հանրային բանավեճը (գենոմի խմբագրման մասին) էթիկական պատճառներով նախաձեռնած մի շարք գործողությունների լավ օրինակ է:

Ավելի լավ տեղեկացված որոշումների կայացում

Լավ որոշումների կայացումը պահանջում է դիտարկել տեսլականի և արժեքների ընդհանրական հարցեր, որոնց տեխնիկական փորձագետները միշտ չէ, որ կարող են պատասխանել: Մասնագիտական խորհուրդը հաճախ ունի սահմանափակ շրջանակ և նոր մշակումների կիրառման հարցերը ոչ այնքան տեխնիկական են, որքան բարոյական և քաղաքական:

Տեխնիկական հարցերը կարող են վերաբերել նոր տեխնոլոգիայի կիրառման անվտանգ, օգտակար և արդյունավետ լինելուն, մինչդեռ նախաձեռնողը կարող է ցանկանալ լրացուցիչ բացահայտել ինչ-որ վտանգի սոցիալապես կամ բարոյապես ընդունելի լինելը և ով է լիազորված դա որոշել:

- Օգտակար է առաջադրել հարցեր, որոնք կարող են կառուցողական ձևով հարցականի տակ դնել մասնագիտական ենթադրությունները: Պատասխան պահանջող հարցերի ձևակերպումը կարող է բացահայտել կամ թաքցնել հիմքում ընկած արժեքները:
- Հանրության հետ խորհրդակցելը կարող է ապահովել «զանգվածային» փորձագիտական կարծիք կամ բացահայտել մտահոգություններ, որոնք կարող են բացակայել հիմնական մտքերում:

Լեգիտիմության ապահովում

Մեկ այլ պատճառ, որը ստիպում է քաղաքականություն մշակողներին նախաձեռնել հանրային բանավեճ, դա նախկինում չքննարկված նոր կամ արտասովոր խնդիրներ առաջացնող մշակման ներդրման հետ կապված որոշումներին լեգիտիմություն հաղորդելու ձգտումն է: Դա կարող է տեղի ունենալ ավելի ուշ փուլում, երբ եղել է տեխնոլոգիայի արագ ներխուժում կամ ճնշում է գործադրվում նոր տեխնոլոգիան այլ պետությունից փոխանցելու ուղղությամբ:

Այն դեպքերում, երբ քաղաքականություն մշակողներն առաջարկում են ներդնել նոր հակասական մշակում՝ հանրային բանավեճի միջոցառումների նախաձեռնումը կարող է օգնել իրազեկել հանրությանը, գնահատել դրա ընդունելիությունը և, հավուր պատշաճի, հարթել իրականացման ճանապարհը:

- Հարկ է հաշվի առնել հանրությանը՝ կենսաբժշկական նոր մշակումներ ներդնելու առաջարկի մասին տեղեկացնելու անհրաժեշտությունը և պարզել հանրային իրազեկման ու ընդունելիու-

թյան այն մակարդակը, որը երաշխիք է տալիս, որ իրականացման որոշումները վայելում են հասարակական լայն աջակցություն:

Ֆրանսիա, 2018թ. Օրենքը պահանջում է կազմակերպել կանոնավոր հանրային բանավեճեր, երբ փոփոխություն է կատարվում կենսաէթիկայի մասին օրենսդրության մեջ՝ բայց ոչ պակաս, քան հինգ տարին մեկ: Վերջին անգամ նման դեպք եղել է 2018 թվականին՝ "États Generaux" կոչված լայնածավալ հանրային քննարկման ընթացքում:

Ռուսաստանի Դաշնություն, 2016 թ. Ռուսաստանի Դաշնությունն ունի պետական մարմինների մակարդակով օրենսդրական նախագծերի հանրային քննարկումները տարբեր հարթակներում կազմակերպելու երկարամյա պրակտիկա: Հանրության կարծիքները հավաքվում են նաև ինտերնետ պորտալի միջոցով: Մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման մասին օրենքի փոփոխությունները հանրային քննարկման են դրվել 2016 թվականին և շարունակվում են մինչ այսօր:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հանրային բանավեճ նախաձեռնելու պատճառները պարզելուց հետո հարցերի երկրորդ խումբը վերաբերվում է հանրային բանավեճի կոնկրետ նպատակներին՝ որո՞նք են սպասվող արդյունքները և ի՞նչ օգուտներ են ակնկալվում դրանից և ո՞ւմ համար: Դարձյալ կարող են լինել մեկից ավելի նպատակներ և տարբեր օգուտներ կարող են հասանելի դառնալ բանավեճին մասնակցող տարբեր կողմերին:

Հանրության իրազեկում

Հանրությանը ներգրավելու նպատակը կարող է լինել կենսաբժշկության նոր զարգացումների մասին մարդկանց իրազեկումը, բանավեճ խթանելը կամ հետագա խորհրդակցության կամ մասնակցության հիմքեր դնելը և երկխոսություն սկսելը, որն իր հերթին կարող է տեղեկություններ տալ քաղաքականություն մշակելու համար: Արդյունքներից մեկը կարող է լինել նաև ընդհանրապես հանրության մասնակցությունը խրախուսելը:

Հանրային բանավեճի նպատակը պետք է լինի ոչ միայն կենսաբժշկության մասին հանրությանը կրթելը, այլև կենսաբժշկության զարգացումների և սոցիալական ընկալումների ու արժեքների միջև կապը բացահայտելը: Բանավեճն այս ձևաչափի մեջ տեղափոխելն օգնում է լուծել գիտելիքի և իշխանության անհամաչափությունները, որոնք կարող են ի հայտ գալ, երբ հանրությունը շփվում է փորձագետների կամ պաշտոնատար անձանց հետ:

Պետությունների մեծ մասում գիտելիքը կոնսոլիդացնելու և տեղեկատվություն տարածելու գործում կարևոր դեր ունի մեդիան: Նույնը վերաբերվում է կենսաբժշկական հետազոտությունների, բուժման մեթոդների, կենսաբժշկական տեխնոլոգիաների և կիրառման ձևերի ոլորտներում նվաճումների լուսաբանմանը, այս գիտելիքը ընթացիկ իրադարձությունների և խնդիրների հետ հստակ փոխկապակցելուն, նոր տեղեկություններ և փորձագիտություն ներկայացնելուն:

Ազատ մամուլը կարևոր դեր ունի հասարակության մեջ (որպես «չորրորդ իշխանություն») որպես տեղեկատվության հետ մնիպուլյացիները բացահայտելու, կարծրատիպերը հարցականի տակ դնելու և նոր գիտելիքը գնահատելու միջոց: Հանրային մեդիան հասանելի է ավելի մեծ թվով մարդկանց, սակայն հաճախ այն ընկալվում է որպես որոշակի «տեսակետ» ներկայացնող և զգացական արձագանքներ հավաքագրող: Նրանք կարող են գովազդել նոր նվաճումները կամ սխալ ներկայացնել տեխնիկական անորոշության մակարդակը: Այդուհանդերձ, չի կարելի թերագնահատել նրանց դերը որպես տեղեկատվության կարևոր աղբյուր, որը կարևոր է հանրությանը ներգրավելու համար:

Սոցիալական ցանցերը կարող են աջակցել հանրային մեդիայի գործառույթին և և ընդլայնել այն, սակայն քանի դեռ դրանք ձևավորում են ինքնահռչակ «տեղեկատվական փուչիկներ» կամ «հերմետիկ միջավայրեր», կարող են նաև նույնքան հեշտությամբ տարածել նախապաշարում կամ սխալ տեղեկատվություն կամ նույնիսկ ապատեղեկատվություն: Եվս մեկ սահմանափակում է այն, որ նույն տեղեկատվությունը հասանելի չէ բոլորին, քանի որ սոցիալական ցանցերում քննարկման խմբերը սովորաբար նախատեսված են անդամների համար:

Կենսաբժշկության ոլորտի հետազոտողները կարող են հանրությանը կենսաբժշկության նվաճումների մասին տեղեկացնելու կարևոր դերակատարում ունենալ: Մտքերի փոխանակումը հետազոտողների և հանրության միջև նպաստում են հանրության վստահության ամրապնդմա-

նը գիտության նկատմամբ և օգնում են գիտնականներին շարունակել հետազոտությունը՝ հաշվի առնելով հասարակության հետաքրքրությունները և արժեքները: Հաճախ փորձագետները հատուկ վերապատրաստման կարիք ունեն՝ ոչ մասնագետներին իրենց աշխատանքի մասին տեղեկացնելու համար: Հանրության հետ հաղորդակցվելը (օրինակ՝ հիմնական լրատվամիջոցների հետ հաղորդակցվելը) կարող է դիտվել որպես հետազոտողների պարտականություն, մասնավորապես նրանց աշխատանքը հանրային միջոցներով ֆինանսավորելու դեպքում, և կարող է լինել դրամաշնորհի տրամադրելու պայման: Վաղ փուլից հետազոտության մասին շարունակական տեղեկատվության տրամադրումը կարելի է ապահովել ֆինանսավորելով և իրականացնելով սեմինարներ, ստեղծելով կայքէջեր և պատարաստելով կրթական նյութեր դպրոցների համար:

- Անհրաժեշտ է հաշվի առնել հանրության տեղեկատվական կարիքները և տեղեկություններ մատակարարող տարբեր դերակատարների դերերը, մասնավորապես՝ ուշադրություն պետք է դարձնել կենսաբժշկական նվաճումների մասին մարդկանց իրազեկելու և հասարակական կարծիք ձևավորելու հարցում սոցիալական ցանցերի աճող դերին:
- Հետազոտողների և մեդիայի համատեղ մասնակցությունը կարող է նպաստել գիտության և տեխնոլոգիայի հանդեպ վստահության մշակույթի ամրապնդմանը:
- Հարկ է ուշադրություն դարձնել հետազոտողների և քաղաքականություն մշակողների համատեղ աշխատանքին մեդիայի հետ՝ փաստական տեղեկատվության անկողմնակալ ներկայացումը, ինչպես նաև ապացույցների և տարբեր աղբյուրներից ստացվող կարծիքների սթափ քննադատությունը խրախուսելու և դրանց աջակցելու համար:

Ֆրանսիա, 2018թ.: Ֆրանսիական “États Generaux” նախագծում մեդիան առանցքային դերակատար էր և մինչև հանրային բանավեճը մեդիա մասնագետների համար կազմակերպվել էր վերապատրաստում՝ ընտրված թեմաների և դրանց էթիկական հետևանքների հավասարակշռված լուսաբանումն ապահովելու համար:

Գերմանիա, 2019թ.: Genomchirurgie im gesellschaftlichen Diskurs վերաբերյալ բանավեճի շրջանակներում 2019 թվականին կազմակերպվեցին երկու սեմինարներ, որոնց շրջանակներում գենոմի խմբագրումը զանազան տեսանկյուններից հասկանալու նպատակով լրագրողները և խմբագիրները հանդիպեցին կենսաբանության, բժշկության, էթիկայի և իրավունքի ոլորտների գիտնականների հետ: Նպատակն էր խթանել թեմայի որակյալ լուսաբանումը մեդիայում:

Կիպրոս, 2018թ.: Ծերանոցներից նվիրված Կիպրոսյան իրազեկման շաբաթվա ընթացքում տեղի ունեցած հանրային բանավեճերի արդյունքում, որոնց նպատակն էր պարզաբանել լրագրողների համար տարեցների խնամքին վերաբերվող հարցերի լուսաբանման նրբությունները, մշակվեց Լրագրողների և ԶԼՄ-ների վարքականոն:

Խնդրահարույց հարցերի բացահայտում

Հանրությանը ներգրավելը կարևոր է մտոհոգիչ հարցերը նույնականացնելու համար: Դրանք կարող են լինել այն մտահոգությունները, որոնք փորձագետները և քաղաքականություն մշակողներն ակնկալում են ու ցանկանում ավելի մանրամասն բացահայտել, ինչպես նաև չսպասված մտահոգություններ, որոնք ի հայտ են գալիս, երբ մարդիկ սկսում են քննարկել կենսաբժշկության զարգացումները:

Նման զարգացումների քննարկումը վաղ փուլում կարող է օգնել կանխատեսել խնդիրների առաջացումը՝ նախքան դրանք արմատավորվեն և դառնան դժվար լուծելի: Հնարավորություն կլինի լուծել խնդիրները ժամանակին և խնայելով միջոցներ, օրինակ՝ հարմարեցումներ կատարելով տեխնոլոգիաների նախագծում և դրանք գործնական կիրառման մեթոդներում:

- Մտահոգիչ խնդիրների կարգավորումը վաղ փուլում կարող է քաղաքականություն մշակողներին և հետազոտողներին վստահություն ներշնչել իրենց նպատակների ավելի լայն ընդունելիության առումով:

- Մտահոգիչ խնդիրների նույնականացումը կարող է բարելավել նոր նվաճումների հաջող իրականացման հնարավորությունները:

Ֆինլանդիա, 2012 թ. ստեղծվեց պաշտոնական կայք, որտեղ հանրության ներկայացուցիչները կարող են բարձրացնել մտահոգիչ խնդիրներ, ներկայացնել դրանք օրենսդիրների ուշադրությանը և ինքնաշխատ եղանակով դարձնել դրանք խորհրդարանի քննարկման առարկք, եթե 50000 ավելի քաղաքացիներ առցանց ստորագրեն հանրագիրը:

Հանրային կարծիքների մասին ապացույցների հավաքագրում

Որոշումների կայացման համար հանրային կարծիքների և դրանց բովանդակության մասին ապացույցներ հավաքելը հանրային բանավեճի միջոցառումների կարևոր նպատակներից մեկն է:

Կարևոր է իմանալ, թե ի՞նչ չափով են հանրային կարծիքների մասին ապացույցները ներկայացնում հիմնավոր եզրակացություններ և որքանո՞վ են դրանք արտահայտում հիմքում ընկած համոզումներն ու արժեքները: Կարևոր է նաև իմանալ ի՞նչն է ձևավորում այդ կարծիքները (օրինակ՝ տեխնիկական գիտելիքը կամ կրոնական հավատքը), որքանո՞վ են դրանք արմատավորված և ինչպես ու ինչ պատճառներով դրանք կարող են փոխվել ժամանակի ընթացքում:

Հարկ է դիտարկել հանրային կարծիքները հասկանալու համար կարևոր ապացույցների տեսակը (օրինակ՝ քանակական կամ որակական) և ինչպես է հիմնավորվում այդ ապացույցների օգտագործումը: Օրինակ, դիտողական հետազոտությունը (օրինակ՝ սոցիալական ցանցերի վերլուծությունը) կարող է լինել ավելի ծախս արդյունավետ, սակայն ունի սահմանափակումներ ինֆորմատիվ լինելու առումով, ինչը պայմանավորված է առկա տեղեկատվության և սոցիալական դինամիկայի վրա հսկողության բացակայությամբ:

- Հանրության հետ շփումը հնարավորություն է տալիս հավաքել ապացույցներ հանրային տեսակետերի մասին՝ որոշակի թեմայի վերաբերյալ տեսակետերի շրջանակի, բովանդակության և (հնարավոր է) հավասարկշռության վերաբերյալ պնդումները հաստատելու կամ հարցականի տակ դնելու նպատակով:

- Հանրության հետ շփման որոշակի ձևեր կարող են օգնել երևան հանել այն հիմքերը, որոնց վրա հիմնված են հանրության տեսակետերը և բացահայտել դրանք սնուցող փաստերն ու համոզումները:

Մասնակցության ընդլայնում

Հանրային բանավեճի նպատակներից կարող է լինել հանրության ներգրավումը որոշումների կայացմանը՝ քաղաքականության տարբերակների մշակումն ուղղորդելու համար, կամ նույն հանրության ներգրավումը նոր տեխնոլոգիների կառավարմանը՝ միջոցառումները մշտադիտարկելու կամ վերանայելու միջոցով:

Հանրային մասնակցությունն ունի մի շարք առավելությունները, այդ թվում՝ լեգիտիմության բարձրացումը ներկայացուցչականության միջոցով և համապատասխանության ապահովումը սոցիալական արժեքներին: Սակայն կարևոր է հասկանալ հարաբերությունը հանրության մասնակի անդամների և լայն հասարակության միջև, որոնց շահերը խնդրո առարկա են (տես՝ հաջորդ բաժինը):

Հարկ է նկատի առնել որոշումների կայացման գործընթացներում հանրության մասնակցության կամ ներգրավման հնարավարություններ ստեղծելու հարցը (օրինակ՝ քաղաքականության հնարավոր տարբերակների քարտեզագրման փուլում) և կառավարմանը մասնակցելու համար կարողություններ զարգացնելու և հնարավորություններ ստեղծելու խնդիրը (օր.՝ պացիենտների խմբեր):

Ֆրանսիա, 2018թ.: Ֆրանսիական ազգային խորհրդակցության (“États Généraux”) նպատակն էր կենսաէթիկայի թեմաներով հանրային բանավեճում ներգրավել հասարակության հնարավորինս լայն շերտեր և տեղեկություններ հաղորդել օրինաստեղծ աշխատանքներին: Մեդիայում լայն լուսաբանումը, կայքը, որի միջոցով հանրությունը կարող էր ապահովել մասնակցություն և հանրային բանավեճերի համար տարածաշրջանային ֆորումների օգտագործումը ստեղծեցին մասնակցության լավ հնարավորություններ և օգնեցին կարողություններ ձևավորել հետագա բանավեճերի համար:

Ո՞ՒՄ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐԳՐԱՎԵԼ

Ովքեր համարվում են «հանրության» անդամ՝ ցանկացած անձ, ով անմիջականորեն հանդես չի գալիս որպես քաղաքական իշխանության կամ համապատասխան մասնագիտության գործակալ: Այս իմաստով հանրության կազմը պայմանավորված է քննարկվող հարցից, դրա հանդեպ նրանց հետաքրքրությունից և դրա հետ նրանց կապից: Նույն անձը կարող է միաժամանակ ունենալ անձնական և, որպես հանրության անդամ, սոցիալական շահ, ինչպես նաև հնարավոր շահ, որը բխում է նրանց աշխատանքային փորձից կամ մասնագիտական հետքրքրության ոլորտից:

Չկա միասնական, համապարփակ, միատարր և անփոփոխ «հանրություն»: Կարևոր է այն, թե ով է փաստացի մասնակցում հանրային բանավեճերին, հատկապես եթե մասնակցելու ցանկություն ունեցող ինչ-որ մեկն անկարող է դա անել: Հանրային բանավեճի դեպքում կարևոր է նկատի առնել ովքեր պետք է մասնակցեն, ինչ շահեր են նրանք ներկայացնելու և արդյո՞ք կան որոշ խմբերի մասնակցության խոչընդոտներ:

«Հանրության» մասին խոսույթը հաճախ կարող է ենթադրել միատարրություն, երբ իրականում բոլոր հասարակություններն ընդունում են բազմազան սոցիալական շահեր և տեսակետեր: Ոչ բոլոր խնդիրներն են նույն չափով ազդում յուրաքանչյուր անձի շահերի վրա, սակայն հանրային բանավեճում յուրաքանչյուր ոք ունի ձայնի իրավունք:

Հանրային որոշ խմբեր, օրինակ՝ բաց խորհրդակցությունների կամ ինքնաբուխ հանրային բանավեճերի մասնակիցները կարող ինքնընտրված լինել: Բազմաթիվ հրավիրված հանրային բանավեճերի դեպքում, հատկապես, եթե դրանց նպատակն է հավաքել հանրության կարծիքները, մասնակիցները կարող են ներկայացնել ժողովրդագրական տեղեկատվության հիման վրա զգուշությամբ կազմակերպված ընտրանքներ, որոնք համապատասխանում են հասարակագիտության ընդունված մեթոդաբանություններին

- Կոնկրետ հարցի շուրջ ի հայտ կգան հանրության համապատասխան խմբեր, որոնց մի մասը կբարձրաձայնի սեփական շահերը, իսկ մյուսներին անհրաժեշտ է փնտրել և ներգրավել:

Շահակիրներ

Թիրախային հանրությունը՝ ուղղակի շահ ունեցողներն են, ում հաճախ անվանում են շահակիրներ: Ուղղակի շահեր ունեցողների տեսակետերը կարևոր են կենսաբժշկության զարգացումների մասին հանրային բանավեճում, սակայն շատերը կարող են լինել նաև անուղղակի ազդակիրներ: Քանի որ կենսաբժշկության ոլորտի զարգացումները վերափոխում են բոլորին հասանելիք հնարավորությունները՝ յուրաքանչյուր ոք ունի իր շահը և, հետևաբար, «շահակիր» է:

Հարկ է նկատի առնել հետևյալ խնդիրը. ինչպե՞ս ներկայացնել նրանց շահերը, ով, հավանաբար, մեծ հաճախականությամբ թույլ ազդեցության կրող են, ինչպես նաև նրանց շահերը, ովքեր, հավանաբար, քիչ հաճախականությամբ, բայց մեծ ազդեցության կրող են: Այս մարդիկ կարող են հեռու լինել ժամանակի և տարածության մեջ կոնկրետ մշակման սկզբնական իրականացումից:

- Յուրաքանչյուր ոք կենսաբժշկության զարգացումների պոտենցիալ շահակիր է: Հարկ է նկատի առնել տարբեր շահերի և տարբերակված ազդեցությունների շրջանակի նույնականացումը կամ քարտեզագրումը:
- Կարևոր է խուսափել որոշակի շահակիրների տեսակետերին անհիմն առավելություն տալուց և ճանաչել թե՛ անուղղակի, թե՛ ուղղակի ազդակիրներին:
- Խոցելի խմբերի գերներկայացվածությունը կարող է ցանկալի լինել հանրային տիրույթում նրանց ձայների լսելի լինելն ապահովելու համար:
- Կարևոր է չենթադրել, որ, օրինակ, քաղաքացիական հասարակության խմբերը կամ պացիենտների շահերի պաշտպանության խմբերը հանդես են գալիս ամբողջ քաղաքացիական հասարակության կամ բոլոր պացիենտների անունից:
- Հավասարապես կարևոր է հիշել, որ հանրային տիրույթում կամ սոցիալական ցանցերում առավել ինքնավստահ հանդես եկողները կարող և չներկայացնեն հասարակության մեծամասնության կարծիքը:

Ներկայացուցչական խմբեր

Յուրաքանչյուրի շահերին հավանական առնչություն ունեցող զարգացումների դեպքում, սովորաբար, ոչ գործնական է, ոչ էլ անհրաժեշտ է հանրային բանավեճին ներգրավել ամբողջ հանրությունը: Բնակչության ընտրանքը կարող է անհրաժեշտ պատկերացում տալ հասարակության մեջ առկա հանրային տեսակետերի մասին:

Ընտրանքը կազմելու չափորոշիչները և ընտրանքի չափը, սակայն, պետք է որոշվեն և, հետևաբար, կախված են դատողություններից: Կարևոր է խուսափել այս դատողություններում կանխակալ ենթադրություններից այն մասին, թե ինչ շահեր են կարևոր:

- Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բնակչության ներկայացուցչական ընտրանք կազմելու համապատասխան պարամետրերին:
- Ազգային հանրաքվեները կարող են ինֆորմատիվ լինել, բայց չեն փոխարինում հանրային բանավեճին: Արդյունավետ հանրային բանակցության պայմաններում դրանք կարող են տալ հակառակ արդյունք:
- Բնակչության ներկայացուցչական ընտրանք ներգրավելը կարող է օգնել նախազգուշնել քաղաքականություն մշակողներին հանրային շահի հնարավոր աղճատումների մասին, որոնք կարող են առաջանալ շահակիր խմբերի ինտենսիվ լոբբինգի կամ քարոզարշավների հետևանքով:

Իռլանդիա, 2016թ.: Կառավարությունը ձևավորել էր Քաղաքացիների ասամբլեա, որը կազմված էր նշանակված 99 անդամից և նախագահից և պետք է խորհրդատվություն ապահովեր Սահմանադրության՝ հղիության արհեստական ընդհատումն արգելող ութերորդ փոփոխությունն ուժը կորցրած ճանաչելու հարցերով զբաղվով խորհրդարանական կոմիտեին:

Տարբեր ձայների ընդգրկում

Հանրային բանավեճ նախաձեռնելիս, երբեմն անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ քայլեր՝ ոչ բացահայտ կամ անուղղակի շահեր ունեցեղների կամ մասնակցության արգելքներ ունեցողների ձայները հաշվի առնելու համար: Բազմաթիվ հասարակություններում, օրինակ, էթնիկ փոքրամաս-

նություններին հավասարապես հասանելի չի եղել հանրային հարթակը: Բնակչության որոշ կարևոր հատվածների հնարավոր է չառաջարկվի մասնակցել հանրային բանավեճին կամ նրանք չգտնեն մասնակցության հնարավորություններ: Ոմանք՝ հրավիրված լինելով, միգուցե չկարողանան մասնակցել միջոցառմանը լեզվական, ֆիզիկական կամ հոգեբանական արգելքների հետևանքով: Որոշ դեպքերում հնարավորության նման բացակայությունը կարող է առնչվել մարդու իրավունքներին կամ լինել սոցիալական և քաղաքական բացառման առկա ձևերի հետևանքը:

Երեխաները և երիտասարդներն առանձնակի շահեր ունեն ընտրվող տեխնոլոգիական ուղղությունների երկարաժամկետ հետևանքների հարցում: Նրանք կարող են առաջարկել նոր հեռանկարներ և ինքնատիպ տեսակետեր, բայց հանրային բանավեճերին նրանց ապահով մասնակցությունն ապահովելու համար կարող են պահանջվել այլ մոտեցումներ, հատկապես երբ խոսքը զգայուն թեմայի մասին է: Ընդհանուր բնակչության նույնքան կարևոր մաս են կազմում ավելի տարեցները, որոնց վրա բժշկական ծառայությունների փոփոխությունները հաճախ անհամաչափ ազդեցություն ունեն:

Փոքրամասնությունների ձայները կարող են հեշտությամբ անհետանալ քանակական կամ խոշորացված մոտեցումների դեպքում, երբ մասնակիցներն ընտրվում են պատահական սկզբունքով կամ որպես ընդհանուր բնակչության ներկայացուցչական ընտրանք:

Գոյություն ունեցող վերաբերելի ցանցերը և շահակիր խմբերը կարող է ճանապարհ հարթել հարցով հատուկ հետաքրքրվածների, այլ տարբերակներով դժվար հասանելի կամ խոցելի անձանց համար: Միգուցե կարիք լինի հատուկ քայլեր ձեռնարկել սոցիալապես մարգինալացված խմբերը ներառելու ուղղությամբ, որոնց մասնակցությունը քիչ հավանական է, ինչը հնարավոր է, օրինակ, հավաքագրողների կամ վստահելի միջնորդների հետ աշխատելու միջոցով:

Քաղաքականության հարցերը, որոնք ազդում են ամբողջ պետության վրա կարող են աշխարհագրական տարբեր վայրերում տարբեր ազդեցություն ունենալ մարդկանց շահերի վրա: Տարբերություններ կարող են լինել քաղաքային և գյուղական վայրերի, հյուսիսի և հարավի, արդյունաբերական և սպասարկող կենտրոնների, ցամաքային և ծովափնյա և այլ տարածքների միջև:

- Երիտասարդների մասնակցությունը հնարավոր է անվտանգ ապահովել դպրոցների կամ երիտասարդական խմբերի միջոցով:
- Տարեցների մասնակցությունը խրախուսելու համար միգուցե անհրաժեշտ լինի նրանց կարիքներին հարմարեցնել հաղորդակցության միջոցները:
- Վստահելի միջնորդները կարող են կազմակերպել խոցելի անձանց մասնակցությունն այնպիսի միջոցներով, որ հնարավոր լինի լսելի դարձնել նրանց ձայները և պաշտպանել նրանց անձի գաղտնիությունը:

Գերմանիա, 2019թ.: Genomchirurgie im gesellschaftlichen Diskurs ծրագիրը ներգրավեց տարբեր խմբեր, որոնց թվում էին դպրոցականները: Աշակերտները մասնակցեցին գենային դրայվի տեխնոլոգիային նվիրված սիմուլյացիոն խաղի, որի ընթացքում ուսուցիչներն օգտագործեցին հատուկ մշակված գործիքակազմ:

Միացյալ Թագավորություն, 2007թ.: Միացյալ Թագավորությունում հանրային բանավեճի օրինակը “Public Engagement on Brain Science, Addiction and Drugs” ցույց տվեց նորարարական քայլեր ձեռնարկելու կարևորությունն այն դժվար հասանելի խմբերին ներգրավելու համար, որոնց համար դժվար կլինի բացահայտ մասնակցել հրավիրված հանրային բանավեճերին:

ԾՐԲ Է ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ՊԱՀԸ

Հանրային բանավեճը պետք է լինի շարունակական գործընթաց, ոչ թե միջոցառում, թեև տարբեր համատեքստերում և առանցքային հանրգրվաններում նպատակահարմար կլինեն հանրային բանավեճի տարաբնույթ միջոցառումներ: Հանրային բանավեճը պետք է դիտարկել ժողովրդավարական կառավարման լայն համատեքստում:

Հանրային բանավեճի միջոցառումները, սովորաբար, ունեն հատուկ նպատակ և նախապես որոշված ձևաչափ: Սակայն պարտադիր չէ, որ

կոնկրետ պահի հանրային բանավեճն ավարտվի միասնական որոշում ընդունելով:

Մասնակիցները չպետք է ունենան այն զգացողությունը, որ որոշում արդեն իսկ կայացվել է և իրենք կարող են ունենալ շատ չնչին իրական ազդեցություն: Սա վերաբերվում է թե՛ քաղաքական մակարդակում կայացված որոշումներին, որոնք ենթարկվում են քննադատության, թե՛ որոշում կայացնելուց առաջ հանրության կարծիքների հավաքագրմանը:

- Շարունակական հանրային բանավեճը խթանում է հանրային ակտիվ մասնակցության մշակույթը, որն օգնում է բոլոր քաղաքացիներին մտահոգող հարցերում բարելավել իրազեկվածությունը և իրավահասությունը:

Վաղ փուլի հանրային բանավեճ

Վաղ փուլի հանրային բանավեճերը տեղի են ունենում նախքան գիտահետազոտական նվաճումները կիրառելի լուծումների վերածելը: Նման բանավեճերը ներկայացվում են որպես հետազոտության ու նորարարության նպատակների և ուղղությունների վրա սոցիալական ազդեցությունը մեծացնելու միջոց, որի նպատակն է սոցիալապես ավելի պատասխանատու դարձնել գիտությունը: Վաղ փուլում հանրության ներգրավումը կարող է նպաստել զարգացումների ուղղորդմանը հասարակության համար ընդունելի ուղղություն:

- Վաղ փուլից հանրության ներգրավումն արժեքների, հույսերի և վախերի շուրջ քննարկումներում կարող է օգնել հետազոտողներին և քաղաքականություն մշակողներին կողմնորոշել նորարարությունները և զարգացումները այն ուղղությամբ, որն ընդունելի է հանրության կողմից:

Դանիա, 2008թ.: Դանիայի Տեխնոլոգիաների խորհուրդը հանրային բանավեճ կազմակերպեց, որի նպատակն էր տեղեկացնել քաղաքականություն մշակողներին հանրության տեսակետի մասին (օրինակ՝ առողջապահության գերակայությունների վերաբերյալ)՝ նախքան քաղաքականության ուղղությունը որոշելը:

Քաղաքականության մշակմանն առնչվող հանրային բանավեճ

Հանրային բանավեճն օգնում է բացահայտել քաղաքացիների ընդհանուր հանրային շահը: Հանրային այս շահը հանրային քաղաքականության հետ կապելը բանավեճն իմաստալից դարձնելու ձևերից մեկն է:

Բավական հաճախ հանրային բանավեճը նախաձեռնվում է հանրային քաղաքականություն մշակելու գործընթացի հետ կապված և նպատակ ունի ապահովել օրենքում կամ հանրային քաղաքականությունում փոփոխությունների առաջարկներ:

Երբ նախաձեռնությունը քաղաքական իմաստով հակասական է մեծ ուշադրություն պետք է դարձնել ժամանակին և խուսափել այնպիսի իրավիճակից, երբ մասնակիցները բանավիճում են իրենց տարբեր քաղաքական դիրքորոշումները: Նման հանգամանքներում կարևոր է բավարար ժամանակ տալ հարցերի խորհրդածական դիտարկումներին՝ բանավեճում զանազան կարծիքներ և արժեքներ ընդգրկելու համար:

Մյուս կողմից, երբ սովորական քաղաքական դիմակայություններում ի հայտ են գալիս բարդ հարցեր, հանրային բանավեճի գործընթացները կարող են ապահովել ընդհանուր հայտարարի գալու համար խնդիրները բացատրելու և քննարկելու հարթակ:

- Կարող է անհրաժեշտ լինել խուսափել քաղաքական առումով զգայուն ժամկետներից, որպեսզի արդյունքն անդրադառնա խնդիրներին, այլ ոչ թե պայմանավորված լինի քաղաքական պատկանելիության ազդեցությամբ:

Դանիա, 2008թ.: Հանրային բանավեճը առողջապահության համակարգի ապագայի վերաբերյալ առնչվում էր որոշակի հիվանդությունների բուժման պետական և մասնավոր ֆինանսավորման պայմաններում փոփոխություններ կատարելու քաղաքական զգայուն հարցին, հետևաբար կարևոր էր խուսափել քաղաքական առումով զգայուն ժամկետներից: Բանավեճը դուրս հանեց քաղաքականապես զգայուն հարցը քաղաքական կոնտեքստից և վերածեց այն հանրային բանավեճի: Քաղաքականության մշակումն ի վերջո առաջնորդվեց բանավեճի արդյունքով:

Իռլանդիա, 2016թ.: Իռլանդիայի Սահմանադրության՝ հղիության արհեստական ընդհատումն արգելող ութերորդ փոփոխությունն ուժը կորցրած ճանաչելու հարցը քաղաքական առումով չափազանց զգայուն է, ինչը կարևոր էր դարձնում Քաղաքացիների ասամբլեան քաղաքական ազդեցություններից զերծ պահելու հարցը: Դա հնարավոր եղավ կանխակալ մոտեցումից բանավեճը զերծ պահելու մասին հիմնական կողմերի հանրային համաձայնության շնորհիվ:

IV. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ

Արդյունավետ լինելու համար հանրային բանավեճը պետք է լինի բոլոր մասնակիցների համար իմաստալից և արժեքավոր, ինչպես նաև հարգալից վերաբերմունք ապահովի նրանց հանդեպ: Մասնակիցները պետք է գիտակցեն, որ ունեն լսված լինելու հավասար հնարավորություն, իսկ նրանց կարծիքները պետք է նկատի առնվեն, եթե նույնիսկ համաձայն չեն որևէ եզրակացության հետ, որին հնարավոր է հանգեն գործընթացի արդյունքում:

Հանրային բանավեճը հաղորդակցության երկկողմ գործընթաց է: Մտքերի փոխանակման բնույթը՝ ինչ, ով և ում է հաղորդում, կարող է տարբեր լինել, իսկ հանրային բանավեճի ցանկացած միջոցառում, հավանաբար, կընդգրկի մտքերի փոխանակման տարբեր տեսակներ:

Այս բաժինը նվիրված է հանրային բանավեճի միջոցառումների որակի ապահովմանն ու բարելավմանը: Որակը պայմանավորված է հետևյալներով, թեև տարբեր է դրանցից. ցանկացած դատողությամբ այն մասին, թե արդյո՞ք գործընթացը համապատասխանում է նպատակին կամ իրավիճակին (տես նախորդ բաժինը) կամ որքանո՞վ է արդյունքը բավարարում բանավեճը նախաձեռնողների և դրա մասնակիցների ակնկալիքները գործընթացի համապատասխան լինելու մասին ցանկացած դատողության (տես հաջորդ բաժինը):

Արդյունավետ հանրային բանավեճն ապահովում է անհատների և խմբերի մասնակցությունը հասարակական կյանքին, ինչը կարող է խթանել հետաքրքրությունը և ստեղծել լիազորությունների ընդլայնման հնարավորություն: Այն կարող է խթանել վստահությունը քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիների և կառավարության կամ պետական մարմինների միջև: Հանրային բանավեճի ոչ արդյունավետ միջոցառումները ոչ թե պարզապես չեն տա այդ արդյունքները, այլև կառաջացնեն հակառակ հետևանքներ ունենալու վտանգը, այսինքն՝ անտարբերություն, փոխոդարձ կասկած և, ի վերջո, հասարակական կյանքից օտարվելու զգացողություն:

- Հանրային բանավեճի միջոցառումների արդյունավետությունը հնարավոր է բարձրացնել ուշադրություն դարձնելով դիզայնի և վարման սկզբունքներին:
- Հանրային բանավեճի արդյունավետ միջոցառումները նպաստում են քաղաքացիների լիազորությունների ընդլայնմանը և քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիների և կառավարության կամ պետական մարմինների միջև վստահությանը:

Արդյունավետություն դիզայնի միջոցով

Հանրային բանավեճի արդյունավետ միջոցառումների կազմակերպման կարևորագույն սկզբունք է մասնակցության հնարավորության ապահովումը: Ամենակարևոր հատկանիշն այն է, թե ինչպես է գործընթացի դիզայնն արտացոլում կամ կառավարում ուժերի բաշխումը կողմերի, այդ թվում՝ մասնակիցների և նախաձեռնողների միջև: Այն հնարավոր է բարելավել ստեղծելով միջավայր և գործընթաց, որոնք ունեն համարժեք ռեսուրսներ, ներառական են և արտոնող:

Հանրային բանավեճին բավարար ժամանակ հատկացնելը հաճախ հակասում է հրատապ հարցի վերաբերյալ քաղաքական որոշում կայացնելու անհրաժեշտությանը: Չափից շտապողական որոշումների կայացումը, սակայն, առաջացնում է բանավեճը պարզապես հետաձգելու կամ տեղափոխելու վտանգ, ինչը կարող է հետագայում խնդրահարույց կամ հիասթափեցնող լինել:

Հաճախ սեղմ ժամկետների պատճառները պայմանավորված են, օրինակ, բարի համբավ կամ տնտեսական առավելություն ապահովելու խնդրով, ինչը կարելի է մեղմել հեռատեսության և կանխատեսման միջոցով: Հրատապությունը, սակայն, պետք է մերժել, եթե հանրային որոշումների կայացման որակն ավելի կարևոր է, քան արդյունքը: Սա այն

դեպքերում է, երբ պահպանվում են էական անորոշություններ՝ օրինակ, երբ վտանգները և հետևանքները լավ սահմանված չեն, իսկ մարդկանց կողմից խնդրին վերագրվող նշանակությունները և արժեքները խիստ երկիմաստ են:

Ռեսուրսների հատկացում

Մասնակիցներին իմաստալից ներդման հնարավորություն ընձեռնելու համար հանրային բանավեճը պետք է ունենա համարժեք ռեսուրսներ: Ելնելով մեթոդաբանությունից և մասշտաբից՝ հանրային բանավեճի միջոցառումները կարող են լինել ծախսատար: Ի վերջո, ռեսուրսների հատկացումը պետք է համարժեք լինի որդեգրած մոտեցմանը:

Համարժեք ռեսուրսների հատկացումը վկայում է հանրային բանավեճ նախաձեռնողների հանձնառության մասին և կարող է ընդգրկել ոչ միայն ֆինանսական ծախսերը, այլև սկզբից մինչև ավարտ գործընթացին աջակցելու համար ժամանակի հատկացումը: Ոչ համարժեք ռեսուրսները կամ «կարճ կապելը» կարող է խարխլել հանրային բանավեճը և հանգեցնել արդյունքների, որոնք կունենան հակառակ ազդեցություն:

Երբ ռեսուրսները սահմանափակ են, մոտեցումները կարելի է սեղմել՝ սահմանափակ նպատակների հասնելու համար: Գործընթացի մեթոդաբանական սահմանափումներն անտեսելով չափից ավելի լայն և հեռահար նպատակներ սահմանելը կարող է տալ հակառակ արդյունք: Մյուս կողմից, ռեսուրսները հնարավոր է ընդլայնել՝ աշխատելով մասնագիտական կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, թեև այս դեպքում պետք է դռսևորել շրջահայացություն, որ նման մեխանիզմները վնաս չհասցնեն գործընկերների բարեվարքությանը կամ գործընթացի ամբողջականությանը:

Հանրային բանավեճի միջոցառումներին քաղաքացիների լիարժեք մասնակցելուն ապահովելու համար բավարար ժամանակ հատկացնելը նույնքան կարևոր է, որքան ֆինանսական աջակցությունը: Ժամանակ կարող է պահանջվել պատշաճ պլանավորելու, թիրախային լսարանի հետ հաղորդակցվելու, այլ հանձնառությունները հաշվի առնելով մասնակիցներին՝ իրենց ներգրավվածությունը պլանավորելու հնարավորություն ընձեռնելու և սեփական մասնակցությանը պատրաստվելու համար: Սա հաճախ հակասում է արձագանքողական քաղաքականություն մշակելու պահանջներին: Մածամասամբ, կարևոր է մասնակիցներին տալ ապացույցները և փաստարկները դիտարկելու, ուրիշների հետ դրանք քննարկելու (հավուր պատշաճի) և սեփական տեսակետերը ձևակերպելու ժամանակ:

- Շտապողական եզրակացություններ անելու ճնշումներին ընդդիմանալը և հանրային բանավեճին ժամանակ հատկացնելը կարող է երկարաժամկետ տեսանկյունից ավելի արդյունավետ լինել, հատկապես երբ քննարկվում են բարդ խնդիրներ:

Իռլանդիա, 2016թ.: Հանրային բանավեճ էր կազմակերպվել Սահմանադրության ութերորդ փոփոխությունն ուժը կորցրած ճանաչելու շուրջ, որն արգելում էր հղիության արհեստական ընդհատումը: Գործընթացը պահանջեց ստեղծել Քաղաքացիների ասամբլեա, որը 2016–2017 թվականներին ունեցավ հինգ նիստ: Վերջինիս եզրակացությունները 2017 թվականին դրեցին 2018 թվականին կայացած որոշիչ ազգային հանրաքվեի հիմքերը: Բավարար ժամանակ հատկացնելը գործընթացի արդյունավետության կարևոր գործոն էր:

- Երբ հանրային բանավեճն ամենասկզբից դիտվում է ոչ թե որպես ընտրանքային լրացուցիչ վարժություն, այլ քաղաքականության գործընթացի մաս՝ դա օգնում է երաշխավորել, որ բանավեճը ծառայի քաղաքականության մշակման գործընթացը տեղեկացնելու նպատակին:

- Առանց հրավերի հանրային բանավեճերի նախաձեռնությունների գաղափարին բաց լինելը կարող է օգնել բացահայտել հանրային կարևորություն ունեցող խնդիրներ և ուղղություն հաղորդել հետագա գործողություններին:

- Հանրային բանավեճի համապատասխան միջոցառման տեսակը որոշելուց հետո կարևոր է ապահովել բավարար ռեսուրսների հատկացումը:

- Համեմատաբար հեշտ է ապահովել հանրային բանավեճին մասնակցելու հնարավորություններ, օրինակ՝ առցանց հանրագրերի միջոցով:

Ֆինլանդիա, 2012թ.: Հանրային բանավեճերը կարող են ծախսատար լինել, բայց գոյություն ունեն նաև հանրային ազդեցության հարթակներ ստեղծելու ավելի մատչելի տարբերակներ: Օրինակներից մեկը հեշտ հասանելի կայք ստեղծելու ֆիննական նախաձեռնությունն է, որի միջոցով հասարակությունն աջակցում էր այն հարցերին, որոնք ցանկանում էր ներկայացնել խորհրդարանի լուծմանը: Առաջին վեց տարվա ընթացքում, այս նախաձեռնության շնորհիվ տեղի ունեցան 37 հանրագրերի քննարկումներ:

- Բոլոր մասնակիցների շահերին ծառայող հանրային բանավեճի միջոցառումների դեպքում կարելի է նաև հիմնավորել ծախսերի բեռը կիսելը:
- Հնարավորության դեպքում գոյություն ունեցող կազմակերպական ենթակառուցվածքներից օգտվելը կարող է կրճատել ծախսերը, թեև հարկ է հաշվի առնել հնարավոր իշխանական կառույցները և մասնակցության խոչընդոտները:

Ֆրանսիա, 2018թ.: Ֆրանսիական “États Généraux” նախաձեռնությունն արդյունավետ կերպով օգտվեց գոյություն ունեցող տարածաշրջանային ֆորումներից և ընդգրկեց ամբողջ երկրի ու արտասահմանյան տարածքների բնակչությանը՝ հնարավոր դարձնելով տեղական ենթակառուցվածքների միջոցով համազգային բանավեճի մասնակից դարձնել լայն հանրությանը:

Լեհաստան, 2015: 2015 թվականից ամեն տարի ամբողջ երկրում կազմակերպվող Լեհաստանի Սահմանադրական շաբաթվա ընթացքում ուսանողների շփումներն իրավագետների հետ կազմակերպելու համար օգտագործվում են դպրոցների և այլ հաստատությունների գոյություն ունեցող ենթակառուցվածքները՝ որպես հանրային բանավեճի միջոցառումների մաս առաջարկելով սահմանադրական իրավունքի մասին դասախոսություններ: Իրավագետներն անվճար և կամավոր հիմունքներով առաջարկում են կարողությունների զարգացման հնարավորություն:

Իմաստալից մասնակցություն և համատեղ նախագծում

Իմաստալից հանրային բանավեճի պահանջ է հարգալից վերաբերմունք դրսևորել մասնակիցների շահերի հանդեպ: Մասնակիցների շահերը հնարավոր է հարգել ֆինանսապես պարգևատրելով նրանց մասնակցության համար, եթե նույնիսկ գումարը սիմվոլիկ է: Սակայն հանրային բանավեճին մասնակցելու համար պարգևներն ավելի հաճախ ենթադրում են հանրային որոշումների կայացման վրա ազդեցության հնարավորություն (տես հաջորդ բաժինը) և մասնակցություն հասարակության ձևավորմանը: Հանրային բանավեճի արդյունավետությունը պահանջում է մասնակիցներից հասկանալ, որ արդյունքում ունեն սեփական շահեր և գիտակցել, որ մասնակցությունը տալիս է արդյունքի վրա իրական ազդեցություն:

Անաչառ կերպով հարցերի ձևակերպումը կամ իրենց համար առավել իմաստալից կերպով մասնակիցներին՝ իրար միջև համաձայնեցված հարցեր ձևակերպելու (համահեղինակելու) հնարավորություն ընձեռելն օգնում է վստահություն ստեղծել բանավեճի անկողմնակալ լինելու հանդեպ:

Հանրային բանավեճ նախաձեռնողներին կարող է անհրաժեշտ լինել մասնակիցներին՝ նրանց հանձնառության դիմաց պայմանականորեն փոխանցել որոշ լիազորություններ: Մասնակիցների մոտ կարող է առաջանալ զգացողություն, որ նախքան խնդրի շուրջ մտքերի իմաստալից փանակումն իրենց անհրաժեշտ են հավելյալ տեղեկություններ կամ տարբեր տեսակետերի ավելի խորն ըմբռնում: Նրանց պետք է հնարավորություն տրվի հայտնել նման ցանկությունը պլանավորման վաղ փուլում, ինչը հնարավորություն կտա ընտրել և գործընթացում ներգրավել համապատասխան փորձագետների:

Նախաձեռնողը պետք է նաև տեղեկացված լինի մասնակիցների միջև հնարավոր տարբերությունների մասին, օրինակ՝ կրթության կամ սոցիալական կարգավիճակի առումով, ինչը կարող է պահանջել վարողից կամ միջնորդից համապատասխան հարցերը փոխանցել փորձագետներին՝ լսելի դարձնելով բոլոր ձայները և հնարավոր մտահոգությունները:

Հանրային բանավեճի միջոցառումը շոշափելի արդյունքին կապելը կարող է հնարավորություն տալ մասնակիցներին գործընթացում ունենալ հստակ շահեր և խրախուսել նրանց ավելի նվիրված լինել:

Դանիա, 2008թ.: Դանիայի առողջապահության համակարգի ապագայի մասին հանրային բանավեճի մասնակիցները քննարկեցին և քվեարկության դրեցին շատ շոշափելի հարցեր, որոնց թվում էին բուժօգնության համար ռեսուրսների հատկացման սկզբունքները և ուղեցույցեր քաղաքականություն մշակողների համար:

- Մասնակիցների շահերը հանրային բանավեճում կարելի է հաշվի առնել, եթե նրանց ներգրավել գործընթացի մշակմանը կամ դրանում քննարկելիք հարցերի ձևակերպմանը (համահեղինակում):
- Եթե հանրային բանավեճի մասնակիցներին տրվում է հնարավորություն որոշել իրենց համար կարևոր տեղեկատվությունը՝ դա հնարավոր է օգնի խթանել նրանց մասնակցությունը, օրինակ՝ ունենալով նրանց տեսակետերը հիմնավորելու համար փորձագետներ ընտրելու կամ ապացույցներ հավաքելու հնարավորություն:

Իռլանդիա, 2016թ.: Իռլանդիայի Քաղաքացիների ասամբլեան լիազորված էր հրավիրել փորձագետներին, ում կարծիքը ցանկանում էր լսել, և հարցեր ուղղել նրանց՝ քննարկումների համար կայուն հիմքեր ստեղծելու նպատակով:

Միացյալ Թագավորություն, 2007թ.: “Public Engagement on Brain Science, Addiction and Drugs” թեմայով լայնածավալ հանրային բանավեճի միջոցառումների շարքի դեպքում մասնակիցները հնարավորություն ունեին շփվել փորձագետների լայն շրջանակի հետ, ինչը տեղեկություններ էր հաղորդում իրենց բանավեճին:

- Անկախ, անաչառ և արհեստավարժ վարողներ և միջնորդներ ներգրավելը կարող է օգնել անհատ մասնակիցների և մարգինալացված ենթախմբերի լիազորմանը:

Հասանելիություն և ներառում

«Հանրային բանավեճ»-ը կարող է ենթադրել նաև հանրային հարթակ, որտեղ մասնակիցները կարող են ազատ արտահայտել իրենց շահերը:

Իրականում, խոսույթի հարթակները գրեթե միշտ ունեն ազդեցության և գիտելիքի անհավասարություններ, իսկ դրանց հասանելիությունը բոլոր քաղաքացիներին միշտ չէ, որ հավասար է կամ երաշխավորված: Սա հավասարապես կիրառելի է հարցաշարի կառուցվածքին և տարածքի ֆիզիկական հասանելիությանը:

Հանրային բանավեճի հաղորդակցման միջոցը լեզուն է: Թարգմանիչների կարիք կարող են ունենալ նրանք, ում համար տեղական լեզուն մայրենին չէ, օրինակ՝ նոր ներգաղթյալները: Ովքեր չունեն մայրենի լեզվի հմտություններ կամ իմացություն կարող են ունենալ գրավոր հաղորդակցման դժվարություններ: Տառաճանաչությունը դեռևս խնդիր է բոլոր անդամ պետություններում: Վիճակը կարող է բարդացնել տեխնիկական եզրույթների օգտագործումը, որոնք բավականին տարածված են կենսաբժշկության մեջ: Լեզվական կարողությունների տարբերությունները կարող են առանձնակի կարևոր լինեն, երբ միջնորդությունը սահմանափակ է, օրինակ՝ առցանց հարթակներում, որոշակի հանրային մեդիայում և սոցիալական ցանցերում: Այս պատճառներով հաղորդակցման այլընտրանքային ուղիների դիտարկումը, խաղային տեսանյութերի պատրաստումը կամ ցուցադրումը, «կոճակ» սեղմելու միջոցով քվեարկությունը կարող են խթանել քննարկումը: Քննարկումը խթանելու համար տեղեկատվությունը կարելի է փոխանցել բազմատեսակ միջոցներով (օրինակ՝ տեսանյութ, արվեստի գործ):

Խնդրահարույց կարող են լինել նաև որոշ միջներեսներ (ինտերֆեյս): Տարեցները կամ տեխնոլոգիաներին վատատեղյակ անձինք, օրինակ, կարող են մյուսներից անբարենպաստ վիճակում հայտնվել առցանց հարթակների և սոցիալական ցանցերի դեպքում, հետևաբար անհրաժեշտ է դիտարկել ներգրավվման այլընտրանքային կամ փոխլրացնող միջոցներ: Մարդկանց մի մասը ոչ հարմարավետ է համարում որոշակի մեդիաները կամ միջավայրերը:

Հավասարապես կարևոր են մասնակցության պայմանները և ձևաչափը: Օրինակ, ցածր սոցիալական կարգավիճակ կամ կրթական մակարդակ ունեցողների մասնակցությունը համալսարանի շենքում կազմակերպվող սեմինարին և ուրիշների հետ դեմ առ դեմ բանավիճելը քիչ հավանական է:

Անցկացման վայրը պետք է ընտրել մատչելիության տարբեր պահանջներ ունեցող անձանց, օրինակ՝ հենասյլակներից օգտվողների կամ երեխաների սայլակներով անհատների մասնակցությունն ապահովելու մի-

տումով: Ավելին, հարմարությունների (զուգարան, աղոթասենյակ կամ մոր և մանկան սենյակ), անվճար կայանատեղիների բացակայությունը կամ հասարակական տրանսպորտի անմատչելիությունը կարող է խոչընդոտել որոշ անձանց մասնակցությունը միջոցառմանը: Լսողական սարքերի բացակայությունը կամ ակուստիկ խոչընդոտները՝ երթևեկության աղմուկը կամ շրջակա աղմուկը, կարող են հանդիպման վայրն անհարմար դարձնել բազմաթիվ մասնակիցներով քննարկման համար:

Բոլորի ներառումը կարող է նաև պահանջել բացառել միջոցառումների կազմակերպումն այն օրերին, երբ որոշ անձիք պարտավոր են մասնակցել կրոնական արարողությունների, ինչպես նաև պայմաններ ապահովել աշխատանքային կամ երեխայի խնամքի պարտականություններ ունեցողների համար կամ փոխհատուցել նրանց ծախսերը:

- Հանրային բանավեճը պետք է լինի ներառական և բարենպաստ միջավայրում: Հարկ է նկատի առնել միջոցները, որոնք պահանջվում են հավասար հիմունքներով բոլորի մասնակցությունը հանրային բանավեճին հնարավոր դարձնելու համար: Մի գուցե պահանջվեն հատուկ քայլեր սոցիալական բացառման նենգ ձևերին արձագանքելու համար:

- Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ բանավեճի վայրը ֆիզիկապես մատչելի լինի բոլորի համար: Գոյություն ունեցող հանրային հաստատությունները և վայրերը, օրինակ՝ թանգարանները և ցուցասրահները, ինչպես նաև միջոցառումները, որոնց ընթացքում մարդիկ միասին են հավաքվում, օրինակ՝ գիտաժողովներ և հանրային միջոցառումներ, կարող են հարմար միջավայր ապահովել բանավեճի համար և օգնել վերածել այդ տեղերը սոցիալական շփման վայրեր:

- Հանրային բանավեճի ընթացքում մասնակցությունը խրախուսելու նպատակով կարող են օգտագործվել տարբեր արտահայտչամիջոցներ և ձևեր, օրինակ՝ բանավոր երկխոսության փոխարեն նկարչություն և դերասանություն:

- Սոցիալապես մարգինալացված խմբերը ներգրավելու համար նախաձեռնողներից կարող են պահանջվել հատուկ քայլեր, օրինակ՝ օգտագործել գործընկերներ, միջնորդներ կամ ներկայացուցիչներ:

Միացյալ Թագավորություն, 2007թ.: “Brain Science and Addiction” թեմայով հանրային բանավեճին թեթև թմրամիջոցներ օգտագործողների և նախկին թմրամոլների (ոչ միայն պացիենտների կազմակերպությունների ներկայացրած) ակտիվ մասնակցությունն ապահովելու համար ձեռնարկվել էին նախաձեռնող քայլեր: Այս խմբերին հնարավորություն էր տրվել մշակել սեփական մասնակցության նախընտրելի ձևը, ինչը նրանք արեցին անվտանգ միջավայրում ներքին բանավեճի և միջնորդներ նշանակելու միջոցով, ում հետ նրանք ստեղծեցին վստահության փոխհարաբերություններ և ովքեր ներկայացրեցին նրանց կարծիքները բանավեճում:

Վերահսկողության մեխանիզմներ

Միգուցե պահանջվեն մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն հանրային բանավեճի միջոցառումների ընթացքում շահակիր բոլոր կողմերի շահերի ապահովումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նման մեխանիզմների ընդունումը: Այս գործառույթը պետք է առանձացնել թե՛ հանրային բանավեճի գործնական կառավարումից և վարումից, թե՛ նման նախաձեռնությունների հանձնակատարներից, հովանավորներից կամ հասցեատերերից:

- Որպես հանրային բանավեճի միջոցառումների նախագծման մաս ցանկալի կլինի ապահովել վերահսկողության ինչ-որ ձև, որն անկախ է նախաձեռնող կազմակերպությունից կամ հանձնակատարից: Ձևը կարող է լինել վերահսկող անկախ խումբը կամ անկախ լիազորությամբ օժտված անձը:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ

Հանրային բանավեճի առանցքային սկզբունք է մասնակիցների շահերի և ազատությունների հանդեպ հարգանքը՝ սկզբունք, որն ընկած է նաև մարդու իրավունքների հիմքում: Հանրային բանավեճի միջոցառումների արդյունավետությունը հնարավոր չէ ապահովել զուտ դիզայնի միջոցով, քանի որ պահանջվում է անցկացնել դրանք արդար վարույթի սկզբունքների համաձայն:

Վարույթի միջոցները կարող են օգնել հակակշռել մասնակիցների, այդ թվում՝ հանրային բանավեճին մասնակցողների և դրանք նախաձեռնողների կամ հովանավորողների միջև տարբերությունները կամ անհավասարությունները:

- Հանրային բանավեճի միջոցառման ընթացքում պահպանման ենթակա վարման սկզբունքների բացահայտումը կամ սահմանումն օգնում է բարձրացնել թափանցիկությունը և խթանել հաշվետվողականությունը:

Արդարացիություն

Մասնակիցների հանդեպ հարգանքը կարող է պահանջել հատուկ ուշադրություն դարձնել կամ հատուկ քայլեր ձեռնարկել որոշակի խմբերի մասնակցությունը խարախուսելու կամ հնարավոր դարձելու, ինչպես նաև բոլոր, այդ թվում՝ հակառակ կամ արտասովոր տեսակետեր արտահայտող ձայները հավասարապես լսելի դարձնելու համար: Կարևոր է, որ հանրային բանավեճի կենտրոնում լինի քննարկելիք խնդիրը, ոչ թե այն քննարկող անձը:

Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել հարգանք էթնիկ, մշակութային, կրոնական և սոցիալ-ժողովրդագրական տարբերությունների հանդեպ, ինչպես նաև երաշխավորել բոլոր մասնակիցների կարծիքները հաշվի առնելու հավասար հնարավորություններ: Հարգանք և արդար վերաբերմունք ցուցաբերելը խրախուսում է վստահությունը նախաձեռնության հանդեպ:

- Նախագահելը կամ անկախ, անաչառ և հմուտ կերպով վարելը կարող է ապահովել բոլոր մասնակիցներին իրենց ձայները լսելի լինելու հավասար հնարավորություն՝ նրանց սոցիալական, քաղաքական, կրթական կամ տնտեսական տարբերություններից անկախ:

Անձնական կյանքի գաղտնիություն

Տվյալներին և փաստական ապացույցներին զուգահեռ կարևոր պատկերացումներ կարող են հաղորդել անհատների անձնական, վերապրած փորձառությունները: Անհատները կարող են գտնել, որ իրենց անձնական փորձառությունները կարևոր են հանրային բանավեճի համար և ցանկանան կիսվել դրանցով ուրիշների հետ: Կարևոր է, որ բանավեճն ապահովի դա անելու «անվտանգ տարածք»: Կարող է անհրաժեշտ լինի պաշտպանել մասնակիցների անձնական կյանքի գաղտնիությունը, օրինակ՝ մեդիայի ոտնձգություններից, ապահովելով նրանց անանունությունը: Ամեն դեպքում, դա կարող է լինել անձնական տվյալների պաշտպանության օրենքի պահանջ:

Որոշ անհատների մասնակցությունը կարող է դարձնել նրանց խոցելի, ենթարկի խարանման, խտրականության կամ նույնիսկ ուղղակի վնաս հասցնի: Առանձնակի կարևոր է հաշվի առնել այս հանգամանքը, երբ միջոցառմանը մասնակցում են երեխաներ և երիտասարդներ: Կենսաբժշկական բազմաթիվ նվաճումներ բարձրացնում են խնդիրներ, որոնք անհամաչափ ազդեցություն ունեն տարբեր սեռի, տարիքի և առողջական վիճակ կամ հաշմանդամություն ունեցող անձանց վրա, ինչն առաջացնում է արմատական անհավասարությունների խորացման վտանգ, եթե խոցելի խմբերը չունենան արդար հիմքերով մասնակցել այդ խնդիրների քննարկմանը:

Երբ առաջարկվող միջամտության ազդակիր առանձին խմբերի կամ անհատների մասնակցությունը կարևոր է, սակայն ուղղակի ներգրավումը վտանգում է նրանց անձնական կյանքի գաղտնիությունը՝ հարկ է դիտարկել մասնակցության այլընտրանքային միջոցներ: Օրինակ, դա հնարավոր է կազմակերպել տեսահղման, վստահելի միջնորդների կամ գրավոր վկայությունների միջոցով: Եթե հատուկ ազդակիր անհատների մասնակցությունը պահանջում է անանունություն, ապա գործընթացի օրինականությունը հնարավոր է ապահովել անկախ երաշխավորության միջոցով:

- Անհրաժեշտ է հաշվի առնել հնարավոր հակասությունը թափանցիկության կարևորության և հանրային բանավեճին մասնակցող անհատների անձնական կյանքի գաղտնիությունը պաշտպանելու միջև:

- Միգուցե անհրաժեշտ լինի տարբեր խմբերի ներգրավել միամյանցից առանձին, եթե համակարգային կամ պայմանական պատճառներից ելնելով որոշ ենթախմբեր չեն կարող մասնակցել մյուսների հետ հավասար հիմքերով:

- «Chatham House Rule» (ստացված տեղեկությունները կարող են հետագայում տարածվել, պայմանով որ տեղեկատվություն տրամադրողի կամ այլ մասնակիցների ինքնությունը կմնա գաղտնի) նման կանոնը կարող է հնարավորություն տալ հանրային բանավեճի մասնակիցներին կարծիքներ արտահայտել չվախենալով բացասական հետևանքներից: Նման կանոն կիրառելը պետք է ի սկզբանե համաձայնեցվի և պատշաճ պահպանվի:

Շահերի թափանցիկություն

Արդարության կարևոր բաղադրիչ է թափանցիկությունը: Նախաձեռնողները և մասնակիցները պետք է հավասարապես ապահովեն հանրային բանավեճը հովանավորելու կամ դրան մասնակցելու իրենց նպատակների և շահերի, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությունը: Նախաձեռնությունների հովանավորների դեպքում՝ հաշվի առնելով իրենց շահերը, հաճախ նպատակահարմար է զերծ մնալ հանրային բանավեճի միջոցառումները վարելուց կամ իրենց անունից վարելու պարտականությունը վստահել անկախ մասնագետներին:

Վերաբերելի շահերը չեն սահմանափակվում միայն հանրային շահերով: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել և հանրայնացնել աձնական շահերը, քանի որ մասնակիցների, փորձագետների կամ շահակիրների թաքնված շահերը կարող են խարխլել վստահությունը և կասկածի տակ դնել հանրային բանավեճի արդյունքների արժանահավատությունը: Քննարկվող հարցում շահեր ունենալը, սակայն, չպետք է խոչընդոտի մասնակցությանը: Ճիշտ հակառակը՝ դա մասնակցության պատճառ է: Սակայն հանրային շահերին վերաբերվող հարցերում այն չպետք է ենթադրի արտոնյալ ազդեցություն:

- Նախաձեռնողները, փորձագետները, հովանավորները և մասնակիցներները պետք է հայտնեն նախաձեռնության կամ դրա արդյունքի հետ փոխկապակցված՝ իրենց բոլոր շահերի մասին: Սա հնարավոր է անել, երբ առաջին անգամ ներկայանում են մյուսներին կամ, փորձագետների դեպքում, շահերի մասին գրավոր հայտարարության միջոցով:

Անաչառություն

Կարևոր է, որ մարդիկ անկեղծորեն ու բարեխղճորեն մասնակցեն հանրային բանավեճերին և չփորձեն մանիպուլացնել դրանք հանուն մասնավոր շահերի: Սա առանձնակի կարևոր է, երբ գիտական փաստերի և ապացույցների հարցը հիմնվում է հանրային բանավեճի վրա և օգտագործվում է փորձագետի վկայությունը: Թյուրըմբռնումներից խուսափելու համար ցանկալի է օգտագործել պարզ, ոչ տեխնիկական և ոչ երկիմաստ լեզու: Փորձագիտական ապացույցներ ներկայացնողները պետք է բացատրեն տեխնիկական գիտելիքի բոլոր անորոշությունները և սահմանափակումները: Աղբյուրների հարցում կարևոր է անկեղծությունը: Փորձագետներին հարկ է հիշեցնել գնահատականներից զերծ մնալու և իրենց անձնական կարծիքները չհայտնելու անհրաժեշտության մասին:

- Կարևոր է ապահովել, որ կարևոր ապացույցներն արժանանան պատշաճ ուշադրության և անաչառ ներկայացվի փորձագիտական կարծիքի հակակշիռը:
- Փորձագետներին պետք է խնդրել թափանցիկ ներկայացնել վտանգները և հետևանքները, ինչպես նաև գիտելիքի և կանխատեսման սահմանները:
- Երբեմն փորձագետների խաչաձև քննությունը կամ իրարամերժ տեսակետեր ունեցող փորձագետների մասնակցությունը կարող ապահովել հավասարակշռություն այնտեղ, ուր քիչ հավանական է անաչառությունը:

V. ԻՄԱՍՏԱԼԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ

Հանրային բանավեճն ազդեցիկ լինելու համար պետք է ֆունկցիոնալ կապ ապահովի հանրային բանավեճի և առողջապահության ու կենսաբժշկության ոլորտների կառավարման միջև, ինչը հնարավորություն կտա հանրության անդամներին ժողովրդավարական հասարակությանը հարիր եղանակով ազդեցություն ունենալ իրենց ընդհանուր ապագայի վրա:

Նախորդ բաժինը վերաբերվում է հանրային բանավեճի բուն միջոցառման որակին, իսկ այս բաժինն անդրադառնում է դրա հետագա ազդեցություններին և դրանց օպտիմալացմանը: Հետագա ազդեցությունները երկու տեսակի են. Ուղղակի հետևանքներ (օրինակ՝ առաջացնել նոր քաղաքականությունների անհրաժեշտություն) և բարձրացնել հասարակության՝ որպես սոցիալական մարմին բարեվարքության մակարդակը և, հետևաբար, ժողովրդավարական գործընթացների միջոցով կառավարմանը մասնակցելու հանրության կարողությունը:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Հանրային բանավեճի արդյունավետության համար կարևոր է, որ մասնակիցները և հանրային բանավեճի միջոցառումներ նախաձեռնողները հավասարապես նվիրված լինեն գործընթացին: Նախաձեռնողի մասով այդ հանձնառությունը ցուցադրվում է հանրային բանավեճին ցուցաբերվող աջակցությամբ և դրա արդյունքները հաշվի առնելով: Ամենասկզբից անհրաժեշտ է ապահովել քննարկվող խնդիրների և նախաձեռնության միջև ակնկալվող կապի, հնարավոր (կամ անհնար) այլ միջոցառումների, գործընթացից մասնակիցների և լայն հասարակության սպասելիքների թափանցիկություն: Իրենց հերթին մասնակիցները, հավանաբար, ավելի նվիրված կլինեն գործընթացին, եթե իմանան, որ իրենց մասնակցությունը կարևոր է:

Հանրային բանավեճ նախաձեռնողները կարող են օգտվել հանրային բանավեճի այլ մասնակիցների հետ դեմ առ դեմ հանդիպումներից: Մասնակիցներին կարելի է, օրինակ, խնդրել նախաձեռնողներին ներկայացնել քննարկումների արդյունքները և քննարկված հարցերի հետագա ընթացքի մասին իրենց առաջարկությունները:

- Հանրային բանավեճի միջոցառումներ նախաձեռնողը կարող է ցուցադրել իր հանձնառությունը՝ բացահայտ սահմանելով ինչն է բաց քննարկման համար (և ինչը՝ ոչ) և ինչ ազդեցություն է ակնկալվում հանրային բանավեճից:
- Մասնակիցների և նախաձեռնողների, օրինակ՝ հանրային խմբերի և իշխանությունների միջև փոխըմբռնումը և փոխադարձ վստահությունը հնարավոր է բարելավել դեմ առ դեմ հանդիպումների միջոցով:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած ժողովրդավարական պետություն անուղղակի պարտավորություն է կրում հաշվի առնել իր հասարակության շահերը և ցուցադրել ինչպես է դա արել՝ հաշիվ տալով իր որոշումների համար: Հանրային բանավեճի միջոցառումներ նախաձեռնելու համար պատասխանատուները պետք է տեղեկացնեն հանրային բանավեճի արդյունքում իրենց կայացրած եզրակացությունների մասին և նշեն ինչպես են հաշվի առել հանրային խմբերի տեսակետերը, օրինակ, հետագայում մշակված քա-

ղաքականության մեջ և/կամ այլ փոխկապակցված որոշումներում կամ գործընթացներում: Այս տեղեկությունները կարելի է փոխանցել, օրինակ, կայքերի կամ հանրային մեդիայի միջոցով:

- Հաշվետվողականությունը հնարավոր է ցուցադրել հրապարակելով տեղեկատվություն այն մասին ինչպես է հանրային բանավեճը ազդել որոշումների կամ գործելակերպի վրա:
- Հանրային բանավեճի մասնակիցների հետ հետադարձ կապը կարող է խրախուսել հետագա մասնակցությունը և քանդել հանրային խմբերի և իշխանությունների միջև արգելքները:
- Հանրային բանավեճի միջոցառման մասին տեղեկատվության հրապարակումն ու տարածումը, օրինակ, ընթացքի և արդյունքի ամփոփ նկարագրության ձևով կարող է օգնել երաշխավորել ավելի խորը ազդեցություն և դնել հետագա բանավեճի հիմքեր:

Պորտուգալիա, 2017թ.: Կյանքի վերջի մասին հանրային բանավեճի արդյունքում հրատարակվեց «Deciding on the end of life – cycle of debates» գիրքը, որը կազմված էր համաժողովների քաղվածքներից և ընդգրկում էր հանրության կարծիքները: Գրքում կար նաև տերմինաբանական բառարան, եզրակացություն՝ բանավեճում հնչեցրած հիմնական հարցերով և փաստարկներով, ինչպես նաև համեմատական օրենսդրության կարճ ուսումնասիրություն:

Ֆրանսիա, 2018թ.: Ավարտից հետո Էթիկայի հարցերով ազգային խորհրդակցական կոմիտեն մանրակրկիտ վերլուծեց «États Généraux» և 2018 թվականի հունիսին հրապարակեց ամփոփիչ զեկույց, ուր լրացուցիչ ներկայացված են բանավեճի արդյունքում Քաղաքացիների կոմիտեի ձևավորած կարծիքները:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Անհրաժեշտ է գնահատել հանրային բանավեճի միջոցառումների գործընթացը և արդյունքը: Հանրային բանավեճի միջոցառումները նախաձեռնողների բարեխճության հանդեպ վստահությունը կարելի է հավաս-

տել ներգրավելով անկախ և հմուտ գնահատող, ում առջև բաց է ամբողջ գործընթացը: Իդեալական դեպքում, գնահատողը պետք է նշանակվի պլանավորման/մեկնարկային փուլում: Ծայրահեղ դեպքում, բանավեճը նախաձեռնողները կարող են հրապարակել իրենց մտորումները միջոցառումների մասին, ինչը հնարավորություն կտա մյուսներին ուսումնասիրել և քննարկել դրանք:

Գնահատումը պետք է գնահատի միջոցառման արդյունավետությունը (տես վերը՝ «Արդյունավետ հանրային բանավեճ» բաժինը), ինչպես նաև որքանով է այն բավարարել մասնակիցների և նախաձեռնողների նպատակները և ակնկալիքները, այդ թվում՝ անդրադառնալ հանրային մասնակցության արժեքավորությանը:

Գնահատման արդյունքը պետք է հանրայնացվի թափանցիկության սկզբունքի համաձայն, ինչը հնարավորություն կտա ոչ միայն մասնակիցներին, այլև բոլոր շահակիրներին տեղեկանալ միջոցառման մասին, խրախուսել հետագա հանրային բանավեճը և ուղենիշ սահմանել հետագա գործողությունների համար:

- Ամենասկզբից գնահատման չափորոշիչներ, միջոցառումներ և շրջանակ սահմանելը և, հնարավորության սահմաններում, վաղ փուլում դրանք մասնակիցների հետ համաձայնեցնելը խթանում են վստահությունը հանրային բանավեճի գործընթացի անաչառության հանդեպ:
- Հանրային բանավեճի գործընթացի գնահատմանը կարող են աջակցել մասնակիցների կարծիքները (որոնք, օրինակ, հավաքվում են հանարյին միջոցառման ընթացքում հարցաշարի միջոցով կամ պատշաճ հարցերը գործընթացի մաս դարձնելու միջոցով):
- Ելնելով գործընթացի էությունից գնահատողները կարող են իրենց եզրակացությունները հիմնավորելու համար որակական հարցազրույցներ իրականացնել մասնակիցների հետ:

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ

Իդեալական դեպքում հանրային բանավեճը պետք է իր ներդրումն ունենա սոցիալապես կառուցողական դիսկուրսում, որն արտացոլված է կառավարությունների և իշխանությունների որոշումներում և մշակած քաղաքականություններում: Արդյունավետ բանավեճի փորձը կարող է օգնել խթանել հանրության քաղաքական ներգրավվածությունը և դրական սոցիալական փոխգործակցությունը:

Ավելին, ներգրավման գործընթացի միջոցով մասնակիցները կարող են բացահայտել, որ մասնակցելով հանրային բանավեճի միջոցառումներին որոշ հարցերի վերաբերյալ ձևավորել են զգալի փորձագիտություն: Օրինակ, հանրային բանավեճի միջոցառումներին մասնակցելու արդյունքում ստեղծած ցանցերը և կապերը կարող են խթանել մասնակցությունը հետագա նախաձեռնություններին:

Հանրային բանավեճի շարունակականությունն արժեքավոր է քաղաքական որոշումների հետևանքները մշտադիտարկելու և գնահատելու, հանրային ոլորտը աշխուժացնելու և ապագա միջոցառումներին մասնակցելու կարողությունը և վստահությունն ամրապնդելու համար:

- Որոշակի համատեքստում հանրային բանավեճը կարող է լրացուցիչ հնարավորություններ ստեղծել մասնակիցների շարունակական ներգրավման համար:
- Մարդկանց, ինչպես նաև հանրության խմբերի, համապատասխան փորձագետների և մասնագետների միջև ավանդական կապեր ստեղծելուց բացի հանրային բանավեճը կարող է նաև ստեղծել շոշափելի սոցիալական ռեսուրսներ՝ միջոցառումների արձանագրությունների և ելակետային փաստաթղթերի տեսքով, որոնց վրա կարող է հիմնվել հետագա բանավեճը:

Պորտուգալիա, 2017թ.: Կյանքի վերջի մասին բանավեճի արդյունքում պորտուգալական օրենսդրությունը չփոխվեց, սակայն գրքի տեսքով լույս տեսած փաստաթղթերը ծառայում են այս թեմայով հետագա բանավեճերի հիմք և ելակետ:

Ֆրանսիա, 2018թ.: Էթիկայի հարցերով ֆրանսիական ազգային խորհրդակցական կոմիտեն (CCNE) 2018 թվականի սեպտեմբերին հրապարակած թիվ 129 կարծիքում առաջարկում է, որ կենսաէթիկայի մասին ֆրանսիական օրենքը ստանա կենսաէթիկական հարցերի շուրջ շարունակական բանավեճի աջակցությունը, իսկ բանավեճը չլինի միանգամյա միջոցառում: Նպատակն է խթանել այս հարցերի շուրջ բանավեճի մշակույթը: Այս համատեքստում CCNE-ի զեկույցը, ամենայն հավանականությամբ, կարևոր ելակետ կծառայի ապագայի համար:

Ռուսաստանի Դաշնություն, 2016թ.: «Մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունների հանրային քննարկումը հաստատեց, որ օրգանների նվիրաբերումը շատ զգայուն հարց է ռուսական հասարակության համար: Առաջարկվող փոփոխություններն արժանացան հանրության լուրջ քննադատության: Քաղաքացիական ամենակարևոր դասերից մեկն այն էր, որ բանավեճն արդյունավետ կլինի միայն այն դեպքում, եթե մարդիկ լիարժեք հասկանան թեման, հատկապես, երբ այն առաջացնում է մարդու իրավունքների հետ կապված խնդիրներ:

ԿԵՆՍԱԷԹԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ

Այն հասարակությունը, որտեղ կրթության և հանրային մասնակցության հնարավորությունների միջոցով ստեղծված են ժողովրդավարական մասնակցության սովորույթներ, ավելի լավ պատրաստված կլինի հանրությանը՝ կենսաբանական և կենսաբժշկական նվաճումների կառավարման հարցերին ներգրավելու համար:

Հանրային բանավեճին աջակցելու նպատակով որոշակի պատասխանատվությունների վերապահումը հաստատություններին՝ էթիկայի հարցերով ազգային կոմիտեներին, անկախ կազմակերպություններին, պետական կառավարման մարմիններին, կարգավորող մարմիններին կամ խորհրդատվական կոմիտեներին, կարող է օգնել հանրային բանավեճը խթանելու, կենսաբժշկության նվաճումների ոլորտում հանրային ներգրավման մակարդակը պահպանելու և գործնականում հանրային բանավեճին աջակցող ինստիտուցիոնալ մեխանիզմներ ապահովելու հարցում:

Այս շարունակական գործընթացը կարող է կամրջել բացը սոցիալական նորմերի, որոնք հազվադեպ են քննության ենթարկվում, և կենսաբանական և կենսաբժշկական նոր նվաճումների առնչությամբ առաջացող հրատապ քաղաքական հարցերը հասցեագրելու անհրաժեշտության միջև:

Վերոնշյալ հաստատությունները կարող են խրախուսել հանրային բանավեճի և հանրային մասնակցության մշակույթը՝ ուշադիր լինելով հասարակության ներսում վերաբերելի դիսկուրսի օջախներին, դրանց հետ

համագործակցությանը բաց լինելով, այդ բանավեճերի միջև փոխադարձ կապը, ինչպես նաև դրանց կապը համապատասխան շահակիրների և քաղաքականություն մշակողների միջև կազմակերպելով:

Հանրային բանավեճի մշակույթում այս հաստատությունները կարող են ողջունել և օգուտ քաղել «չհրավիրված» և «ներքևից-վերև» միջամտություններից, ինչպես նաև հանրային բանավեճի պլանավորած միջոցառումներից:

- Էթիկայի հարցերի ազգային կոմիտեները կամ նմանատիպ մարմինները, որոնք ապահովված են համարժեք ռեսուրսներով և ունեն քաղաքական աջակցություն կարող են կարևոր դեր խաղալ հանրային բանավեճը խթանելու, անհրաժեշտության դեպքում հանրային բանավեճի միջոցառումներ իրականացնելու և հանրային բանավեճի ազդեցությունն երաշխավորելու գործում:

Ֆրանսիա, 2018թ.: «États Généraux»-ի դեպքում հանրության հաջողված մասնակցության բանալին Էթիկայի հարցերով ֆրանսիական ազգային խորհրդակցական կոմիտեին (CCNE) տրված՝ հանրային բանավեճ խրախուսելու և իր կարծիքով անհրաժեշտ միջոցառումներ կազմակերպելու լիազորությունն էր: CCNE-ին այս լայն լիազորությունը տրվել էր 2011թվականին, իսկ կենսաէթիկայի մասին օրենքի վերանայման համար ֆինանսավորումը հատկացվել էր 2018 թվականին:

Դանիա, 2008թ.: Դանիայի Տեխնոլոգիաների խորհուրդը նախկինում ֆինանսավորում էր Դանիայի կառավարությունը, իսկ հիմա դա անկախ հաստատություն է, որը այլևս չի ստանում պետական միջոցներ: Կարևոր համարվեց առանձնացնել այն կառավարությունից, բայց խորհուրդը չստացավ օրենքով սահմանված լիազորություն և գործում է պատվիրակման հիմքով:

Կիպրոս, 2018թ.: Կենսաէթիկայի հարցերով Կիպրոսի ազգային կոմիտեն լիազորված է խրախուսել հանրային բանավեճը՝ ամեն տարի հանրային բանավեճ կազմակերպելով ընտրված թեմայի շուրջ:

VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օվիեդոյի կոնվենցիայի 28-րդ հոդվածը («հանրային բանավեճի» մասին) մշակվել է այն համոզմամբ, որ կենսաբժշկության ոլորտի զարգացումներին հետամուտ լինելը և դրանք իրականացնելն ամբողջ հասարակության, այլ ոչ թե միայն փորձագետների կամ իշխանությունների խնդիրն են:

Հանրության շահերի և տեսակետերի հանդեպ հարգանք ցուցաբերելը ժողովրդավարական հասարակության անկյունաքար է: Կենսաբժշկության ոլորտի նվաճումներին առնչվող հարցերը հաճախ բարդ են և կարող են հարցականի տակ դնել այն պատկերացումը, որ սոցիալական կյանքը կազմակերպված է էթիկական արժեքների, չափանիշների և սկզբունքների շուրջ: Այս հարցերի պատասխանը կարող է արմատական կերպով ձևավորել ապագայի հասարակությունները:

Ժամանակակից աշխարհում, որտեղ գիտելիքը, մարդիկ և տեխնոլոգիաներն անարգել հատում են ազգային սահմանները՝ նման զարգացումներն ազդում են բոլոր անդամ պետությունների, այլ ոչ թե առանձին

վերցված անդամ պետության հասարակության վրա: Հետևաբար, կենսաբժշկության գլոբալ ուղղության վրա ազդեցություն ունեցող հարցերի շուրջ պետությունները պարտավոր են գործել միասին՝ ընդհանուր ռազմավարություն գտնելու համար: Այդ աշխատանքում նրանք կարիք ունեն տեղեկանալ քաղաքացիների կարծիքների մասին, որոնք իրենց են ներկայացվում հանրային հարթակում տեղի ունեցող բաց բանավեճի միջոցով:

Կարևոր է գիտակցել, որ հանրային բանավեճը որքան տեսակետերի մասին տեղեկանալու և դրանք ձևավորելու, նույնքան էլ այդ տեսակետերը բացահայտելու և հստակեցնելու մասին է: Հանրային բանավեճի առանձին միջոցառում կամ հանրային բանավեճի գործընթացների համադրություն չեն կարող ապահովել կենսաբժշկության և կենսաէթիկայի ոլորտների էթիկական կառավարման խնդրի լիարժեք լուծում: Հանրային բանավեճը գործընթացի արժեքավոր, բայց ո՛չ բավարար, ո՛չ էլ եզրափակիչ մաս է:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԵՆՍԱԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ (DH-BIO)

ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՆ ԱՌՆՉՎՈՂ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԲԵԼԱՌՈՒՍ՝ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ (ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ) (2018)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

Բելառուսի առողջապահության նախարարությունը և Կենսաէթիկայի կոմիտեն, Կենսաէթիկայի հանրապետական կենտրոնի մասնակցությամբ, 2018 թվականի սեպտեմբերին նախաձեռնեցին ժամանակակից առողջապահական համակարգում բժշկի և պացիենտի իրավունքների և պարտականությունների (իրավական և էթիկական) շուրջ բանավեճ:

Բանավեճի հիմնական նպատակներն էին քննարկել բժշկական պրակտիկան բարելավելու, զանազան հիվանդանոցների և բժշկական կենտրոնների փորձը փոխանակելու հարցերը, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարել նոր օրենքներում, այդ թվում՝ «Բժշկական սպասարկման, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման և օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաների մասին» օրենքում:

Բանավեճի անհրաժեշտությունը նկարագրվել էր հետևյալ կերպ. Բելառուսում ստեղծվել է նոր իրավիճակ, երբ պացիենտները պահանջում են լրացուցիչ խնամք և ակնկալում, որ բժիշկները կընդունեն իրենց ինքնավարությունը, եթե պացիենտները չգիտեն իրենց իրավունքները և հմուտ մասնագիտական հաղորդակցման կարիք ունեն: Ձևավորվել է բժիշկների նոր սերունդ, ում մասնագիտական հմտությունները շատ ավելի տեխնիկական են, քան հաղորդակցական և էթիկական: Այս բժիշկները պետք է իմանան օրենքները, էթիկական պրակտիկայի տարրերը և ինչպես բուժել իրենց պացիենտներին որպես անձ, ինչը պահանջում է ամբողջական մոտեցում նրանց առողջական խնդիրներին: Այս պատճառներով էլ բանավեճի մասնակից պետք է լիներ ամբողջ հասարակությունը:

Ենթադրվում էր, որ բանավեճը գաղափարներ կապահովի «Բժշկական սպասարկման մասին» օրենքի հետագա փոփոխությունների համար:

Նպատակ

Բարելավել առողջապահության ոլորտի՝ օրգանների և հյուսվածքների փոխպատվաստմանը և օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաների կիրառմանն առնչվող բժշկական պրակտիկան, ինչպես նաև այս կարևոր հարցերի լուծման նպատակով բարելավել հասարակության ըն-

կալումներն ու համագործակցության մակարդակը:

Խնդիրը

Բանավեճն անդրադարձավ հետևյալ թեմաներին՝

- գիտակցված համաձայնության նշանակությունը բժշկական պրակտիկայում,
- պացիենտի՝ բժշկին ընտրելու իր իրավունքների մասին տեղեկացվածության աստիճանը,
- ինչպես պաշտպանել բժշկական գաղտնիքը առողջապահության էլեկտրական համակարգերում,
- ծանր ախտորոշման մասին բոլոր տեսակի պացիենտներին տեղեկացնելու բժշկի պարտականության սահմանը,
- ինչպես կազմակերպել իրենց ազգականների խնամքին մասնակցելու ընտանիքի անդամների իրավունքի իրացումը, եթե պացիենտը գտնվում է ինտենսիվ թերապիայի բաժանմունքում:

Մեթոդ

Հանրային բանավեճը կազմակերպելու ընթացքում օգտագործվել են տարբեր մեթոդներ, այդ թվում՝

- ընտրված թեմաների քննարկում զանգվածային լրատվամիջոցներում,
- բուժմասնագետների և բժշկական իրավունքի իրավագետների՝ համաժողովում բանավեճի հիմնական թեմաների ընկալման ուսումնասիրում,
- գործնական համաժողով,
- բաց դասախոսություն՝ ազատ քննարկումներով,
- հիվանդանոցի էթիկայի կոմիտեի դերը՝ որպես բուժման ընթացքում էթիկական խնդիրները լուծելու գործիք:

Զանգվածային լրատվամիջոցներում ներկայացվեց իրավական և էթիկական ոլորտներում բժիշկների և պացիենտների իրավունքների ու պարտականությունների մասին քննարկում: Բանավեճին մասնակցեցին բժիշկներ, իրավաբաններ, առողջապահության կազմակերպիչներ, կենսաէթիկայի մասնագետներ, գիտնականներ և պացիենտների շահերի պաշտպանության կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննար-

կումը լուսաբանվեց տարբեր հոդվածներում, կլոր սեղանների ընթացքում, զանգվածային լրատվամիջոցներում և գիտական ամսագրերում:

Կենսաէթիկայի հանրապետական կոմիտեն, Կենսաէթիկայի հանրապետական կենտրոնը և «ՅՈՒՐՍՊԵԿՏՐ» իրավաբանական ընկերության աշխատակիցները սկսեցին նախատրաստել «Ժամանակակից առողջապահական համակարգում բժշկի և պացիենտների իրավունքների ապահովման իրավական և էթիկական խնդիրները» խորագրով գործնական համաժողով: Նախքան համաժողովն իրականացվեց բժշիկների և բժշկական իրավունքի իրավագետների հարցում, որի նպատակն էր բացահայտել համաժողովի ընթացքում քննարկելիք հիմնական հարցերը: Համաժողովը, որը տեղի ունեցավ 2019 թվականի մարտ ամսին, հյուրընկալեցին Բելառուսի առողջապահության նախարարությունը, Բելառուսի հետբուհական կրթության բժշկական ակադեմիան և «ՅՈՒՐՍՊԵԿՏՐ»-ը: Համաժողովի ընթացքում վերոնշյալ խնդիրների քննարկումներին մասնակցեցին բժշկական և իրավաբանական մասնագիտությունները ներկայացնող տարբեր խոսնակներ: Մասնակիցների շարքում էին նաև պացիենտների շահերի պաշտպանության կազմակերպություններ:

Հասարակության անդամների համար Ուղղափառ եկեղեցու կազմակերպած ծրագրի թեման էր «Բժշկի էթիկական պարտականություն»-ը, որն ընդգրկում էր՝

- հասարակության համար ազատ մուտքով դասախոսություն, որը 2019 թվականի հուլիսին Եկեղեցու ճեմարանի շենքում կարդաց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս,
- մամլո ասուլիս՝ «Նոր մարտիրոսների սխրագործությունը՝ բժշկի էթիկական պարտականության պրիզմայի միջով» խորագրով:

Ազդեցություն կամ կարևոր առանձնահատկություններ

Հանրապետական օրենքների («Բուժսպասարկման մասին», «Օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման և օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաների մասին») նոր նախագծերը մշակելու ընթացքում աշխատանքային խմբերը հաշվի են առել հիմնական գաղափարները, բանավիճած հարցերը և առաջարկված լուծումները: Այս օրենքները լրացվեցին հոդվածներով, որոնք 2019 թվականի ամռանը քննարկեց և ընդունեց Բելառուսի Հանրապետության Ազգային Ժողովը:

Հիմնական էթիկական խնդիրներ՝

- հստակեցնել հիմնական հասկացությունները (գիտակցված համաձայնություն և այլն),
- ինչպես բավարարել էլեկտրոնային տվյալների շտեմարաններ իր տվյալները չմուտքագրելու պացիենտի պահանջը (մուտքագրումն առողջապահական համակարգի պահանջ է),
- Կենսաէթիկայի ազգային կոմիտեի նպատակներից մեկը սահմանել բժշկական էթիկայի տեղական հանձնաժողովների գործունեության համակարգումը,
- բժշկի պատշաճ վարքագիծն անհետաձգելի դեպքերում, երբ հարցը վերաբերում է պացիենտի և նրա ազգականների գիտակցված համաձայնությանը և այլն:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Աշխատանքային գործընթացը հիմնվում էր Եվրոպայի խորհրդի «Հանրային բանավեճի մասին ուղեցույցի նախագծի» հիմնական սահմանումների վրա: Բացի այդ, մեր կարգախոսն էր. «Մենք կարող ենք ասել, որ հանրային բանավեճը, հետևաբար, բաց բանավեճ է հանրության հետ և հանրության համար»:

Զանազան հանրային բանավեճերի կազմակերպիչներ ներշնչվել են Ուղեցույցի նախագծի գաղափարով և իրենց գործունեության մեջ կողմնորոշվել դրանում տրված ուղղությամբ:

ԿԻՊՐՈՍ՝ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՇԱԲԱԹ (2018Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

Իրազեկման շաբաթ Կիպրոսում կազմակերպվում է տարին մեկ: 2018 թվականի թեման Ծերացման կենսաէթիկակական կողմերն էին, որի մեկնարկը համընկավ Կիպրոսի Հանրապետության նախագահի, Կիպրոսի առողջապահության նախարարի և Կիպրոսի աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարի բարձր հովանու ներքո կազմակերպված մամլո ասուլիսի հետ:

Նպատակ

Իրազեկման շաբաթն ունի երկու նպատակ. (i) տեղեկացնել հանրությանը կենսաէթիկական զարգացումների մասին և (ii) տեղեկացնել քաղա-

քականություն մշակողներին մարտահրավերների և հանրային բանավեճի արդյունքում բարձրացված կառավարման մեխանիզմների մասին:

Մեթոդ

Իրազեկման շաբաթը 2018 թվականին ուներ միջոցառումների լայն շրջանակ, այդ թվում՝

- ծերության մասին լուսանկարների ցուցահանդես,
- կլոր սեղան քննարկում Ներկայացուցիչների պալատի նախագահի և i) Մարդու իրավունքների, ii) Առողջապահության հարցերի, և iii) Իրավական հարցերի խորհրդարանական հանձնաժողովների անդամների հետ,
- կլոր սեղան քննարկում Անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարի և Վարչարարության և մարդու իրավունքների հանձնակատարի (օմբուդսմենի) հետ,
- սոցիալական ներառման և խոցելիության թեմայով սեմինար,
- կլոր սեղան քննարկում մահվան և կորստի թեմայով,
- աշխատաժողով «Որոշումների կայացում էթիկապես երկիմաստ իրավիճակներում. Կյանքի վերջը» թեմայով,
- աշխատաժողով «Էթիկան և բժշկական էթիկան տարեցների սպասարկման ամենօրյա բժշկական պրակտիկայում» թեմայով,
- Լրագրական էթիկայի կանոնագիրք. Լրագրողների և զանգվածային լրատվամիջոցների՝ տարեցների հարցերի լուսաբանման վաքականոն,
- աշխատաժողով «Էթիկան և էթիկական խնդիրները տարեցների սպասարկման ատամնաբուժական պրակտիկայում» թեմայով,
- սեմինար «Էթիկան և դեոնթոլոգիան դեղագործության մեջ տարեցների համար» թեմայով,
- սեմինար «Կախվածությունը հաղթահարելու թերապևտիկ տարբերակներ Կիպրոսում» թեմայով,
- բժշկական համալսարանների ուսանողներին ուղղված դասախոսություններ. Էթիկական պարտավորություններ բժշկության մեջ՝ սովորելով անցյալից և պատրաստվելով ապագային, Ի՞նչն է փոխվում վերակենդանացման էթիկայում, Վիրահատական նոր մեթոդների կենսաէթիկան,

- աշխատաժողով «Դեոնթոլոգիան և էթիկան կրթական հետազոտություններում՝ ուսանող մասնակիցների օրինակը» խորագրով,
- բժշկական համալսարանների ուսանողների միջև բանավեճեր հետևյալ թեմաներով. (i) Կյանքի վերջի խնդիրների բարոյական, քաղաքական և սոցիալական հետևանքները, (ii) Տարեցների նկատմամբ սեռական բռնության բժշկական և իրավական հարցերը,
- համաժողով «Միջսերնդային ծրագրեր. Պահել տարեցներին երիտասարդ, դարձնել երիտասարդներին ավելի իմաստուն» թեմայով:

Կիպրոսի կենսաէթիկայի ազգային կոմիտեն (CNBC) կազմակերպեց հանրային կլոր սեղան քննարկում «Ծերածող և տարեց մարդկանց մասին իրազեկման բարձրացում» խորագրով: Մասնակցում էին փորձագետներ, քաղաքականություն մշակողներ և համապատասխան շահակիրներ, որոնց թվում էր Կիպրոսի երեցների խորհրդարանը և Կիպրոսի տարեցների դիտարանը (ՀԿ): Լսարանը՝ լայն հասարակությունն էր: Քննարկվեցին երկու գլխավոր հարցեր. (i) Խնամքի մակարդակը ծերանոցներում և Սոցիալական պաշտպանության վարչության (Կիպրոսի աշխատանքի, սոցիալական պաշտպանության և սոցիալական ապահովության նախարարություն) ստուգումների որակը, (ii) բնակության պայմանները Կիպրոսի ծերանոցներում (մասնավոր և պետական): Բանավեճը, որին մասնակցեց բաց լսարանը, բացահայտեց ծերանոցներում առկա հետևյալ խնդիրները՝

- աշխատակազմը գիշերվա ընթացքում կանոնավոր ստուգայցեր չի կատարում, ինչը, հաճախ, պայմանավորված է աշխատակիցների պակասով,
- ծերանոցներում որակավորված խնամատուների պակաս,
- բռնությունից և վատ վերաբերմունքից տարեցներին ավելի արդյունավետ և համարժեք պաշտպանելու անհրաժեշտություն,
- ստուգումները պետք է իրականացնի կոմպետենտ մարմին,
- բնակիչներից ստացված բողոքների ավելի արդյունավետ քննություն:

Կլոր սեղանը եզրակացրեց, որ անհրաժեշտ է փոխել քաղաքականությունը: Անմիջապես կարգադրություններ տրվեցին փոփոխություններ

կատարել Կիպրոսի ծերանոցներում (թե՛ պետական, թե՛ մասնավոր) խնամքի որակը կարգավորող գործող օրենսդրության մեջ:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Հանրային բանավեճը կարող է լինել քաղաքականություն մշակելու և որոշումներ ընդունելու մարտահրավերների մասին հանրությանը տեղեկացնելու արժեքավոր գործիք: Մեթոդների բազմազանությունը ծառայեց գործընթացում հնարավորինս մեծ թվով թեմաներ ընդգրկելու նպատակին: Միջոցառումներն ուղղված էին շահակիրների լայն շրջանակի (լայն հասարակություն, ավագ դպրոցի աշակերտներ, թոշակառուներ, բժշկական համալսարանների ուսանողներ, գիտահետազոտական հանրություն, բուժմասնագետներ), որոնք լավ ընդունվեցին և լայնորեն լուսաբանվեցին հեռուստատեսությամբ, տպագիր մամուլում և էլեկտրոնային մեդիայում:

Կարևոր գործոն էր բանավեճի բաց լինելը, ինչը հնարավորություն տվեց առկա մարտահրավերների մասին լավ տեղեկացված անհատներին ազատ կիսվել տեսակետներով քաղաքականություն մշակողների ներկայությամբ: Եզրակացությունները ստիպեցին կառավարությանը վերանայել տարեցներին վերաբերվող օրենսդրությունը: Մասնավորապես, տարեցների խնամքի մասին բանավեճն ուղղակի ազդեցություն ունեցավ կառավարման վրա: CNBC-ին տրվեց պետական և մասնավոր ծերանոցներում քննություն իրականացնելու նախարարական մանդատ, որի նպատակն էր վերանայել գործող օրենսդրությունը, օրինակ, շուրջօրյա կադրային համալրում ապահովելու համար: Օրենսդրությունը փոփոխության է ենթարկվում և այն ներկայացվելու է Խորհրդարանի վավերացմանը:

Լայնածավալ հանրային բանավեճի ակնհայտ թերություններից է տարեկան մեկ թեմայով սահմանափակվելը: Մյուս կողմից, դա հնարավորություն է տալիս ավելի խորացված հասկանալ առկա մարտահրավերները:

ԴԱՆԻԱ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱԳԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱՎԵՃ ԴԱՆԻԱՅՈՒՄ (2008Թ.)

Նախապատնություն, նախաձեռնող և մասնակիցներ

Դանիայի առողջապահական համակարգը հայտմվել էր ավելի շատ, ավելի որակյալ և ավելի արագ բուժումներ իրականացնելու քաղաքա-

կան և հասարակական ճնշման տակ, սակայն չուներ անհրաժեշտ ֆինանսավորում:

Դանիական տարածաշրջանների միության Առողջապահական հարցերի կոմիտեն 2008 թվականին մշակեց «Ապագայի առողջապահության համակարգը» ծրագիրը, որն ուներ երկու բաղադրիչ՝

- Դանիայի տարածաշրջաններից չորսում 2008 թվականի նոյեմբերի 1-ին Քաղաքացիների համաժամանակյա գագաթաժողովներ՝ 800 քաղաքացիների մասնակցությամբ,
- 2009 թվականի հունվարի 14-15-ին քաղաքական գործիչների, փորձագետների և առողջապահության համակարգի պաշտոնատար անձանց մասնալցությամբ Քաղաքականության գագաթաժողով, որը հիմնված էր Քաղաքացիների գագաթաժողովների արդյունքների վրա:

Ծրագիրն իրականացնելու նպատակով Դանիայի Տեխնոլոգիաների խորհուրդը (“Teknologirådet”) և Առողջապահության կոմիտեի քարտուղարությունը ձևավորեցին ընդհանուր քարտուղարություն:

Քաղաքացիների գագաթաժողովի նպատակը

«Արժեքներ և մարտահրավերներ» խորագրի ներքո դանիական տարածաշրջանները հայցում էին քաղաքացիների գիտակցված և լավ մտածված դատողություններն այն մասին ինչպես, օրինակ, տեխնոլոգիաների կիրառումը կարող է բարձրացնել արտադրողականությունը, մասնավորապես՝ արդյո՞ք հիվանդության բուժմանն այլ միջամտությունների (օրինակ՝ որոշակի պլաստիկ վիրահատությունների) հաշվին առաջնահերթություն տալն ընդունելի է, արդյո՞ք որոշակի բուժումների համար կարելի է օգտվել մասնավոր ապահովագրություններից, արդյո՞ք կարելի է պահանջել պացիենտից հետևել բուժման պահանջներին և այլն:

Քաղաքականության գագաթաժողովի նպատակը

Հանգել նոր զարգացումների և բուժօգնության ոլորտում գերակայությունների սահմանման շուրջ դանիական առողջապահական համակարգի դերակատարների միջև փոխհամաձայնեցված որոշման, որը հիմնված է քաղաքացիների գնահատականների վրա:

Արդյունք

Նախաձեռնության որոշ կարևոր արդյունքներ՝

- Այդ պահին հնարավորություն կար հարկային փոխհատուցում ստանալ մասնավոր բժշկական ապահովագրության համար, ինչը ծախսատար էր առողջապահության համակարգի համար: Բայց քանի որ հասարակության արձագանքը դրա վերացմանն անորոշ էր՝ քաղաքական գործիչները չունեին այն վերացնելու խիզախություն: Քաղաքացիների գագաթաժողովներին, սակայն, մասնակիցների մոտ 80%-ն արտահայտվեց ամբողջությամբ պետական առողջապահության համակարգի կամ մասնավոր ապահովագրության օգտին, որը, սակայն, կլիներ առանց հարկային փոխհատուցման: Արդյունքում փոխվեց քաղաքական դիրքորոշումը. Քաղաքականության գագաթաժողովից քիչ անց փոխհատուցումը վերացվեց:

- Քաղաքացիներն իրենց աջակցությունը հայտնեցին այն մոտեցմանը, որ պացիենտներից պահանջվի հետևել ապրելակերպի, որը չի վտանգում նրանց բուժումը: Հարցը մանրամասն քննարկվել է Քաղաքականության գագաթաժողովին և հետագայում ավելի մեծ ուշադրության արժանացել առողջապահության ոլորտի քաղաքականության մեջ:

- Տարբեր մասնագիտությունների որակավորված անձնակազմ ունենալու համար բուժաշխատողների կարողությունների զարգացմանը կողմ արտահայտվեց 71%-ը: Որոշումներ կայացվեցին մեղմել միջմասնագիտական տարբերությունները (օրինակ՝ մասնագիտացված բուժքույրերը կարողանան կատարել որոշակի աշխատանքներ, որոնք նախկինում վերապահված էին բացառապես բժիշկներին):

Մեթոդ

Քաղաքացիների գագաթաժողով. Չորս լրիվ օր հանդիպումներ՝ յուրաքանչյուրին մասնակցում էին մոտ 200 քաղաքացիներ, ում ընտրել էին Դանիայի բնակչության կազմն արտացոլելու համար: Տեղեկատվական նյութերը մասնակիցներին էին ուղարկվել գագաթաժողովից 1 շաբաթ առաջ, իսկ բոլոր հանդիպումների ծրագիրն ու հարցերը նույնն էին: Վեց ժամվա ծրագիրը բաժանված էր հինգ թեմատիկ նիստերի, որից յուրաքանչյուրը սկսվում էր ներածական տեսանյութով և հարցերով, որոնք քաղաքացիները քննարկում էին սեղանի շուրջ նստած՝ 8 անձից և մեկ նախագահողից կազմված խմբերում:

Նիստերի թեմաներն էին՝

- ամենակարևոր մարտահրավերները (յուրաքանչյուր սեղան նշում էր երկու մարտահրավեր, որոնց օգտին նիստի ավարտին քվեարկել էին բոլորը),
- ինչպես ապահովել պատշաճ պայմաններ առողջության համար,
- անձնական ֆինանսական մասնակցություն (պացիենտից),
- առողջապահությանը հասանելի ռեսուրսներ,
- ի՞նչ ծառայություններ պետք է կարողանա ապահովել առողջապահության համակարգն ապագայում,
- գերակայությունները սահմանելու սկզբունքները,
- որքանով բուժումը պետք է դիտվի ընդհանուր պատասխանատվություն կամ առևտրային ապրանք:

Յուրաքանչյուր նիստի ավարտին քաղաքացիները քվեարկում էին 3-5 հարց՝ սեղմելով «կոճակները»: Օրինակ, 2a նիստի հարցերն էին՝

- Ո՞վ է պատատսխանատու մեր առողջության համար:
- Ինչպե՞ս պետք է լուծենք աշխատանքային պայմանների և շրջական միջավայրի անառողջ ազդեցությունների խնդիրը:
- Ինչպե՞ս վարվել անառողջ ապրելակերպի հետ:
- Բուժումը պետք է հարմարեցվի պացիենտի ապրելակերպին, թե՞ ապրելակերպը բուժմանը:
- Քաղաքացիները պե՞տք է նպաստեն ուրիշների առողջությանը դառնալով դոնոր:

Յուրաքանչյուր հարցի համար տրված էին այլընտրանքային պատասխաններ:

Քաղաքականության գագաթաժողովը տևեց 24 ժամ՝ 12-ից 12-ը: Առաջին օրվա ընթացքում կազմակերպվեց քաղաքականության այն գործողությունների մտագրոհ և քննարկում, որոնք կարող էին հետևել քաղաքացիների դատողություններին: Երկրորդ օրը նվիրված էր աշխատաժողովներին, որոնց նպատակն էր ավելի մեծ խորությամբ բացահայտել գործողությունները և կիսել իրենց առնչվող գործողությունների պատասխանատվությունը:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Աշխատանքը ցույց տվեց ինչպես հանրային բանավեճը կարող է էապես նպաստել քաղաքականության մշակման գործընթացին: Ազդեցության բանալին որոշումների կայացման գործընթացները որպես մեկ ամբողջություն նկատելն է, որտեղ քաղաքացիների մասնակցության մեթոդները մեկ քայլ են: Շատ կարևոր հաջորդ քայլ է հանդիսանում հետագա քաղաքական միջոցառումների գործընթաց և դրան ամենսկզբից քաղաքականություն մշակողների նվիրումն ապահովելը:

Հանրային բանավեճի օգուտների և ծախսերի հարաբերակցությունը պետք է դիտարկել բանավեճի բազմաթիվ միջոցառումներից ելնելով: Հասարակության ներգրավումը կարող է ծախսատար թվալ և բոլոր միջոցառումներն են տալիս տնտեսական նույն օգուտը: Սակայն ժամանակի ընթացքում որոշ առանձին ծրագրեր ապահովում են որոշումների կայացման լիազորություն/խիզախություն, որը շատ մեծ ազդեցություն ունի արտադրողականության, որոշումների որակի և տնտեսության վրա: Այս երևույթը հատկապես ակնառու էր մասնավոր բժկական ապահովագրությունների հարկային փոխհատուցումները վերացնելու դեպքում: Կազմակերպիչներից մեկի խոսքերով. «Առանց քաղաքացիների հստակ կամարտահայտման դժվար վերացվեր հարկային փոխհատուցումը, իսկ դա պետական բյուջեում խնայեց այնպիսի գումար, որն անգամներ գերազանցում է Դանիայում հանրային ներգրավման միջոցառումների վրա ընդհանուր կուտակային ծախսը»:

Հանրային բանավեճը խրախուսում է խորը վերլուծություն, որը տալիս է հարցումներից/ հետազոտություններից տարբերվող արդյունքներ: Հարցումների և հանրային մասնակցության մեթոդների միջև կարևոր տարբերությունն այն է, որ վերջինը հաճախ անսպասելի արդյունքներ է տալիս մեդիայում, հարցումներում կամ լոբբիստների կողմից ներկայացվող ընդունված «հասարակական կարծիքից» շեղվելու պատրաստակամության իմաստով: Հիմնավորվում, վերլուծություն են ենթարկվում և քննարկվում կարծիքները, այլ ոչ թե անձնական տեսակետերը կամ կուսակցության պաշտոնական գիծը: Օրինակ կարող է ծառայել համապատասխանության խնդրի լուծումը, որը նոր մոտեցում ներկայացրեց՝ պացիենտները պետք է համատեղ պատասխանատվություն կրեն իրենց բուժման համար: Պացիենտների շահերի պաշտպանության կազմակերպությունները, լոբբիստների կամ հարցումները չէին պաշտպանում այս մոտեցումը, այլ սովորաբար պնդում էին, որ յուրաքանչյուր ոք ունի

նույն բուժումը ստանալու բացարձակ իրավունք: Սակայն, մասնակիցնե-
րի մեծ մասը պաշտպանեց այս մոտեցումը:

ՖԻՆԼԱՆԴԻԱ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ (2012Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

Ֆինլանդիայի Սահմանադրությունը 2012 թվականի մարտից հնարավորություն տվեց քաղաքացիական նախաձեռնություն ներկայացնել Ֆինլանդիայի խորհրդարան, եթե այն հավաքել է առնվազն 50000 ստորագրություն: Պաշտոնական պահանջներն ու գործընթացները նկարագրված են Քաղաքացիների նախաձեռնության մասին օրենքում (12/2012): Արդարադատության նախարարությունը ստեղծեց վեբ ծառայություն (տես՝ www.kansalaisaloite.fi), որի նպատակն էր կազմակերպել քաղաքացիների նախաձեռնությունների ներկայացումը, որոնց կարողանար աջակցել լայն հասարակությունը:

Քաղաքացիների նախաձեռնությունները շատ լավ են ընդունվել Ֆինլանդիայում: Վերջին վեց տարվա ընթացքում ներկայացվել են 1000 ավելի նախաձեռնություններ, որոնցից 37-ը հաջողությամբ հավաքել են նվազագույն 50000 ստորագրությունը: Նախաձեռնություններից մեկը հանգեցրել է օրենսդրության ուղղակի փոփոխությունների (հավասար ամուսնական իրավունքների մասին), մյուսներն օրենսդրության վրա ունեցել են անուղղակի ազդեցություն:

Նվազագույն 50000 շեմը հաղթահարած նախաձեռնություններից առնվազն վեցն առնչվում էին կենսաէթիկական հարցերին: Կենսաէթիկական հարցերին առնչվող մի շարք նախաձեռնություններ չհավաքեցին անհրաժեշտ քանակությամբ ստորագրություններ: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ կենսաէթիկայի հարցերը լավ արտացոլված են Ֆինլանդիայի քաղաքացիների նախաձեռնություններում:

Ամենահայտնի նախաձեռնությունը վերաբերվում էր էվթանազիային կամ բժշկի օգնությամբ ինքնասպանությանը (63000 աջակից): Խորհրդարանն ուժը կորցրած ճանաչեց էվթանազիայի մասին օրենքը, սակայն կառավարությունից պահանջեց ձևավորել աշխատանքային խումբ, որը կուսումնասիրի այս խնդիրները և, հնարավոր է, կներկայացնի նոր օրենսդրության առաջարկություն:

Ամուսնական հավասար իրավունքներ ապահովելու (166000-ից ավելի աջակից) նախաձեռնությունը հանգեցրեց նոր օրենսդրության ընդունման, որը նախկինում տարասեռ զույգերին վերապահված նույն իրավունքներն էր տալիս նույնասեռ զույգերին: Այս նախաձեռնությունը

(55000-ից ավելի աջակից) հանգեցրեց Մայրության մասին նոր օրենքի ընդունման (որը հնարավորություն է լեսբիական զույգի երկու կողմերին էլ սահմանված ընթացակարգով ունենալ օրենքով նախատեսված հավասար ծնողական իրավունքներ): Բացի այդ, մայրության սահմանումն այժմ հնարավորություն է տալիս տրանսսեքսուալ տղամարդկանց ճանաչվել որպես մայր և օգտվել երեխայի ծննդյան հետ կապված սոցիալական աջակցությունից:

Մեթոդ

Օրենսդրություն մշակելու կամ ընդունելու առաջարկություն. քաղաքացիների նախաձեռնությամբ կարելի է առաջարկել ընդունել կամ մշակել նոր օրենսդրություն, ինչպես նաև փոփոխություններ կատարել գործող օրենսդրության մեջ կամ ուժը կորցրած ճանաչել այն: Օրենքի նախագծի ձևաչափով ներկայացվող նախաձեռնությունը պետք է պարունակի առաջարկվող իրավական տեքստը: Նախաձեռնությունը պետք է սահմանափակվի կոնկրետ խնդրով և պարտադիր ներկայացնի հիմնավորումներ:

Ստորագրահավաքի համար սահմանված ժամանակահատված. նախաձեռնությունը պետք է վեցամսյա ժամկետում հավաքի անհրաժեշտ թվով ստորագրություններ: Ստորագրությունները կարող են հավաքվել թղթային կամ առցանց (օրինակ՝ kansalaisaloite.fi) տարբերակով: Երբ հավաքվում են բավարար թվով ստորագրություններ, նախաձեռնությունն ուղարկվում է Բնակչության ռեգիստրի կենտրոն, որտեղ ստուգվում են անունները և հաստատվում վավերական ստորագրությունների թիվը:

Քննարկում խորհրդարանում. Բնակչության ռեգիստրի կենտրոնում անունները ստուգելուց և առնվազն 50000 վավերական ստորագրություն հավաքած լինելու փաստը հաստատելուց հետո՝ նախաձեռնության խոսնակը կարող է ներկայացնել այն խորհրդարանի քննարկմանը: Եթե Բնակչության ռեգիստրի կենտրոնի կայացրած որոշման ամսաթվին հաջորդող վեց ամիսների ընթացքում նախաձեռնությունը չի ներկայացվում խորհրդարան, այն կարող է կորցնել իր ուժը:

Խորհրդարանը պարտավոր է քննարկել քաղաքացիների նախաձեռնությունը, սակայն այն փոփոխություններով կամ առանց փոփոխությունների հաստատելու հայեցողությունը վերապահված է խորհրդարանին: Եթե խորհրդարանը մերժում է նախաձեռնությունը՝ նույն խնդրի վերաբերյալ կարելի է ընթացք տալ նոր նախաձեռնության:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Քաղաքացիների նախաձեռնությունն այսօր համապետական մակարդակի ամենակարևոր ժողովրդավարական նորարարությունն է Ֆինլանդիայում: Ժողովրդավարական նորարարությունների մասին 2016 թվականի զեկույցի (Democratic Innovations, անգլերենում էջ 4) համաձայն քվեարկության իրավունք ունեցողների առնվազն մեկ երրորդը ստորագրել է առնվազն մեկ հանրագիր: Քաղաքացիների նախաձեռնությունը կարծես կարողանում է ներգրավել հակառակ պարագայում քաղաքականապես պասիվ սոցիալ-ժողովրդագրական խմբերը, հատկապես՝ երիտասարդ քաղաքացիներին:

Քաղաքացիների նախաձեռնությունը ազատ քաղաքացիական գործունեությունը և հանրային բանավեճը խրախուսելու և դրանց աջակցելու, այդպիսով քաղաքացիական հասարակությունը հզորացնելու արդյունավետ ձև է: Կայքերն ակտիվ հարթակ են տրամադրում քաղաքացիներին՝ ավելի լայն լսարանի հասնելու համար և, միաժամանակ, հնարավորություն տալիս գաղափարներ մատակարարել քաղաքական դաշտ: Դրանք ավելի մեծ տեսանելիություն են ապահովում հանարյին կարծիքներին:

Կայքում ներկայացված են մի շարք նախաձեռնություններ կենսաէթիկական խնդիրների վերաբերյալ: Ամենահայտնին քաղաքացիների նախաձեռնությունն էր էվթանազիայի մասին, որը հանգեցրեց ուսումնասիրության, որը, ամենայն հավանականությամբ, ավելի լավ պատկերացում կտա տարբերակների մասին և, հավանաբար, կավարտվի կյանքի վերջում խնամքի, բժշկի օգնությամբ ինքնասպանության և/կամ էվթանազիայի մասին օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկով: Այս օրինակը ցույց է տալիս, թե ինչպես քաղաքացիներին իրենց տեսակետերը բարձրաձայնելու հարթակ տրամադրելը կարող է հնարավորություն տալ կառավարությանը բացահայտել նոր ուղղություններ:

Նոր օրենսդրական ակտեր նախաձեռնելու աշխատանքին հանրությանը մասնակցելու հնարավորություն տվող կայքը կարող է մեծ ազդեցություն ունենալ մարգինալացված խմբերի վրա կամ կոնկրետ հարցի դեպքում: Կայքի թափանցիկությունը հնարավորություն է տալիս քաղաքացիներին մասնակցել օրինաստեղծ գործընթացին և հեշտացնում այդ գործընթացին հետևելը: Սա լրիվ նոր կերպով է ապահովում քաղաքացիների ընդգրկումը և ավելի է մոտեցնում նրանց օրենսդրությանը:

Հանրությանը ներգրավելու այլ ուղիների համեմատ սահմանափակումը կայանում է նրանում, որ կայքը տրամադրում է միայն նախաձեռնողի ներկայացրած տեղեկատվությունը, բայց չի ապահովում հետագա քննարկումների ֆորում, որը պետք է կազմակերպվի առանձին:

ՖՐԱՆՍԻԱ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ ԿԵՆՍԱԷԹԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՇՈՒՐՋ (2018Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

Ֆրանսիան կենսաէթիկայի խնդիրները կարգավորող հատուկ օրենսդրություն ունի 1988 թվականից, իսկ 2009 թվականից հանրային բանավեճերին ներգրավել է հասարակությանը: Կենսաէթիկայի մասին ֆրանսիական օրենքը 2011 թվականից նախատեսում է, որ էթիկայի հարցերով ազգային խորհրդատվական կոմիտեն (CCNE) հանրային բանավեճեր և խորհրդակցություններ է կազմակերպում մարդու մարմնի և սաղմի վրա ազդեցություն ունեցող բժշկական և/կամ գիտահետազոտական պրակտիկայի կենսաէթիկական հարցերի շրջանակում: Կենսաէթիկայի մասին 2011 թվականի օրենքի համաձայն Ազգային առաջին խորհրդակցությունը (les États Généraux) կազմակերպվել է 2018 թվականի հունվարի 18-ից ապրիլի 30-ը:

Հարցը

CCNE-ն սահմանել էր բանավեճի 9 թեմաներ, 7 գիտական և 2 հասարակական հարցեր, որոնք էին՝

- մարդու սաղմի և մարդու սաղմնային ցողունային բջիջների վրա հետազոտություն,
- գենետիկական թեստավորում և գենոմային բժշկություն,
- օրգանների նվիրաբերում և փոխպատվաստում,
- նյարդագիտություն,
- առողջապահական տվյալներ,
- արհեստական բանականություն և ռոբոտիզացիա,
- առողջություն և շրջակա միջավայր,
- օժանդակ վերարտադրություն,
- խնամքը կյանքի վերջում:

Թեմաներն ընտրվել են, քանի որ դրանք Կենսաէթիկայի մասին օրենքի կորիզն են և կարևոր են կենսաէթիկայի ոլորտի վերջին զարգացումներից ելնելով: Թեև վերջին երկու թեմաները չէին բխում օրենքից, CCNE-ն որոշեց խրախուսել այս երկու թեմաների քննարկումը, քանի որ դրանք

կարևոր էին հասարակության համար, և օգտվել Ազգային խորհրդակցության տված հնարավորությունից հանրային կարծիքները լսելու նպատակով:

Մեթոդ

2018 թվականի մարտ ամսին մոտ 60 լրագրողների համար կազմակերպվեց «Ազգային խորհրդակցության թեմաների ներածություն» միջոցառումը: Ազգային խորհրդակցության ամբողջ ընթացքում ազգային և տարածաշրջանային մեդիան լուսաբանում էր երկրի տարածքում կազմակերպվող միջոցառումներն ու բանավեճերը: Որոշ դեպքերում, երբ խոսքը գնում էր զգայուն թեմաների մասին, մամուլը դիտավորյալ չէր տեղեկացվում ժամերի մասին՝ բանավեճի մասնակիցների ազատ արտահայտվելու վրա բացասաբար չազդելու համար:

CCNE-ը ստեղծեց Քաղաքացիների կոմիտե՝ բանավեճի գործընթացը վերլուծելու և ավելի խորացված քննարկման համար երկու թեմաներ՝ կյանքի վերջի և նախաբեղմնավորման գենետիկական թեստավորման ընտրելու համար: Այս աշխատանքի արդյունքում կազմվեցին երեք «Կարծիքներ», որոնք հրապարակվեցին CCNE-ի ամփոփիչ զեկույցում:

Բացի Քաղաքացիների կոմիտեից, CCNE-ին՝ որպես հանրային բանավեճի մաս կազմակերպեց հետևյալը՝

- Էթիկական հարցերի քննարկման տարածաշրջանային ֆորումների (Espaces de réflexion éthique régionaux - ERER) կազմակերպած 271 տարածաշրջանային հավաք, որոնց մասնակցեց 21000 մարդ.
- ստեղծվեց կայք, որտեղ անհատները կարող էին թողնել իրենց կարծիքները: 2018 թվականի փետրվար-ապրիլ ամիսներին ընդհանուր թվով 183498 այցելուներ են մուտք գործել կայք, որոնցից 29032 մարդ խորհրդակցությունների համար թողել են 64985 կարծիք: Ամենամեծ ուշադրություն գրաված թեմաներն էին «Ձավակածնություն և հասարակություն» և «Կյանքի վերջի վարումը», որոնք ներկայացնում էին կարծիքների ընդհանուր թվի 69%-ը:
- 2018 թվականի փետրվար-մայիս ամիսներին կազմակերպվեցին 154 լսումներ, որոնց մասնակցեցին 400 միություններ և գիտական ինստիտուտներ, ինչպես նաև փիլիսոփայական և կրոնական շահեր ներկայացնող կազմակերպություններ:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Այս օրինակում ակնհայտ է, որ քաղաքական հանձնառությունն օգնեց աջակցել հանրության շատ լայն մասնակցությանը կենսաէթիկայի հարցերին նվիրված բանավեճերին:

Օրինակը ցույց է տալիս նաև ինչպես կարելի է համադրել զանազան մեթոդներ՝ տարբեր և բարդ թեմաների շուրջ տեղեկացված բանավեճին աջակցելու համար:

Հատուկ գործիքի օգնությամբ գաղտնի էին պահվում Քաղաքացիների կոմիտեների նիստերի վայրն ու օրը, ինչն արվում էր մեդիայի և այլոց ճնշումից և ազդեցությունից խուսափելու համար: Միաժամանակ, մեդիան անցավ հատուկ վերապատրաստում՝ ծրագրի և քննարկելիք թեմաների հանդեպ նրանց հետաքրքրությունը խթանելու նպատակով: Սա հաջողությամբ ապահովեց տեսանելիություն ազգային մեդիայում:

Համապետական այս նախաձեռնության ևս մեկ ազդեցություն այն էր, որ ակնհայտ բարձրացավ հանրային իրազեկումը բանավեճի թեմաների վերաբերյալ:

Խորհրդակցության ազդեցությունը Կենսաէթիկայի մասին օրենքը վերանայելու վրա դեռևս պետք է գնահատվի, քանի որ խորհրդարանը դեռևս չի ընդունել օրենքը: Սակայն արդեն իսկ երևում է, որ բանավեճը նպաստել է նոր օրենքի նախագծի մշակմանը:

Չնայած գործիքների բազմազանությանը և արտահայտված տեսակետերի լայն բազմակարծությանը սխալ է եզրակացնել, որ ներկայացվածը հասարակական կարծիքի իրական պատկերն էր: Տարածաշրջանային քննարկումների մեծ մասը տեղի է ունեցել հանդուրժող և հանգիստ մթնոլորտում, սակայն եղել են և բացառություններ: Այսպես կոչված «հասարակական» խնդիրների շուրջ բանավեճերի ընթացքում որոշ մտքերի փոխանակումներ երբեմն կասկածի, հարցերի կամ նրբությունների շատ քիչ տեղ թողեցին, ինչը թույլ չտվեց լսել այլ տեսակետեր:

Առցանց արտահայտման միջոցները նույնպես որոշ քննադատության տեղ տվեցին, օրինակ. (i) կայք մուտք գործելու դժվարությունը, (ii) «հավաքած փաստեր և մարտահրավերներ»-ի ոչ հստակ ձևակերպումը, (iii) վարումը, որը որոշ անձանց գնահատականով անբավարար էր, (iv) որոշ արտահայտությունների սահմանումը, որը բավարար չափով ընդունելի չէր բոլոր կողմերի համար:

Նման շփումները բացահայտեցին, որ տարիքով և սեռով պայմանավորված՝ տեսակետերը կարող են տարբերվել: Ի վերջո, լսումները, որոնք բազմաթիվ էին և բազմաբնույթ, ծառայեցին ոչ այնքան որպես բանավեճի դաշտ, որքան հրավերն ընդունած կազմակերպությունների կողմից պարզաբանման և լուսաբանման ժամանակ:

Այս պահին կարևոր է ընդգծել մի շարք բացահայտումներ՝

- շնորհիվ տարածաշրջանային ֆորումների (ERER) գործադրած ջանքերի՝ զանազան թեմաների քննարկումների ընթացքում երիտասարդ սերունդների կարևոր դերակատարումը տարածաշրջանային բանավեճերում,
- խորհրդակցություններում բնակչության ավելի քիչ տեղեկացված և ավելի խոցելի անդամներին ներգրավելու բարդությունը,
- քննություն պահանջող պատճառներով խորհրդակցության ընթացքում մի շարք հիմնական թեմաների ոչ բավարար քննարկումը,
- տեղեկատվության կենսական պահանջ, որը ոչ միայն քաղաքացիներին, այլև բուժաշխատողներին մտահոգող հարց է,
- տարբերությունների և անձնական արժեքների հանդեպ հարգանքի կարևորությունը, հատկապես՝ նույնասեռ և ինտերսեքսուալ անձանց նկատմամբ,
- վերջապես, CCNE-ին գտավ, որ այս գործընթացի ընթացքում փոփոխվեցին և հարստացան իր գործառնությունները, իսկ CCNE-ին եկավ նաև այն համոզման, որ այսուհետ նման մասնակցությունն անհրաժեշտ կլինի կենսաէթիկայի հարցերի շուրջ կայուն ազգային և տարածաշրջանային բանավեճ համախմբելու համար:

ԳԵՐՄԱՆԻԱ՝ ԳԵՆՈՄԻ ԽՄԲԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2019Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

Genomchirurgie im gesellschaftlichen Diskurs (գենոմի խմբագրումը հասարակական խոսույթում) ծրագրի նպատակն էր խթանել հանրային քննարկում գենետիկական տեխնոլոգիայի նոր մեթոդների էթիկական, իրավական և սոցիալական կողմերի մասին: Ծրագիրը *Wissenschaft im Dialog* (WiD) և Գերմանիայի գիտությունների ազգային ակադեմիայի՝ Լոեպելդինայի համագործակցության արդյունք էր: Այն ֆինանսավորում էր Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարությունը՝ որպես բժշկության և կենսաբանության ոլորտում գիտական հետազոտությունների ֆինանսավորման ELSA (էթիկական, իրավական և սոցիալական ասպեկտներ) ծրագրի մաս:

Հարցը

Ավանդական գենետիկական տեխնոլոգիաները տարիներ շարունակ եղել են բանավեճի առարկա, իսկ այժմ այդ ոլորտը հեղափոխական փոփոխությունների է ենթարկվում գենոմի խմբագրման տեխնոլոգիաների շնորհիվ, որոնցից ամենահայտնին CRISPR-Cas9 համակարգն է: Ծրագրի ուշադրության կենտրոնում գենոմի խմբագրման բժշկական կիրառումներն էին: Թիրախային լսարանը կազմված էր հասարակության շահագրգիռ անդամներից, դպրոցականներից, ուսուցիչներից, ուսանողներից և փորձնակներից, ինչպես նաև քաղաքականության, գիտության և մեդիա ոլորտների շահակիրներից: Այս խմբերը մասնակցեցին զանազան ինտերակտիվ միջոցառումների, որոնց ընթացքում ծանոթացան նոր տեխնոլոգիային, դրան առնչվող հնարավորություններին և վտանգներին՝ նպատակ ունենալով մոտիվացնել նրանց ձևավորել սեփական կարծիք: 2017 թվականի աշնանից մինև 2019 թվականի գարուն կազմակերվեց 16 միջոցառում հետևյալ թեմաներով. քաղցկեղի բուժումը սոմատիկ գենային թերապիայի միջոցով, գենային դրայվի կիրառումը մալարիայի հարուցիրչների դեմ, գենոմի խմբագրման հնարավորությունները և վտանգները:

Մեթոդ

Wissenschaft im Dialog պատասխանատու էր Գերմանիայի տարածքում կազմակերպված 13 միջոցառումների համար, որոնք նախատեսված էին հասարակության շահագրգիռ անդամների և դպրոցականների համար:

Դրանց չմասնակցած աշակերտները և գիտնականները կատարեցին հանրային որոշ միջոցառումներ սոցիոլոգիական վերլուծություն:

Որպես ծրագրի մաս դպրոցականների համար մշակվեց սիմուլյացիոն խաղ: Դրա ուշադրության կենտրոնում գենային դրայվի տեխնոլոգիան էր, որը հնարավոր է կիրառել մալարիայի հսկողության համար՝ գենետիկորեն փոփոխելով անոֆելես մոծակներին: Փորձարկման փուլից հետո, որի ընթացքում տարբեր դպրոցներ կատարվեցին չորս այցեր, խաղը հրապարակվեց գործիքակազմի տեսքով: Այն ընդգրկում է պրեզենտացիաներ, տեսանյութ, խաղաքարտեր և աշխատանքային թերթիկ, ինչը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ինքնուրույն վարել խաղն իրենց աշակերտների հետ:

«Ստորին պալատի» հինգ բանավեճերը, որոնց թիրախը «լայն հասարակությունն» էր, կազմակերպվեցին գենոմի խմբագրումը քննարկելու հնարավորություն տալու համար: Երկու փորձագետներ, որոնցից մեկը բնական գիտությունների, իսկ մյուսը՝ էթիկական կամ իրավական մասով, ներկայացրեցին թեման, իսկ հետո կոնկրետ հարցերի շուրջ բանավեճի համար միացան լսարանին: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ իրենց կարծիքը մասնակիցներն արտահայտեցին փոխելով նստատեղերը:

Հանրային ևս երեք միջոցառում սոմատիկ գենային թերապիայի կիրառմամբ քաղցկեղի բուժման մասին սիմուլյացիոն խաղի ձևաչափով էին: Խաղի ընթացքում մասնակիցներն ակտիվորեն աշխատեցին ենթադրական մի իրավիճակի հետ, երբ քաղցկեղով հիվանդ պացիենտը վստահ չէ, որ գենային նոր թերապիան, որը կիրառում է CRISPR-Cas9 տեխնոլոգիան ճիշտ ընտրություն է իր համար: Լսարանը ծանոթացավ փորձագետների կարծիքին և օգտվեց վարողների աջակցությունից:

Լեոպոլդինան պատասխանատու էր լրագրողների և հետազոտողների, քաղաքական և գիտական շահակիրների համար Հալլե/Զալլե և Բեռլին քաղաքներում կազմակերպված երեք միջոցառումների համար: Լեոպոլդինայի լրագրողական կոլեգիայի կազմակերպած վերապատրաստման երկու սեմինարներին լրագրողները և խմբագիրները միացան կենսաբանության, բշկության, էթիկայի և իրավունքի ոլորտների գիտնականներին՝ զանազան անկյուններից գենոմի խմբագրման մասնագիտական բնագավառի մասին խորացված գիտելիքներ ձեռք բերելու նպատակով: Նպատակն էր բարձրացնել լրագրողների իրազեկվածությունն այս բարդ թեմայի մասին և խթանել մեդիայում որակյալ լուսաբանումը: Աշխատաժողովի շրջանակներում կազմակերպվեց ստորին

պալատի քննարկում, որին մասնակցեցին Լեոպոլդինայի անդամներ և հիվանդանոցները, առողջապահության ոլորտի ղեկավարությունը, բժշկական միությունները և պացիենտների շահերի պաշտպանության կազմակերպությունները ներկայացնող փորձագետներ:

Թիրախային բոլոր խմբերի շահակիրների համար կազմակերպած ավարտական աշխատաժողովը նպատակ ուներ ներկայացնել և քննարկել նախորդող միջոցառումների բացահայտումները և հնարավորություն տալ մասնակիցներին խմբային քննարկումների միջոցով ձևավորել նոր կարծիքներ: Սոցիոլոգիայի մագիստրոսական ուսանողները նախապես հնարավորություն ունեին ուսումնասիրել միջոցառումները և պարզել ինչպես են մասնակիցներն արձագանքել միջոցառումների ինտերակտիվ ձևաչափերին: Նրանց հավաքագրած փաստերը քննարկվեցին աշխատաժողովին: Ծրագրի ավարտին տրամադրվեցին ամփոփոիչ փաստաթղթերը:

Ծրագրի կայքը (գերմաներեն)՝ www.genomchirurgie.de

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Ծրագրի ընթացքում փորձարկած միջոցառումների զանազան ձևաչափերն ունեին տարբեր ուժեղ և թույլ կողմեր, ինչը հարմար էր դարձնում դրանք տարբեր լսարանների և նպատակների համար: Համապատասխան գովազդային միջոցառումները պետք է լավ պլանավորվեն և լայնորեն տարածվեն:

«Ստորին պալատի բանավեճերը» նպատակահարմար են խոշոր լսարանի (մինչև 100 անձ) և թեմայի մասին խիստ սահմանափակ կամ զրոյական գիտելիք ունեցող լսարանի համար: Ամբիոնային քննարկման համեմատ ստորին պալատի բանավեճերը շատ ավելի ինտերակտիվ են և խոսելու հնարավորություն են տալիս ավելի մեծ թվով անձանց: Պահանջվում է փորձառու վարող, իսկ փորձագետները պետք է լավ տեղեկացված լինեն:

Սիմուլյացիոն խաղերը նպատակահարմար են ավելի փոքր խմբերի համար (մինչև 50 անձ) և սովարաբար գրավում են թեմայով նախապես հետաքրքրված անձանց: Դրանք ավելի երկար են տևում և հնարավորություն տալիս ավելի խորը և մանրամասն քննարկել խնդիրները: Նոր խաղ մշակելը կամ նոր թեմային գոյություն ունեցող խաղ ադապտացնելը պահանջում է ժամանակ և ռեսուրսներ:

Լրագրողների համար սեմինարների հիմնական օգուտները գիտությունը մեդիային կապելն էր, գիտական հայտնագործություններին ծանոթացնելը, հետազոտության հնարավորությունների և օգուտների մասին համատեղ քննարկումներ կազմակերպելը: Բացի այդ, մասնակիցները հնարավորություն ունեին ձևավորել անձնական կապեր և այդ փոխհարաբերությունները հաճախ ավելի շատ օգնում էին հետագա լուսաբանմանը, քան բուն միջոցառման մասին անմիջական պատմությունների հրապարակմանը:

Դժվար է խրախուսել բնակչության ներկայացուցչական ընտրանքին միասին քննարկել նման բարդ խնդիրներ: Հիմնականում նման ձևաչափերը հարմար են հանձնառու և շահագրգիռ անձանց համար: Միջոցառումների այս շարքին հաջողվեց ապահովել բավարար մասնակցություն: Մասնակիցները շատ դրական ընդունեցին գենոմի խմբագրմանը թեմայով երեկոյան միջոցառման առաջարկը, իսկ տեղեկատվության և քննարկման «ախորժակը» շատ մեծ էր:

Ծրագրի ազդեցությունը

Շահակիրների աշխատաժողովի բոլոր մասնակիցներն ընդգծեցին նման մասնակցային միջոցառումների կարևորությունը և հայտնեցին թեմատիկ փոխլրացնող լրացուցիչ բանավեճերի մասնակցելու ցանկություն (օրինակ՝ սաղմի հետազոտություն, սաղմնային գծի թերապիա, կանաչ գենետիկական ճարտարագիտություն և ընտանի կենդանիներ): Պետք է ջանքեր գործադրել, որ բանավեճերի բարդությունը կառավարելի մնա հասարակության համար: Ընդհանուր առմամբ, միջոցառումներին կարելի է ներգրավել ավելի մեծ թվով և տարատեսակ մասնակիցներ:

Ուղեկցող սոցիալ-գիտական հետազոտությունը տարբեր կողմերից վերլուծեց մասնակցության ձևաչափերը: Ձևաչափերը և հավաքած գաղափարները կարող են օգտագործվել հաղորդակցման ապագա ծրագրերում:

ԻՌԼԱՆԴԻԱ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐԾՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ (2016Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

2016 թվականի մայիսին Հանուն գործընկերային կառավարության ծրագիրը պարտավորեցրեց Իռլանդիայի կառավարությանը ստեղծել Քաղաքացիների ասամբլեա, որին տալ երկարատև ժամանակահաղվածում քննության առնել սահմանափակ թվով առանցքային խնդիրներ: Դրանցից մեկն աբորտներն արգելող՝ սահմանադրության ութերորդ փոփոխությունն ուժը կորցրած ճանաչելու կամ փոխարինելու հարցն էր:

Ողբերգական մի շարք դեպքեր, որոնք հասան դատարան, ավելացրեց Իռլանդիայի կառավարության վրա ճնշումը՝ պահանջելով լուծել այս հակասական խնդիրը: 2013 թվականին կնոջ ողբերգական մահը սեպսիսից, որը հաջորդել էր թերի վիժումից հետո հղիության արհեստական ընդհատելու նպատակով օգնություն չցուցաբերելուն, դրդեց ակտիվիստներին պահանջել ուժը կորցրած ճանաչել փոփոխությունը:

Քաղաքացիների ասամբլեայի նախագահին նշանակեց կառավարությունը, իսկ 99 անդամ քաղաքացիներին ընտրեցին պատահականության սկզբունքով՝ Իռլանդիայի բնակիչների տեսակետերը լայնորեն ներկայացնելու համար:

Նպատակ

Քննարկման նպատակով խորհրդատվական առաջարկություններ ներկայացնել խորհրդարանական կոմիտե, որն իր հերթին առաջարկություն կներկայացնի կառավարություն:

Մեթոդ

2016 թվականի հոկտեմբերից միչև 2017 թվականի ապրիլ Քաղաքացիների ասամբլեան հանգստյան օրերին կազմակերպեց հինգ հանդիպում, որոնց ընթացքում իավագիտության և բժշկության ոլորտների փորձագետները հրավիրվեցին որպես վկա ապացույցներ ներկայացնելու և հարցերին պատասխանելու համար: Պատրաստվեց ավարտական զեկույց և առաջարկություններ, որոնք հետագայում քննարկեց երկու պալատները ներկայացնող խորհրդարանականների կոմիտեն և 2017 թվականի դեկտեմբերին առաջարկեց սահմանադրության ութերորդ

փոփոխությունն ուժը կորցրած ճանաչելու հարցով կազմակերպել քաղաքացիների հանրաքվե: Սահմանադրական փոփոխություն կատարելու համար անհրաժեշտ է հանրաքվե, որն էլ առաջարկեց Իռլանդիայի կառավարությունը: Հանրաքվեն տեղի ունեցավ 2018 թվականի մայիսի 25-ին և ութերորդ փոփոխությունը վերացնելու առաջարկն անցավ ճնշող մեծամասնությամբ՝ 66.4 տոկոս կողմ և 33.6 տոկոս դեմ ձայների հարաբերակցությամբ:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Քաղաքացիների ասամբլեան կազմված էր հասարակ քաղաքացիներից: Քաղաքական գործիչները չէին մասնակցում քննարկումներին: Կառավարությունը սահմանեց իր պարամետրերը, իսկ խորհրդարանն արձագանքեց կառավարության զեկույցին:

Փոխհամաձայնություն ձևավորելու մեթոդներն աջակցեցին ավելի լայն մասնակցությանը և փոխադարձ հարգանքին: Քննարկումների տոնը Քաղաքացիների ասամբլեայում հանգիստ էր, իսկ ներկայացված տեղեկությունները հասկանալի հասարակ անձին:

Խորհրդարանական հանձնաժողովը հիմնականում պահպանեց Քաղաքացիների ասամբլեայի քննարկումների տոնը և մոտեցումը, հետևաբար ավելի քննական էր, քան մրցակցային:

Հանրաքվեի «Այո» և «Ոչ» քարոզարշավները հիմնականում կազմակերպվել էին ավանդական քաղաքական կուսակցությունների կառույցներից դուրս:

Թեև երկու քարոզարշավներում էլ ներգրավված էին հայտնի քաղաքական գործիչներ՝ հիմնական կուսակցությունները թույլ տվեցին իրենց անդամներին աջակցել երկու կողմերին էլ:

Որոշումները գիտակցաբար դանդաղ էին կայացվում՝ հանրությանը և կուսակցությունների ներսում բանավեճի հնարավորություն ընձեռնելու համար:

ԼԵՀԱՍՏԱՆ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԵՐԿԽՈՍԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱԲԱԹ (2018Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

Սահմանադրական շաբաթը նախաձեռնողը Զբիգնև Հոլդայի հիշատակի ընկերակցությունն է, որը հիմնադրել են մի խումբ իրավագետներ, ովքեր նպատակ ունեին հարգել պրոֆեսոր Հոլդայի գիտական և հասարակական գործունեությունը՝ բաց և ստեղծարար եղանակով իրավաբանական կրթություն տրամադրելու, ինչպես նաև այլ միջոցներով:

Նպատակ

Ընկերակցության նպատակն է իրավունքի տարբեր ճյուղերի ներկայացուցիչների միջև կոնսենսուսի և համագործակցության համար ձևավորել ընդհանուր հիմքեր: Հանրային այս բանավեճի նպատակն էր տեղեկացնել կամ կրթել անձանց և քաջալերել նրանց հասարակության մեջ լինել ավելի պրոակտիվ: Սա զինում է հասարակությանը տեղեկացված որոշումներ կայացնելու գործիքներով և, միաժամանակ, բարձրացնելով հասարակական կյանքին քաղաքացիների մասնակցության ակտիվությունը և նպաստելով քաղաքացիական հասարակության հզորացմանը:

Սահմանադրական շաբաթը համապետական ծրագիր է, որն Ընկերակցությունը կազմակերպում է 2015 թվականից:

Սկզբում ծրագիրը հասցեագրված էր միայն միջին դպրոցի ավագ դասարանների և ավագ դպրոցի աշակերտների համար, սակայն 4-րդ տարվանից մասնակցության հրավեր ուղարկվեց նաև համայնքային գրասենյակների, մշակույթի տների, սրճարանների, կինոթատրոնների, արհեստանոցների և կրոնական համայնքների կարգի հաստատություններին:

Մինչ այսօր մոտ 1700 դպրոցներում սահմանադրական իրավունքի դասեր են անցկացրել 2300 իրավաբաններ: Ըստ հաշվարկների դասերին ներկա է եղել մոտ 170000 աշակերտ:

Հարցը

Փաստաբանների, դատավորների, դատախազների, գիտնականների և իրավաբան-փորձնակների անցկացրած ինտերակտիվ դասերի թեման հիմնական օրենքի ազդեցության գործնական դեպքերն են:

Ավելի լայն առումով, նախաձեռնությունը կարելի է համարել միջոց, որով հասարակությանը փոխանցվում է այն միտքը, որ սահմանադրությունը ոչ թե ընդհանուր կանոնների հավաքածու է, որը վերաբերվում է միայն իրավակիրառների նեղ և փակ խմբին, այլ օրենքը և սահմանադրությունը պահպանելը մնում է ընդհանուր շահի խնդիր:

Մեթոդ

Սահմանադրական շաբաթվա մասին տեղեկատվությունը և առցանց գրանցման ձևը հրապարակվում են Ընկերակցության պաշտոնական կայքում և տարածվում են սոցիալական ցանցերով, հիմնականում Ֆեյսբուքով: Դպրոցները և այլ հաստատությունները կարող են գրանցվել առցանց ձևի օգնությամբ՝ նշելով իրենց գտնվելու վայրը, սահմանադրական դասին մասնակցելու ցանկություն ունեցող աշակերտների թիվը և դասերի նախընտրելի ժամերը: Իրավաբանները կարող են գրանցվել նույն եղանակով, սակայն նրանցի պահանջվում է նշել որտեղ, երբ և քանի դաս կարող են վարել: Ընկերակցությունը կապում է հաստատություններն իրավաբանի հետ, որ նրանք քննարկեն դասի կազմակերպման հարցերը:

Նախագծին մասնակցելու համաձայնություն տված իրավաբաններին տրամադրվում են գործերի ուսումնասիրություններ, որոնք պատրաստել են ոչ միայն Ընկերակցության անդամները, այլև Երիտասարդ լրագրողների միության անդամները՝ կազմակերպություն, որի նպատակն է մարդու իրավունքների պաշտպանության և առաջխաղացման գործում ներգրավել երիտասարդներին, ինչպես նաև Վարշավայի համալսարանի Սահմանադրական իրավունքի գիտական միության ուսանողները: Դասախոսներին ցուցում է տրվում խոսել պարզ լեզվով, որը հարմարեցված է աշակերտների տարիքին: Դասի ավարտին աշակերտների խնդրում են իրենց կարծիքները հայտնել դասախոսներին:

Նախագծի բովանդակային վերահսկողությունն իրականացնում են հատնի իրավագետները: Նախագծին մասնակցելու համաձայնություն տված բոլոր իրավաբանները դասեր են տալիս անվճար և չեն ստանում ճանապարհածախսի փոխհատուցում: Սահմանադրական շաբաթվա ընթացքում դասավանդմանը մասնակցում է իրավագետների լայն շրջանակ, այդ թվում՝ Փաստաբանների շրջանային պալատների նախագահները, Մարդու իրավունքների հարցերով հանձնակատարը և այլ հայտնի իրավաբաններ կամ գիտնականներ:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Սահմանադրական շաբաթը ցույց է տալիս, որ անձանց տեղեկացնելու և կրթելու, ինչպես նաև հասարակության մեջ նրանց պրոակտիվ լինելը քաջալերելու հանրային բանավեճի նպատակը հնարավոր է իրագործել համեմատաբար համեստ միջոցներով:

Ծրագիրը ցույց տվեց սոցիալական ցանցերի ուժը, որոնք համապատասխան օգտագործելու և ճիշտ խմբեր թիրախավորելու դեպքում հնարավոր է գրավել մեծ ուշադրություն: Սահմանադրական շաբաթվա հաջողության համար Ընկերակցությունը պարտական է այն փաստին, որ նածագծի շուրջ ստեղծել է շատ դրական մթնոլորտ, այդ թվում սոցիալական ցանցերի օգնությամբ:

Ծրագիրը կատարյալ չէ՝ ինչպես ցանկացած այլ ծրագիր: Թեև այն դուրս է եկել կրթական հաստատությունների շրջանակից, սակայն հիմնական մասնակիցները մնում են դպրոցները: Ավելին, դասերը վարում են իրավաբանները, իսկ դպրոցներից չի պահանջվում կարծիքներ ուղարկել Ընկերակցությանը, որը գնահատում է ծրագիրը:

Ազդեցություն

Չնայած հասարակության ունեցած քաղաքական կարծիքների տարբերություններին, Սահմանադրական շաբաթն ապացուցում է, որ ժողովրդավարական հասարակության մեջ հնարավոր է հաղորդկցվել ընդհանուր հիմնարար արժեքների շուրջ, հատկապես երբ այդ արժեքները քննարկվում են կոնկրետ, հստակ օրինակներով, որոնց հետ մարդիկ տեսնում են իրենց կապը:

Մարտահրավերներ

Մարտահրավերներից մեկը, որին առնչվում են ծրագրի կազմակերպիչները, քաղաքական պատմույթի տարանջատումն է իրավական խնդիրներից, ինչը կօգնի հերքել միջոցառման քաղաքական բնույթ ունենալու մասին մեղադրանքները:

Կայք՝ http://stowarzyszenieholda.pl/

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ՝ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻ ՄԱՍԻՆ ԲԱՆԱՎԵՃ (2017Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

Բժշկության և կենսաբանության գիտությունների էթիկայի հարցերի ազգային խորհուրդը (CNECV) ձեռնարկեց ազգային բանավեճ կյանքի վերջի խնդիրների շուրջ, որոնք, բացի էվթանազիայից, ընդգրկում էին կյանքի վերջի շրջանում խնամքին առնչվող մի շարք էթիկական հարցեր:

Նախաձեռնությունը մեկնարկեց 2017 թվականի մայիսին Լիսաբոնում, որին հաջորդեցին մի շարք հանրային բանավեճեր: Երկրի տարբեր վայրերում գտնվող 12 քաղաքներում տեղի ունեցան 14 բանավեճեր, որոնց մասնակցեցին հասարակության բազմաթիվ անդամներ:

Նպատակ

Բարձրացնել հանրային իրազեկումը և խրախուսել ազատ և տեղեկացված բանավեճի անցկացումը, որին մասնակցում են բոլոր քաղաքացիները, ինչը տալիս է ժողովրդավարական որոշումների կայացման գործընթացին պատասխանատու մասնակցության հնարավորություն:

Հարցը

Բանավեճի ընթացքում բարձրացվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝

- հարգանք անհատի ինքնավարության նկատմամբ,
- ինքնավարության սահմանափակումները, երբ ներկայացվում է էվթանազիայի կամ բժշկի օգնությամբ ինքնասպանության խնդրանք,
- ինչպես կազմակերպել խնամքը կյանքի վերջում և նման խնամքի առկայությունը և համարժեքությունը,
- էվթանազիան կամ բժշկի օգնությամբ ինքնասպանությունն օրինականացնելու օգտին կամ դեմ փաստարկները:

Մեթոդը

Բոլոր բանավեճերը բաց են քաղաքացիների համար:

Փորձագետներին հրավիրել էին ներկայացնել դիլեմաների վերաբերյալ կարծիքներ՝ ելնելով իրենց մասնագիտական դերերից (բժշկություն,

կրոն, փիլիսոփայություն, իրավունք), ինչպես նաև անձնական տեսակետերից (որպես երիտասարդներ, պացիենտների ներկայացուցիչներ, կարծիք ձևավորողներ):

Վերջին համաժողովին (միջազգային համաժողովին) երկու մոտեցումներ առաջարկվեցին քաղաքացիական հասարակության կարևոր դերի և քննարկման գործընթացի վերաբերյալ, իսկ տարբեր երկրների փորձագետներից պահանջվեց չներկայացնել սեփական տեսակետները, այլ տեղեկություններ տրամադրել իրենց երկրներում իրավական և փաստացի վիճակի մասին: «Հիմնական դերակատարները» քաղաքացիներն էին, ովքեր մասնակցեցին բոլոր համաժողովներին և ազատ կարող էին միջամտել, հարցեր տալ և կիսվել փորձով:

Հասարակությանը, բացի էվթանազիայի հարցից, հնարավորություն տրվեց քննարկել կյանքի վերջին առնչվող կարևոր խնդիրներ (պալիատիվ խնամք, գիտակցված համաձայնություն):

Ծրագիրն ավարտվեց 2017 թվականի դեկտեմբերին: 2018 թվականի սկզբին խորհրդարանը դեմ քվեարկեց օրենքը փոխելու առաջարկին:

Բանավեճերն ձայնագրվում էին և լայնորեն տարածվում մեդիայի միջոցով: Մեդիա գործընկերը կանոնավոր հիմքերով լուսաբանում էր բանավեճերը (հարցազրույցներ, լուսանկարներ, հայտարարություններ և հետբանավեճային լուսաբանում):

Հրատարակվեց «Deciding on the end of life – cycle of debates» գիրքը, որը կազմված էր համաժողովների քաղվածքներից և ընդգրկում էր հանրության կարծիքները (արտահայտված բոլոր կարծիքների ամփոփումով) և միջազգային սեմինարին ներկայացված փոստաթղթերը: Գրքում կար նաև տերմինաբանական բառարան, եզրակացություն՝ բանավեճում հնչեցրած հիմնական հարցերով և փաստարկներով, ինչպես նաև համեմատական օրենսդրության կարճ ուսումնասիրություն:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Կատարած աշխատանքը ողջունեցին հասարակության բոլոր հատվածները, որոնք գիտակցում էին բաց և բազմակարծիք բանավեճի միջոցով քաղաքացիներին՝ սեփական կարծիքներ ձևավորելու հարցում օգնելու կարևորությունը:

Հիմնական բոլոր դերակատարների մասնակցությունը քննարկումներին օգնեցին քաղաքացիներին հասկանալ նրանց կարծիքները, հույսերն ու վախերը:

Բանավեճերի կարևոր հատվածները, հիմնական եզրակացությունները, տերմինաբանական բառարան և համեմատական օրենսդրական դաշտի ամփոփումը պարունակող հրապարակման շնորհանդեսը, որին ներկա էր Հանրապետության Նախագահը տեղի ունեցավ 2019 թվականի փետրվարի 1-ին: Փաստաթղթերը պահպանում են իրենց արդիականությունն անկախ այն հանգամանքից, որ խորհրդարանը մերժեց առաջարկությունները: Դրանք ներկայացնում են բանավեճերի եզրակացությունները հետագա աշխատանքի համար:

Ազդեցություն

Մեդիա նորությունների և խմբագրական հոդվածների գնահատականներով, որոնք տեղ գտան ազգային և տարածաշրջանային հեռուստատեսային և տպագիր մամուլում բանավեճերն էական ազդեցություն ունեցան տեղական համայնքների վրա: Նրանք բարձր գնահատեցին հսկողության գործընթացի ձևաչափը և թեմայի ազատ և բաց քննարկումը, ինչը նախկինում երբեք տեղի չէր ունեցել:

Հետաքրքիր է, որ մի շարք հաստատություններ դիմեցին CNECV-ին հանրային քննարկումները եկարաձգելու խնդրանքով և առաջարկեցին միջոցառումներ կազմակերպել այն վայրերում, որոնք ընդգրկված չէին բանավեճերի սկզբնական ճանապարհային քարտեզում:

Պատրաստվեց բանավեճերն ամփոփոխ հատուկ հատոր, որը ներկայացնում էր քննարկման մասնակիցների (խոսնակների և ընդհանուր լսարանի) ամենակարևոր դիրքորոշումները և հիմնական կոնսենսուսային եզրակացությունները և հակասական ու հակառակ կարծիքներ առաջացնող հիմնական խնդիրները:

Այս հատորը վաճառվեց ամբողջ երկրում գրախանութների լայն ցանցի միջոցով և կարճ ժամանկում սպառվեց: Հանրապետության Նախագահը ներկա էր գրքի շնորհանդեսին և շեշտեց նախաձեռնության կարևորությունը, ինչն ավելի կարևորեց գրքի բովանդակությունը մեդիայի համար:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱՎԵՃԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՎՐԱ (2016Թ.)

Նախապատմություն

Ռուսաստանի Դաշնությունում ձևավորված է պետական մարմինների և հանրային քննարկումների մակարդկներում օրենքների նախագծերի շուրջ խորհրդակցություններ կազմակերպելու երկարամյա գործելակերպ: Հանրային քննարկումները տեղի են ունենում տարբեր վայրերում և դրանց մասնակցում են մասնագիտական խմբերի և հասարակական կազմակերպությունների շահագրգիռ ներկայացուցիչներ, այդ թվում՝ պացիենտներ:

Ռուսաստանի Դաշնության կառավարության «օրինաստեղծ գործունեությունը կատարելագործելու միջոցառումների մասին» որոշումը (2009 թ.) նախատեսում է, որ կառավարության մարմինների և Գործադիրի հավանությունը ստացած նախագիծը հանրային քննարկման նպատակով տեղադրվում է հատուկ կայքում: Քաղաքացիների մեկնաբանություններն ու առաջարկությունները տեղադրվում են նույն կայքում կամ ներկայացվում դրա միջոցով: Պատասխանները նույնպես տեղադրվում են նույն կայքում: Պատասխանները պատրաստում են Առողջապահության նախարարության բուժսպասարկման և իրավաբանական վարչությունների աշխատակիցները՝ ներգրավելով փորձագետների խմբեր:

Ի հավելումն, օրենքների նախագծերի հանրային քննարմներ են կազմակերպվում զանազան թիրախային լսարանների հետ. մասնագիտական համայնք, այդ թվում՝ գիտնականներ, տարբեր հավատքների, պացիենտների կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության բազմազանությունը ներկայացնող հանրային պալատի ներկայացուցիչներ:

Նախագծերը լրամշակվում են հավաքված կարծիքների հիման վրա: Եթե համարվում է, որ օրենքի նախագծի ընդունումը խախտում կամ սահմանափակում է մարդու իրավունքները՝ նման նախագծերը կարող են ուղարկվել հանրային մեկնաբանման:

Հարցը

«Մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման մասին» Ռուսաստանի Դաշնության 1992 թվականի օրենքը թույլ է տալիս չափահաս մարդու մահից հետո վերցնել նրա օրգանները, եթե չկա գրավոր արձանագրություն, որ դա հակասում անձի կամքին: Այլ խոսքով, գործում է համաձայնության կանխավարկածի համակարգ: Օրենսդրության ուշադրությունն օրգանների փոխպատվաստման վրա է, սակայն այն լուրջ բացեր ունի օրգանների նվիրաբերմանն առնչվող մարդու իրավունքների հարցերում:

Քննարկվել է արդյո՞ք ազգականները պետք է մասնակցեն մահացած մարդու օրգանները նվիրաբերելու մասին որոշում կայացնելուն կամ նրանք իրավունք ունե՞ն մերժել օրգան նվիրաբերելը, եթե մահացողը գրավոր չի հայտնել իր ցանկությունը:

Մեկ այլ քննարկում առնչվել է երեխաների օրգանների նվիրաբերմանը: 1992 թվականի օրենքն արգելում է կենդանի նվիրաբերումներ վերցնել մինչև 18 տարեկաններ անչափահասներից, իսկ մահացած երեխայից օրգան վերցնելու համար պահանջում է ծնողներից մեկի գիտակցված համաձայնությունը (բացահայտ համաձայնություն, «մերժման կանխավակած»):

2016 թվականին առաջարկված նոր օրենսդրությունը նպատակ ուներ բարելավել օրգանների նվիրաբերման ոլորտի կարգավորումները՝ լրացնելով օրգանների դոնորների իրավունքներին առնչվող իրավական բացերը, հավասարակշռել դոնորների, նրանց ազգականների և բժշկական կազմակերպությունների մասնագետների իրավունքները, բարելավել նվիրաբերման իրավական և էթիկական խնդիրները:

Մեկ այլ խնդիր էր տեղեկացնել բնակչությանն օրգանների նվիրաբերման կարևորության և գործող օրենսդրության մասին, ներառելով դրա զարգացումներն ու բարելավումները:

Մեթոդ

Օրենքի պահանջի համաձայն առաջարկվող փոփոխությունները հանրային քննարկման և բանավեճի առարկան դրաձան դրվեցին 2009 թվականից:

Քննարկումները տեղի ունեցան տարբեր ձևաչափերով: Առցանց բանավեճին հիմնականում ներկա էին 40 տարեկանից բարձր հասարակ

քաղաքացիներ, ովքեր քննարկեցին առաջարկվող նախագիծը և արտահայտեցին իրենց կարծիքներն օրգանների նվիրաբերման մասին: Նրանց վերաբերմունքն օրգանների նվիրաբերմանը հիմնականում բացասական էր կամ չեզոք:

Երիտասարդ սերնդի ներկայացուցիչների միջև օրգանների նվիրաբերման մասին քննարկումը տեղի ունեցավ սոցիալական ցանցերում:

Մասնագիտական համայնքում տեղի ունեցավ օրենքի նախագծի մանրամասն քննարկում՝ փորձագետների հետ հանդիպումների ընթացքում: Կառավարությանը ներկայացնելու նպատակով օրենքի նախագիծ պատրաստելու կանոններին համապատասխան կատարվեց փորձագիտական կարծիքների վերլուծություն: Վերլուծություններին արձագանքեց օրենքի նախագիծը պատրաստած նախարարությունը:

Արդյունքը

Բանավեճերի արդյունքները հնարավորություն տվեցին նախարարությանը լրամշակել օրենքի նախագծի դրույթները և բարելավել քաղաքացիներին օրգանների նվիրաբերման մասին իրազեկելու ծրագրերը:

Օրենքի բաժինը, որը թույլ է տալիս նվիրաբերում մահացած երեխաներից անդադար քննադատվում է: Բանավեճը ցույց տվեց, որ ռուսական հասարակությունը պատրաստ չէ մահացած երեխաների օրգանների նվիարբերմանը, թեև այս հրացն արդեն իսկ կարգավորվում է օրենքով և այս դրույթի իրականացման համար չկան խոչընդոտներ:

Օրենքում առաջարկվող փոփոխությունները ենթարկվեցին լուրջ քննադատության և նոր օրենքը նախագիծը հետ կանչվեց մինչև խորհրդարան (Դումա) հասնելը:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Օրգանների նվիրաբերումը չափազանց նուրբ հարց է ռուսական հասարակության համար, քանի որ մեծ շեշտ է դրվում մահացած անձի մարմնի անձեռնմխելիության վրա: Բազմաթիվ հարցերի շուրջ փորձագետները հասան կոնսենսուսի, սակայն դեռևս դժվարություններ կան դոնորների ազգականների իրավունքները կակրգավորելու հարցում:

Ամենակարևոր քաղած դասերից այն էր, որ բանավեճն արդյունավետ է միայն այն դեպքում, եթե մարդիկ լիարժեք հասկանում են թեման, հատկապես եթե այն առաջացնում է մարդու իրավունքների հետ կապված հարցեր: Բանավեճին պետք է նախորդի լայնածավալ տեղեկատվական

քարոզարշավ, որի ընթացքում պետք է մանրամասն բացատրություններ տրվեն գործող և նոր օերնսդրության մեջ քննարկված բոլոր դրույթները:

Նոր օրենքի նախագծի քննարկումները շարունակվում են, իսկ ամենադժվար խնդիրն օրգանների նվիրաբերման մասին հանրային քննարկումներում ակտիվորեն ներգրավված 50-60 տարեկանից բարձր քաղաքացիների բացասական վերաբերմունքը հաղթահարելն է:

Հանրային բանավեճը պետք է հարմարեցված լինի մշակութային կոնտեքստին: Հավանաբար խնդիրն ունի իր պատմական և մշակութային արմատները, քանի որ Ռուսաստանի Դաշնությունը բազմազգ և բազմահարանվանական երկիր է, որտեղ միշտ էլ կարևոր է եղել պահպանել մահացած անձի մարմնի անձեռնմխելիությունը մինչև հողարկավորումը:

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՂԵՂԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2007Թ.)

Նախապատմություն, նախաձեռնող և մասնակիցներ

2006 թվականին Բժշկական գիտությունների ակադեմիան (ԲԳԱ) նախաձեռնեց 2005 թվականին հրապարակած «*DrugsFutures 2025?*» զեկույցի մեջ նույնականացված հասարակական, առողջապահական, անվտանգային և միջավայրային խնդիրների անկախ հետազոտություն:

«*DrugsFutures*»-ի հանրային քննարկումներ տեղի են ունեցել 2007 թվականի հունվար-ապրիլ ամիսներին և իրականացվել են հատուկ խմբերում, որոնք ընդգրկում էին ՈՒՊՀՀ ունեցող երեխաների ծնողների, աշակերտների, ուսուցիչների, թմրամիջոցներ օգտագործողների և նախկին օգտագործողների, տարեցների, երիտասարդների և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց:

Նպատակը

Բացահայտել հանրության լայն շերտերի հույսերն ու մտահոգությունները, որոնք կապված են ուղեղի մասին գիտություններին, կախվածությանը և թմրամիջոցներին առնչվող ընթացիկ և ապագա խնդիրներին:

Հարցը

Նախատեսվում էր, որ հանրային մասնակցության ծրագիրը կկենտրոնանա այն ոլորտների վրա, որտեղ հատվում են կախվածությունը, կոգնիտիվ հոգեբանությունը և թմրամիջոցները, ընդգրկելով Foresight-ի սկզբնական զեկույցում հիշատակված երեք տեսակի թմրամիջոցները՝ ապօրինի և օրինական ռեկրեացիոն թմրամիջոցներ, հոգեկան առողջության համար դեղամիջոցներ և նոր դասակարգի միջոցներ, որոնք անվանել են «ճանաչողության ուժեղացուցիչներ» և որոնք կարող են որոշակի ձևերով, օրինակ՝ կարճաժամկետ հիշողության կամ արագ մտածողության տեսանկյունից, խթանել ուղեղի աշխատանքը:

Հետևյալ սցենարներից ելնելով բարձրացվեցին կոնկրետ հարցեր. թմրամիջոցներ և երիտասարդներ, թմրամիջոցներ ավելի խելացի ուղեղի համար, և թմրամիջոցներ և օրենքը:

Մեթոդը

ԲԳԱ ստեղծեց աշխատանքային խումբ, որի նպատակն էր աջակցել ուղեղի մասին գիտության, կախվածության և թմրամիջոցների (ՈւԳԿԹ) ոլորտում գիտական զարգացումների բարձացրած հասարակական, առողջապահական, անվտանգային և միջավայրային խնդիրների անկախ հետազոտությանը: Նախատեսվում էր, որ աշխատանքային խմբի կազմը պետք է արտացոլի ուսումնասիրելիք հարցերի բազմազանությունը՝ ընդգրկելով համաճարակաբանության, բժշկության, նյարդաբանության, հոգեբուժության, հոգեբանության, դեղագիտության, փիլիսոփայության և իրավունքի փորձագետներ:

Ընթացիկ և ապագա գիտական զարգացումների արդյունքում առաջացող հնարավոր հարցերի շուրջ աշխատանքային խումբը խորհրդակցեց համապատասխան շահակիր կազմակերպությունների հետ (օրինակ՝ գիտնականներ, հետազոտություններ ֆինանսավորողներ, բուժաշխատողներ, բարեգործական հիմնարկներ և պացիենտների խմբեր):

Տեղի ունեցան տարատեսակ միջոցառումներ. հանրային շնորհանդես Լոնդոնում (113 մասնակից), 19 կարճ (2 ժամ) արտագնա աշխատաժողովներ (146 մասնակից) ՄԹ ամբողջ տարածքում, տարածաշրջանային 5 աշխատաժողովներ ՄԹ ամբողջ տարածքում (180 մասնակից)՝ յուրաքանչյուրը նվիրված առանձին թեմայի (օրինակ՝ օրենք, հոգեկան առողջություն) և Մտքերի տուփ - երկու 2-օրյա նիստեր, վեց շաբաթվա տարբերությամբ, որոնց նպատակն էր ավելի խորացված քննարկել տարածաշրջանային աշխատաժողովների բոլոր 5 թեմաները (25 մասնակից): Արտագնա միջոցառումներին, որոնց մի մասի ընթացքում ելույթ ունեցան թմրամիջոցներ օգտագործողներն ու նախկին օգտագործողները, միաժամանակ տեղի ունեցան շահակիրների խորհրդակցություն և փորձագիտների վերլուծություն:

Կարևոր առանձնահատկություններ և քաղած դասեր

Ծրագիրը մանրակրկիտ գնահատվեց: Հանրային մասնակիցների համար կարևոր որոշ առանձնահատկություններ նշված են ստորև (լրացուցիչ տեղեկությունների համար տես ծրագրի ամբողջական գնահատումը)՝

- գործընթացը սահուն աշխատեց հանրային մասնակիցների համար: Ընդհանուր առմամբ, ռեսպոնդենտները խիստ բավարարված էին գործընթացով և իրականացման ձևով: Գործընթացը արդյունավետ ներգրավեց մարդկանց,

- մասնակիցների զգացողությամբ գործընթացը շատ հաճելի էր, ինֆորմատիվ և արժեքավոր: Քննարկումների որակը, մասնակիցների հետաքրքրությունը և ոգևորությունը բարձր էին,

- մասնակիցները նոր բաներ սովորեցին: Շատերը նշեցին, որ մասնակցությունը հստակեցրեց իրենց մտածողությունը և ազդեց թմրամիջոցների և հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ իրենց տեսակետերի վրա,

- ավելացավ ոգևորությունն ապագա մասնակցության հարցում: Գործընթացին մասնակցելու արդյունքում գրեթե բոլոր ռեսպոնդետներն ավելի պատրաստակամ էին ապագայում ներգրավվել քաղաքական խնդիրների քննարկումներում: Գրեթե բոլոր ռեսպոնդենտները կարևոր համարեցին հանրության ներգրավումը նմանատիպ հարցերի քննարկմանը՝ շատերը ցանկություն արտահայտեցին ապագայում ավելի շատ նմանատիպ միջոցառումներ տեսնել,

- բազմաթիվ մասնակիցներ արժեքավոր համարեցին արտահայտվելու և ԲԳԱ-ի կողմից լսված լինելու հնարավորությունը, ինչպես նաև զգացին, որ կարող են ներդրում ունենալ հանրային քաղաքականության մեջ և ազդել ապագա որոշումների վրա:

Ազդեցություն

- ԲԳԱ-ը նկատի առավ հանրային գերակայություններից մեկը՝ կախվածությունը որպես հիվանդություն հետազոտելու անհրաժեշտությունը, և այդ հետազոտությունն իրականացնելու համար Բժշկական հետազոտությունների խորհուրդը տրամադրեց 8 միլիոն փաունտ նոր ֆինանսավորում,

- 2009 թվականի հուլիսին Թմրամիջոցների չարաշահման հարցերով խորհրդատվական խորհուրդը (Ներքին գործերի նախարարություն) նախաձեռնեց ճանաչողության ուժեղացուցիչների անվտանգության և կանոնակարգման մանրամասն հետազոտություն, որը հետազոտության գերակայություն բարձրացրեցին ծրագրի հանրային մասնակիցները,

- երկխոսությունը բարձրացրեց թմրամիջոցների օգտագործմանն առնչվող իրավական որոշ միջամտությունների ոչ արդյունավետ լինելու վերաբերյալ առկա գիտելիքների մակարդակը,

- երկխոսությունն ուղղակիորեն ազդեց Ուղեղի մասին գիտու-

թյունների, կախվածության և թմրամիջոցների մասին ԲԳԱ-ի՝ կառավարությանը ներկայացվելիք ամփոփիչ զեկույցի վրա և բարելավեց այն: Հանրային մասնակիցները կարողացան հետևել իրենց ներդրումներին ամփոփոիչ զեկույցում:

ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես մասնագիտական պրակտիկայի ոլորտ, հանրային բանավեճը ձևավորեց նոր հասկացություններ և տերմինաբանություն, որոնցից շատերը քննադատության առարկա են կամ արտացոլում են տարբեր նախապատվություններ և հանձնառություններ: Հաջորդող բառարանը նախատեսված չէ եզրույթների նշանակության սպառիչ սահմանում տալու համար, այլ փորձ է պարզապես հստակեցնել որքանով են հստակ սույն ուղեցույցում օգտագործված՝ հնարավոր շփոթություն առաջացնող եզրույթները:

Քաղաքացի – պետության օրենքներին և քաղաքականություններին ենթակա ֆիզիկական անձ, ով վայելում է պետության կողմից օրենքներով պաշտպանված իրավունքներից: Բաղադրյալ եզրույթներում, օրինակ «քաղաքացիների ասամբլեա»-ում «քաղաքացի»-ի նշանակությունն ավելի լայն է, քան տվյալ պետության քաղաքացիություն կամ այդ պետությունում քվեարկելու իրավունք ունեցող:

Համահեղինակում – մասնակիցների կողմից գործընթացի նախագծում և ձևավորում՝ կամ օժանդակությամբ իրենց միջև կամ բանակցելով հանրային բանավեճի նախաձեռնողի հետ:

Խորհրդակցություն – որակական տեղեկատվության հավաքում, որի նպատակն է փոփոխել կամ հաստատել նախաձեռնողի պատասխանատվության բնագավառում գտնվող առաջարկվող միջոց: Սովորաբար, նպատակն է տեսանկյունների լայն շրջանակից ստանալ գաղափարներ: Խորհրդակցությունը կարող է լինել հանրության համար բաց (հատկապես հանրային քաղաքականության հարցերի շուրջ, որոնք կարող են անուղղակիորեն ազդել բոլորի վրա) կամ թիրախել հատուկ շահեր, գիտելիք կամ փորձագիտություն ունեցող խմբերի կամ անհատների: Ռեսպոնդենտներն ինքնաառաջադրվող են:

Բանավեճ – ցանկացած դիսկուրս, ուր մի շարք անհատներ կամ խմբեր՝ ապացույցների, փաստարկների և արժեքների ներկայացման միջոցով փոխգործակցում են իրենց տարբեր տեսակետերն ու շահերը նույնականացնելու, բացահայտելու և պարզելու նպատակով: Այս փաստաթղթում «բանավեճի» ավելի ընդհանրական հասկացությունը պետք է տարբերել երկու հակառակ կողմերի միջև ֆորմալ բանավեճից, որը տեղի է ունենում նրանցից մեկի առաջարկած թեմայի շուրջ: (տես նաև՝ «հանրային բանավեճ»)

Խորհրդակցական մեթոդներ – մշտական խորհրդակցական հանդիպումներ, ուր մասնակիցներն անդրադառնում են ընդհանուր շահ ներկայացնող խնդրի՝ փոխանակելով տեղեկություններ, քննելով ապացույցներ և վարելով փոխադարձ հարգանքի վրա հիմնված երկխոսություն:

Երկխոսություն – «հանրային երկխոսությունը» մասնագետների, քաղաքականություն մշակողների և ոչ մասնագետների միջև խորհրդակցական քննարկում է, որին ներկա են գտնվում և միմյանց պատասխանում են մասնակիցներ և որը տեղի է ունենում գիտելիքի և իշխանության ասիմետրիան չեզոքացնելու համար սահմանված պայմաններով:

Կառավարում – այս ուղեցույցում «կառավարում» նշանակում է իշխանության կամ լիազորության պատասխանատու օգտագործում՝ համակարգում կամ կազմակերպության ներսում չափանիշներ և վարքի կանոններ սահմանելու, դրանք մշտադիտարկելու և հարկադրելու նպատակով: Դա կարող է նշանակել թե՛ մարդկանց վարքի կառավարում, թե՛ նրանց պատասխանատվության փոխանցում: Կառավարումը հնարավոր է իրականացնել հարկադիր և ոչ հարկադիր միջոցներով (նորմատիվային դրույթներ, լիցենզավորման համակարգեր, մասնագիտական նորմեր, վարքականոններ, հանձնարարականներ և այլն): Կառավարումը կարող է լինել թե՛ պետական, թե՛ մասնավոր դերակատարների գործառույթ:

Նախաձեռնող – անձ, ով ստանձնում է հանրային բանավեճի միջոցռման նախաձեռնություն (տես՝ «հրավիրված/չհրավիրված բանավեճ»):Նախաձեռնողը, սովորաբար, տրամադրում կամ համակարգում է միջոցառման ռեսուրսները և կարող է հանձնարարել մասնագետներին իրենց անունից վարել կամ իրականացնել միջոցառումը:

Հրավիրված/չհրավիրված հանրային բանավեճ – հրավիրված հանրային բանավեճի դեպքում պատասխանատու մարմինը հրավիրում է հանրության անդամներին մասնակցել միջոցառմանը՝ իրենց կողմից սահմանված նպատակով: Չհրավիրված հանրային բանավեճի դեպքում հանրության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամներն առաջարկություններ են ներկայացնում լիազոր մարմնին՝ փոփոխությունների հասնելու նպատակով:

Մասնակից – պետական իշխանությունները, փորձագետները և քաղաքացիները՝ բոլորն էլ կարող են համարվել հանրային մասնակցային միջոցառման կամ բանավեճի մասնակիցներ:

Հանրություն/ հանրային խմբեր – բազմաթիվ սոցիոլոգներ և հանրային մասնակցության պրակտիկ մասնագետներ եզակի «հանրությանը» նա-

խընտրում են հոգնակի «հանրությունները», որ խուսափեն այն ենթադրությունից, թե գոյություն ունի մեկ միատարր խումբ կամ որ «հանրությունը» օբյեկտիվ գոյություն ունի խնդրո առարկա հարցերից անկախ:

Հանրային բանավեճ – այս փաստաթղթում և Օվիեդոյի կոնվենցիայի 28-րդ հոդվածում «հանրային բանավեճի» համապարփակ գաղափարն օգտագործված է հանրային տիրույթում (այսինքն՝ ոչ մասնագիտական կոնտեքստում) խորհրդակցական այն շփումները նկարագրելու համար, որոնց միջոցով անհատները և խմբերը կարող են նույնականացնել, բացահայտել և պարզել իրենց տարբեր շահերն այն խնդիրների դեպքում, որոնք ազդում են (կարող են ազդել) նրանց բոլորի վրա:

Հանրային բանավեճի միջոցառում – կազմակերպված միջոցառում, որն ունի սահմանափակ շրջանակ, նպատակ ունի հանրային բանավեճ խթանել որոշակի թեմայի շուրջ՝ ակնկալելով, որ դա տեղեկություններ կհաղորդի կամ ազդեցություն կունենա քաղաքականության մշակման կամ կառավարման վրա:

Հանրային տիրույթ – հանրային բանավեճի տարածք, հաղորդակցության ենթադրական միջավայր, որտեղ առանձին անհատներ կարող են ձևակերպել և քննարկել իրենց բոլորի վրա ազդեցություն ունեցող հասարակական մարտահրավերները և ազդել քաղաքականության վրա: Գործնականում դրան կարող են աջակցել հաստատությունները, օրինակ՝ սոցիալական կամ քաղաքական, և մեդիան:

Որակական/քանակական մեթոդներ – քանակական մեթոդները հավաքում են տեղեկություններ, որոնց արդյունքը թվաբանական թվեր են (օրինակ՝ հարցին կոնկրետ պատասխան տված անձնանց թիվը կամ համամասնությունը): Որակական մեթոդներն ապահովում են դիսկուրսային տեղեկություններ և, սովորաբար, հնարավորություն տալիս քննական մոտեցման և խորհրդածության միջոցով խորությամբ բացահայտել շահի երևույթները:

Ներկայացուցչականություն – հրավիրված միջոցառում կարելի կազմակերպել այնպես, որ ապահովվի ընդհանուր բնակչության կամ բնակչության որոշակի խմբի ներկայացվածությունը որոշակի, օրինակ՝ սոցիալ-ժողովրդագրական չափարոշիչներից ելնելով: Ընտրանքի պատշաճ չափը, ներկայացուցչականության չափորոշիչները և ձեռք բերված «ներկայացուցչական» տվյալներին վերագրելիք հնարավոր նշանակությունը՝ բոլորն էլ պահանջում են մանրակրկիտ քննական վերլուծություն:

ԸՆՏՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Delib – շահույթ հետապնդող սոցիալական ձեռնարկություն, որը տրամադրում է քաղաքացիների մասնակցության գործիքների լայն շրջանակ (անգլերեն, https://www.delib.net/)

Dicopart (Dictionnaire Critique et Interdisciplinaire de la Participation) – մասնակցության եզրույթների և հասկացությունների բառարան (ֆրանսերեն, https://www.dicopart.fr/)

Les États généraux de la bioéthique (**«Բիոէթիկայի ֆորում»**) քաղաքացիների հետ խորհրդակցության ձև է (լսումներ, տարածաշրջաններում, Ինտերնետային խորհրդակցություն, քաղաքացիների կոմիտե), որը նախատեսված է օրենքով և նպատակ ունի հավաքել քաղաքացիների կարծիքը նախքան կենսաէթիկայի մասին Ֆրանսիայի գործող օրենքը վերլուծելը և դրանում հնարավոր փոփոխություններ կատարելը (ֆրանսերեն, https://etatsgenerauxdelabioethique.fr/)

Fonden Teknologirådet (Տեխնոլոգիաների հիմնադրամի խորհուրդ) – դանիական կազմակերպություն, որն աջակցում է տեխնոլոգիաների գնահատմանը և կանխատեսմանը, հանրային մասնակցությանը, Պատասխանատու հետազոտությանը և նորարարությանը (RRI) և կառավարման նոր ձևերին (դաներեն և անգլերեն, http://www.tekno.dk/?lang=en)

ՅՈՒՆԵՍԿՈ-ի թիվ 5 ուղեցույցը – Կենսաէթիկայի ազգային կոմիտեների և հանրային մասնակցության մասին (https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000371176)

Involve – գիտության և առողջապահության ոլորտներում ժողովրդավարական մասնակցության հարցերով խորհրդատվություն և աջակցություն տրամադրող ՄԹ կազմակերպություն (անգլերեն, https://www.involve.org.uk/; Involve-ն ունի հանրային բանավեճի մոտեցումների 50-ից ավելի ամփոփ նկարագրություն հետևյալ կայքում՝ https://www.involve.org.uk/resources/methods)

Sciencewise – Sciencewise ծրագիրը ՄԹ կառավարության օրինակելի նմուշ է, թե ինչպես պետք է հավաքել հանրային կարծիքների համոզիչ ապացույցներ գիտական և տեխնոլոգիական նորարարության ոլորտներում քաղաքականության մշակման գործընթացին տեղեկություններ հաղորդելու համար: 2004 թվականին ստեղծված ծրագիրն աջակցել է 50-ից ավելի երկխոսության ծրագրերի: (անգլերեն, http://sciencewise.org.uk/)

Սույն ուղեցույցի նպատակն է նպաստել Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածում ամրագրված սկզբունքի իրականացմանը, ըստ որի «կենսաբանության և բժշկության նվաճումների հետ կապված հիմնարար հարցերը հանրային լայն քննարկման առարկա են, որը, մասնավորապես, հաշվի է առնում համապատասխան բժշկական, սոցիալական, տնտեսական, էթիկական և իրավական հետևանքները, իսկ դրանց հնարավոր կիրառումը պատշաճ խորհրդակցության առարկա է դառնում»:

Հիմնականում ուղղված լինելով պետական պաշտոնյաներին, պետական մարմիններին, էթիկայի ազգային հանձնաժողովներին և այլ համապատասխան հաստատություններին ու կազմակերպություններին՝ ուղեցույցը խթանում է հասարակության հետ երկխոսությունը կենսաբժշկական զարգացումներից բխող մարտահրավերների շուրջ՝ ներառելով նաև այն մտահոգությունները, որոնք առաջանում են կապված բարեվարքության, արժանապատվության, ինքնավարության, գաղտնիության, արդարության, հավասարության և մարդկանց նկատմամբ խտրականության բացառման հետ: Այն կենտրոնանում է հանրային բանավեճի անհրաժեշտության, դրան նախապատրաստվելու և այն արդյունավետ և իմաստալից դարձնելու ուղիների վրա: Ուղեցույցը անդրադառնում է անդամ երկրներում կիրառվող լավագույն փորձին և փորձառությանը, որոնք ցույց են տալիս հանրային բանավեճը գործողության մեջ:

PREMS 153621

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումը անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE